

Վ. Տ. Հայրապետյան, Հ. Ջ. Մինասյան,
Ա. Վ. Չալյան, Տ. Ա. Միրախչյան, Մ. Վ. Ավետիսյան

«ԿԱՉԱՂԱԿԱԲԵՐԴ»
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ



<u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>6</u>
<u>ՅԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....</u>	<u>7</u>
<u>«ԿԱԶԱՂԱԿԱԲԵՐԴ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ.....</u>	<u>10</u>
<u>ՖԱՈՒՆԱԳԵՆԵԶ ԵՎ ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....</u>	<u>11</u>
<u>ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ.....</u>	<u>15</u>
<u>Մոխրագույն տառեղ <i>Ardea cinerea</i>.....</u>	<u>20</u>
<u>Սպիտակ մեծ տառեղ <i>Ardea alba</i>.....</u>	<u>21</u>
<u>Տափաստանային ճուռակ <i>Butte rufinus</i>.....</u>	<u>22</u>
<u>Փոքր ենթարծիվ <i>Aquila pomarina</i>.....</u>	<u>23</u>
<u>Մեծ ենթարծիվ <i>Aquila clanga</i>.....</u>	<u>24</u>
<u>Քարարծիվ <i>Aquila chrysaetos</i>.....</u>	<u>24</u>
<u>Սպիտակապոչ արծիվ <i>Haliaeetus albicilla</i>.....</u>	<u>25</u>
<u>Օձակեր արծիվ <i>Circaetus gallicus</i>.....</u>	<u>26</u>
<u>Գերեզմանարծիվ <i>Aquila heliaca</i>.....</u>	<u>26</u>
<u>Գաճաճ արծիվ <i>Hieraaetus pennatus</i>.....</u>	<u>27</u>
<u>Գիշանգ <i>Neophora percnoptera</i>.....</u>	<u>28</u>
<u>Գառնանգ <i>Gypaetus barbatus</i>.....</u>	<u>29</u>
<u>Սև անգ <i>Aegyptus monachus</i>.....</u>	<u>29</u>
<u>Սպիտակագլուխ անգ <i>Gyps fulvus</i>.....</u>	<u>30</u>
<u>Մարգագետնային մկնաճուռակ <i>Circus pygargus</i>.....</u>	<u>30</u>
<u>Դաշտային մկնաճուռակ <i>Circus cyaneus</i>.....</u>	<u>31</u>
<u>Սովորական հողմավար բազե <i>Falco tinnunculus</i>.....</u>	<u>32</u>
<u>Լորաճուռակ <i>Accipiter nisus</i>.....</u>	<u>33</u>
<u>Եվրոպական ճնճաճուռակ <i>Accipiter brevipes</i>.....</u>	<u>33</u>
<u>Ցախարյորարու <i>Accipiter gentilis</i>.....</u>	<u>34</u>
<u>Աղավնաբազե <i>Falco columbarius</i>.....</u>	<u>35</u>
<u>Արտույտաբազե <i>Falco subbuteo</i>.....</u>	<u>35</u>
<u>Սապան <i>Falco peregrinus</i>.....</u>	<u>36</u>
<u>Տափաստանային մկնաճուռակ <i>Circus macrourus</i>.....</u>	<u>37</u>
<u>Բայրան <i>Falco cherrug</i>.....</u>	<u>37</u>
<u>Թխակապույտ աղավնի <i>Columba livia</i>.....</u>	<u>38</u>
<u>Անտառային աղավնի <i>Columba palumbus</i>.....</u>	<u>38</u>
<u>Յոթալ <i>Columba oenas</i>.....</u>	<u>39</u>
<u>Սովորական տատրակ <i>Streptopelia turtur</i>.....</u>	<u>40</u>
<u>Փոքր տատրակ <i>Streptopelia senegalensis</i>.....</u>	<u>41</u>
<u>Օղակավոր տատրակ <i>Streptopelia decaocto</i>.....</u>	<u>41</u>
<u>Քարակաքավ <i>Alectoris chukar</i>.....</u>	<u>42</u>
<u>Մոխրագույն կաքավ <i>Perdix perdix</i>.....</u>	<u>43</u>
<u>Կովկասյան մայրեհավ <i>Lyrurus mlokosiewiczii</i>.....</u>	<u>44</u>
<u>Անդրկովկասյան (սովորական) փասիան <i>Phasianus colchicus</i>.....</u>	<u>44</u>
<u>Վայրի հնդկահավ (ուլար) <i>Tetraogallus caspius</i>.....</u>	<u>45</u>

Ներկարար <i>Coracias garrulous</i>	46
Կանաչ մեղվակեր <i>Merops persicus</i>	47
Ոսկեգուն մեղվակեր <i>Merops apiaster</i>	47
Յոպոպ <i>Upupa epops</i>	48
Վարսակտցար <i>Lymnocyptes minimus</i>	49
Մորակտցար <i>Gallinago gallinago</i>	49
Կրկնակտցար <i>Gallinago media</i>	50
Անտառակտցար <i>Scolopax rusticola</i>	51
Փուփուլավոր կկու <i>Clamator glandarius</i>	51
Սովորական կկու <i>Cuculus canorus</i>	52
Եվրոպական բլիկ <i>Otus scops</i>	53
Տնային բլիկ <i>Athene noctua</i>	53
Թավշատու բու <i>Aegolius funereus</i>	54
Ալանջավոր բու <i>Asio otus</i>	55
Ծահճային բու <i>Asio flammeus</i>	55
Անտառաբու <i>Strix aluco</i>	56
Բվեճ <i>Bubo bubo</i>	57
Սև մանգաղաթև <i>Apus apus</i>	58
Սև փայտփոր <i>Dryocopus martius</i>	58
Փոքր խայտաբղետ փայտփոր <i>Dendrocopos minor</i>	59
Սիրիական փայտփոր <i>Dendrocopos syriacus</i>	59
Միջին փայտփոր <i>Dendrocopos medius</i>	60
Խայտաբղետ փայտփոր <i>Dendrocopos major</i>	61
Սպիտակամեջք փայտփոր <i>Dendrocopos leucotos</i>	61
Կանաչ փայտփոր <i>Picus viridis</i>	62
Սրնգահավ <i>Bombycilla garrulus</i>	63
Առափնյա ծիծեռնակ <i>Riparia riparia</i>	63
Գլուղական ծիծեռնակ <i>Hirundo rustica</i>	64
Մոխրագուն արտուլտ <i>Calandrella rufescens</i>	65
Անտառային արտուլտ <i>Lullula arborea</i>	65
Եղջերավոր արտուլտ <i>Eremophila alpestris</i>	66
Դաշտային արտուլտ <i>Alauda arvensis</i>	67
Դեղին խաղտոնիկ <i>Motacilla flava</i>	67
Սպիտակ խաղտոնիկ <i>Motacilla alba</i>	68
Լեռնային խաղտոնիկ <i>Motacilla cinerea</i>	69
Դաշտային ձիաթռչնակ <i>Anthus campestris</i>	69
Անտառային ձիաթռչնակ <i>Anthus trivialis</i>	70
Մարգագետնային ձիաթռչնակ <i>Anthus pratensis</i>	70
Լեռնային ձիաթռչնակ <i>Anthus spinoletta</i>	71
Կարմրախածի ձիաթռչնակ <i>Anthus cervinus</i>	72
Մարգագետնային չբչբան <i>Saxicola rubetra</i>	72
Սևագլուխ չբչբան <i>Saxicola torquata</i>	73

<u>Ժուլան <i>Lanius cristatus</i>.....</u>	<u>74</u>
<u>Սևաճակատ շամփրուկ <i>Lanius minor</i>.....</u>	<u>74</u>
<u>Սոխրագույն շամփրուկ <i>Lanius excubitor</i>.....</u>	<u>75</u>
<u>Պիրոլ <i>Oriolus oriolus</i>.....</u>	<u>76</u>
<u>Եղնջաթռչնակ <i>Troglodytes troglodytes</i>.....</u>	<u>77</u>
<u>Անտառային նրբագեղիկ <i>Prunella modularis</i>.....</u>	<u>77</u>
<u>Խայտաբղետ նրբագեղիկ <i>Prunella ocularis</i>.....</u>	<u>78</u>
<u>Ալպիական նրբագեղիկ <i>Prunella collaris</i>.....</u>	<u>78</u>
<u>Ջրաճնճող <i>Cinclus cinclus</i>.....</u>	<u>79</u>
<u>Հարավային սոխակ <i>Luscinia megarhynchos</i>.....</u>	<u>80</u>
<u>Սովորական սոխակ <i>Luscinia luscinia</i>.....</u>	<u>80</u>
<u>Արշարույսիկ <i>Erithacus rubecula</i>.....</u>	<u>81</u>
<u>Կապտափող սոխակ <i>Luscinia svecica</i>.....</u>	<u>82</u>
<u>Սևուկ կարմրատուտ <i>Phoenicurus ochruros</i>.....</u>	<u>83</u>
<u>Սովորական կարմրատուտ <i>Phoenicurus phoenicurus</i>.....</u>	<u>83</u>
<u>Կարմրափորիկ կարմրատուտ <i>Phoenicurus erythrogaster</i>.....</u>	<u>84</u>
<u>Սև կեռնեխ <i>Turdus merula</i>.....</u>	<u>85</u>
<u>Սևախածի կեռնեխ <i>Turdus atrogularis</i>.....</u>	<u>85</u>
<u>Սունձակեռնեխ <i>Turdus viscivorus</i>.....</u>	<u>86</u>
<u>Երգող կեռնեխ <i>Turdus philomelos</i>.....</u>	<u>87</u>
<u>Սինկեռնեխ <i>Turdus pilaris</i>.....</u>	<u>87</u>
<u>Սևագլուխ շահրիկ <i>Sylvia atricapilla</i>.....</u>	<u>88</u>
<u>Խայտաբղետ ճանճոր <i>Ficedula hypoleuca</i>.....</u>	<u>89</u>
<u>Փոքր ճանճոր <i>Ficedula parva</i>.....</u>	<u>89</u>
<u>Սպիտակավիզ ճանճոր <i>Ficedula albicollis</i>.....</u>	<u>90</u>
<u>Մեծ երաշտահավ <i>Parus major</i>.....</u>	<u>90</u>
<u>Երկնագույն երաշտահավ <i>Parus caeruleus</i>.....</u>	<u>91</u>
<u>Սև երաշտահավ <i>Parus ater</i>.....</u>	<u>92</u>
<u>Սովորական սիտեղ <i>Sitta europaea</i>.....</u>	<u>92</u>
<u>Սովորական դրախտապան <i>Emberiza citrinella</i>.....</u>	<u>93</u>
<u>Կորեկնուկ <i>Miliaria Calandra</i>.....</u>	<u>94</u>
<u>Լեռնային դրախտապան <i>Emberiza cia</i>.....</u>	<u>94</u>
<u>Ժայռային դրախտապան <i>Emberiza buchanani</i>.....</u>	<u>95</u>
<u>Սևագլուխ դրախտապան <i>Emberiza melanocephala</i>.....</u>	<u>96</u>
<u>Ազնվասարեկ <i>Carduelis spinus</i>.....</u>	<u>96</u>
<u>Կարմրակատար <i>Carduelis carduelis</i>.....</u>	<u>97</u>
<u>Ամուրիկ <i>Fringilla coelebs</i>.....</u>	<u>98</u>
<u>Սովորական սերինո <i>Fringilla montifringilla</i>.....</u>	<u>98</u>
<u>Կանաչ սերինո <i>Carduelis chloris</i>.....</u>	<u>99</u>
<u>Սովորական նսպնուկ <i>Carpodacus erythrinus</i>.....</u>	<u>100</u>
<u>Հատրեկի <i>Coccothraustes coccothraustes</i>.....</u>	<u>101</u>
<u>Չլան դրախտապան <i>Plectrophenax nivalis</i>.....</u>	<u>101</u>

<u>Դաշտային ճնճուկ <i>Passer montanus</i>.....</u>	<u>102</u>
<u>Իսպանական ճնճուկ <i>Passer hispaniolensis</i>.....</u>	<u>103</u>
<u>Անտառային կաչաղակ <i>Garrulus glandarius</i>.....</u>	<u>103</u>
<u>Սովորական կաչաղակ <i>Pica pica</i>.....</u>	<u>104</u>
<u>Սերմնաբաղ <i>Corvus frugilegus</i>.....</u>	<u>105</u>
<u>Մոխրագույն ագռավ <i>Corvus cornix</i>.....</u>	<u>105</u>
<u>Սև ագռավ <i>Corvus corax</i>.....</u>	<u>106</u>
<u>Սովորական քարաթռչնակ <i>Oenanthe oenanthe</i>.....</u>	<u>107</u>
<u>Օգտագործված գրականություն.....</u>	<u>108</u>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախը տիպիկ լեռնային երկիր է, իր բնորոշ եռաչափ տեղադրությամբ, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, ինչը նպաստում է հարուստ կենսաբազմազանության ձևավորմանը: Արցախի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով, հետևաբար, և իր մասնագիտացված դերով: Արցախում ձևավորված լանդշաֆտակլիմայական գոտիները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների բնակության միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են ինքնատիպ համակենցություններ և հարուստ ազրոկենսաբազմազանություն: Կենսաբազմազանության տեսակային կազմի առատությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Արցախը գտնվում է տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում, ինչպես նաև հանդիսանում է միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ:

Արդի ժամանակաշրջանում լանդշաֆտների բնական ճանապարհով փոփոխությունների էվոլյուցիոն գործընթացի կողքին, որպես վերափոխումների առաջատար գործոն, հանդես է գալիս մարդու գործունեությունը: Անթրոպոգեն կերպարանափոխությունները, որպես գործոն, էապես փոփոխում են ոչ միայն լանդշաֆտների տեսքը և բնական համակարգերը, այլև պոպուլյացիաների կառուցվածքը և կենսաբանական համակենցությունները՝ ընդգրկելով էվոլյուցիոն մեխանիզմների գործառույթների գործընթացում ձևավորված կայուն կենսահամակարգերը: Արցախում ստեղծված իրավիճակը, ինչպես նաև բնակչության մոտ ձևավորված սոցիալական պայմաններն առաջ են բերում բնական միջավայրի պահպանության գերկարևորագույն հիմնախնդիրը, որտեղ առաջնահերթ տեղ է զբաղեցնում բնական հարստությունների արդյունավետ օգտագործումը, ուր առանձնահատուկ նշանակություն ունեն թռչունները: Թռչունների կարգի ներկայացուցիչները իրենց լայն տարածմամբ, մորֆոլոգիական և էկոլոգիական հարմարողականությամբ, էկոլոգիական համակարգերում, մարդու կյանքում, իրենց գեղագիտական նշանակությամբ մշտապես զրավում են տարբեր մասնագիտությամբ հետազոտողների ուշադրությունը:

Այսօր, առավել քան երբևէ, կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրները դառնում են ավելի արդիական: Չնայած Արցախի ֆաունայում թռչուններն իրենց տեսակային կազմով և բազմազանությամբ զրավում են առաջին տեղը (մոտ 275-280 տեսակ), սակայն չկան վերջնագրված տվյալներ այս դասի ներկայացուցիչների տեսակային կազմի, էկոլոգիայի, կենսաբանության, տարածվածության և մի շարք այլ առանձնահատկությունների վերաբերյալ: Այս առումով ներկայացվող աշխատանքը հրատապ է ու պահանջված:

Ցանկացած քաղաքակիրթ պետություն իր տնտեսական զարգացման հեռանկարները նախագծելիս հաշվարկում է սեփական բնական ռեսուրսների քանակակն և որակական կողմերը, որոնց մեջ մտնում է նաև կենդանական աշխարհը, մասնավորապես թռչունները: Այս առումով թռչունների տեսակային կազմի, թվաքանակի, աշխարհագրական և էկոլոգիական օրինաչափությունների ձևավորման գիտակցումը հնարավորություն է տալիս պահպանման հիմնախնդիրների լուծման ու հետագայում որպես բնական ռեսուրս կառավարման գործընթացի ճիշտ կազմակերպմանը: Այս համատեքստում կարևոր են լեռնային շրջանների, հատկապես ազգային պարկի, օրնիտոֆաունայի ուսումնասիրությունները:

Տեսակների քիչ թվաքանակով էկոլոգիական համակարգերն անկայուն են այստեղ կատարվում են պոպուլյացիաների խտության կտրուկ տատանումներ, իսկ թվաքանակի կրճատումը կամ կենսաբանական տեսակի անհետացումը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների: Կենսաբազմազանության նվազումը հանգեցնում է էկոլոգիական համակարգերի կայունության նվազեցման, որոնք քայքայվում են և մարդուն զրկում կենսունակությունից: Այդ առումով շրջակա միջավայրի կառավարման մեթոդների ընտրման ժամանակ պետք է հաշվարկել տեսակային բազմազանության նվազման հետևանքները: Դա առավել կարևոր է մարդու կողմից ուժեղ փոփոխված վայրերում:

Պատմության ընթացիկ շրջանը բնութագրվում է շրջակա միջավայրի վրա նոր տեխնոլոգիական միջոցների ու մարդածին գործոնների բազմաթիվ ազդեցություններով: Մարդն իր միտումնավոր և ոչ միտումնավոր ազդեցություններով ոչնչացնում է կենդանիների բնական բնակատեղերը: Միջավայրի շարժունությունն արտահայտվում է անհնդատ անտառահատումներով, որսագողությամբ, գետերի հունի փոփոխությամբ, քաղաքաշինությամբ, հանքարդյունաբերությամբ: Այս և բազմաթիվ այլ գործոնների ազդեցությամբ առավել խոցելի է դառնում թռչնաֆաունան:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել «Կաչաղակաբերդ» ազգային պարկին բնորոշ թռչունների ֆաունայի տեսակների տարածվածությունը, էկոլոգիան և կենսաբանությունը, պարզել ներկա պայմաններում նրանց վիճակը, մշակել և հստակեցնել դրանց դերն ու նշանակությունը բնական համակարգերում, ինչպես նաև ստեղծել թռչունների բնակատեղերի կադաստր:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են. կենդանաաշխարհագրական և էկոլոգիական առումով Արցախը Անդրկովկասում առավել հետաքրքիր ռեգիոններից մեկն է: Այս առումով թռչնաֆաունայի ուսումնասիրման համար ընտրել ենք «Կաշաղակաբերդ» ազգային պարկի տարածքը: Աշխատանքի հիմնական խնդիրները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. հայտնաբերել և նկարագրել ազգային պարկի թռչունների տեսակային կազմը.
2. պարզել պարկի տարածքում թռչունների բնակատեղերը.
3. պարզաբանել և ներկայացնել թռչունների էկոլոգիային և կենսաբանությանը նվիրված որոշ հարցեր (օրական և սեզոնային ակտիվությունը, թվաքանակի փոփոխությունները, բազմացման ժամկետներ, ապրելավայրերը, սննդի կազմը, թշնամիները և մրցակիցները).
4. պարզաբանել թռչնաֆաունայի կառուցվածքը և ըստ սեզոնների փոփոխությունները.
5. մշակել թռչունների պահպանության միջոցառումների համակարգը և տարածել հասարակության մեջ և ներկայացնել բնապահպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին:

Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ Արցախում, մասնավորապես նորաստեղծ ազգային պարկի տարածքում, մեր կողմից կատարվել է թռչնաֆաունայի որոշ տեսակների նկարագրում, նրանց տարածվածության, էկոլոգիայի ուսումնասիրություններ և կենդանաաշխարհագրական վերլուծություններ:

Հետազոտությունների արդյունքում գնահատվել է ազգային պարկում թռչունների ներկա վիճակը, հստակեցվել տեսակների մոտավոր թիվը, որը կազմում է 128 տեսակ: Պարզաբանվել է, որ լեռնային երկրին բնորոշ եռաչափ տեղադրության պայմաններում այս թռչունների տեսակային կազմի տարածական կառուցվածքները բավականին շարժուն են: Առավելապես ապացուցվել պարկի տարածքում թռչունների սահմանների փոփոխության պատճառները, բնակեցման խտությունը և կապվածությունը կենսամիջավայրերի հետ, զերադասելի բնակավայրերը, սեզոնային և հիմնական կերակրավայրերը: Ուսումնասիրել ենք քննարկվող տեսակների բնադրաման ժամկետները:

ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ


Հետազոտությունները իրականացրել ենք «Կաշաղակաբերդ» ազգային պարկի տարածքում, 2018-2020թթ. ընկած ժամանակահատվածում: Հետազոտությունների համար պարկի տարածքում



Հերթական դիտարկման ժամանակ

առանձնացրել ենք հիմնական և ժամանակավոր ստացիոնարներ (քարտեզ 1): Հիմնական դիտարկումները իրականացրել ենք յուրաքանչյուր ամիս 1-2 անգամ, իսկ ժամանակավոր՝ պարբերաբար: Թռչունների ֆաունայի և բնակեցման վերաբերյալ տվյալները ստացել ենք կատարված

Ստացիոնարների քարտեզ



- ՀԻՄՆԱԿԱՆ՝*
- ① Արտաշավի
 - ③ Քառասուն աղջիկ
 - ④ Նարեշտար
- ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ՝*
- ② Կաչաղակաբերդ
 - ⑤ Դաղիվանք

Պայմանական նշաններ

- ազգային պարկի սահման
- գետեր
- լճեր, ջրամբարներ
- ծառեր, թփուտներ
- պետական սահման
- - - վարչական սահման
- ճանապարհներ
- բնակավայրեր



Երթուղիներում Յու. Ս. Ռավկինի (1967) մեթոդով, որն այսօր առավել շատ օգտագործվում է թռչնաաշխարհագրական հետազոտություններում: Հաշվարկի մյուս մեթոդների համաեմատությամբ դրա առավելությունը հետևյալն է՝ օգտագործում է երթուղիներում հանդիպած բոլոր թռչունների տվյալները, մեթոդը միանման է անտառային և բաց տարածքների բոլոր տեսակների համար, կիրառվում է ինչպես երզող, այնպես էլ չերզող, լավ կամ վատ երևացող թռչունների համար: Հաշվարկների արդյունքները համադրելի են ըստ սեզոնների: Երթուղիների նախնական պատրաստվածություն չի պահանջում: Մեթոդն իրագործելի է միանվագ երթուղիների և հազվագյուտ թռչունների հաշվարկների համար:



Դիտարկման արդյունքները գրանցելիս

Թռչունների բնակեցման խտության հաշվարկը հանդիպած յուրաքանչյուր տեսակի համար կատարվում է առանձին, հետևյալ բանաձևով. $N_{տեսակ} = X/(L \times h)$, որտեղ N-ը բնակեցման խտությունն է՝ զույգ/կմ², X-ը հաշվարկային զույգերի կամ առանձնյակների քանակն է, h-ը՝ հայտնաբերման շերտի լայնությունը կմ, L-ը երթուղու երկարությունը՝ կմ: Բնային շրջանում երգող արուները հաշվարկվել են՝ որպես զույգ: Երթուղիների աջ և ձախ հատվածներում արձանագրել ենք հանդիպող բոլոր թռչուններին: Անտառներում շերտի լայնությունը 0,05կմ (25մ յուրաքանչյուր կողմով), իսկ բաց տարածքներում՝ 0,1կմ (50մ յուրաքանչյուր կողմով):

Ամբողջ արշավների ընթացքում կատարվել է 2485կմ հաշվարկային երթուղիներ, որից 870կմ-ը՝ անտառածածկ և անտառատափաստաններ են, 985-ը՝ լեռնատափաստաններ, իսկ 630կմ-ը՝ մերձալպյան և ալպյան հատվածներ:

Թռչունների բնակեցման վերլուծությունների ժամանակ օգտագործել ենք հետևյալ չափանիշները (Равкин, Равкин, 2005; Равкин, Ливанов, 2008)՝ դոմինանտ, որոնց կայունությունը կազմում է 10% և ավել, ենթադոմինանտ, որոնց կայունությունը կազմում է 10% -ից մինչև 1%:

Ըստ բարձունքային գոտիականության, շրջանների և հետազոտվող կետերի՝ ֆաունայի նմանության գործակիցը հաշվարկվել ենք ըստ Սերենսի: Սերենսի ինդեքսը հաշվարկվել ենք հետևյալ բանաձևով.

2C

$K_s = \frac{A+B}{A+B+C}$, որտեղ C-ն համեմատվող խմբերի համար ընդհանուր տեսակների թիվն է, A-ն տեսակների թիվը առաջին խմբում, B-ն՝ երկրորդ:

Թռչունների բնակատեղերի՝ ծովի մակերևույթից բարձրությունների որոշման համար օգտագործել ենք GPSMAP 62stc սարքավորումը: Դանց բնակատեղերի դիտարկումների համար օգտագործել ենք հեռադիտակներ, նկարահանումների համար՝ «Canon» լուսանկարչական ապարատը: Երբեմն նաև օգտագործել ենք լուսորսիչների տվյալները:

Տվյալների վերլուծությունները կատարել ենք համեմատման տարբերակներով: Քանի որ ազգային պարկում առկա են լեռնային երկրին բնորոշ համարյա բոլոր գոտիները, բացի անապատակիսանապատայինից, ուստի համեմատության համար ընտրել ենք նույն տեսակների՝ տարբեր գոտիներում հանդիպման առանձնահատկությունները:

«ԿԱՉԱՂԱԿԱՔԵՐՂ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ

«Կաչաղակաքերղ» ազգային պարկը տեղակայված է Արցախի Հանրապետության Ասկերանի, Մարտակերտի, Շահումյանի և Քաչաթաղի շրջանների վարչական սահմաններում: Ազգային պարկի



Տեսարան ազգային պարկից

ընդհանուր տարածքը կազմում է 67728,2168 հա մակերես: Այն ստեղծվել է ԱՀ կառավարության 2018թ. մայիսի 11-ի N 346-Ն որոշմամբ: Արցախի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսապաշարների առկայությունից, որոնք երկրի համար ռազմավարական ռեսուրսներ են և Արցախի Հանրապետության կառավարությունը դրանց պահպանությունը դասում է գերակա խնդիրների շարքում: Դարեր շարունակ կենսապաշարները օգտագործվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ որպես սննդամթերք, վառելիք, շինանյութ, դեղամիջոցներ և այլն: Մարդածին գործոնի ազդեցությամբ բազմաթիվ կենդանատեսակներ կորցրել են իրենց բնակատեղը: Կենսաբազմազանությանը սպառնալիքներից է անկանոն որսորդությունը և որսագողությունը, օգտակար բույսերի անկանոն մթերումները և այլն, որոնք պայմանավորված են ոչ միայն բնապահպանական վերահսկողական կառույցների անբավարար աշխատանքով, այլև օրենսդրության անկատարությամբ, հատկապես՝ կենսառեսուրսների օգտագործման նորմավորման և չափաքանակների որոշման առումով: Կենսառեսուրսների արդյունավետ կառավարման հիմնական անհրաժեշտ տարրերը՝ հաշվառումը, գույքագրումը և մոնիթորինգը, դեռևս պատշաճ մակարդակով և ծավալով չեն իրականացվում: Կենսաբազմազանության վերաբերյալ լիարժեք տեղեկատվական համակարգի բացակայությունն իր հերթին բացառում է կենսաբազմազանության վրա մարդածին և բնական գործոնների ազդեցության իրական գնահատումը, պատճառած վնասի հաշվառումը և ամենակարևորը՝ հստակ տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացումը: Այս և մի շարք այլ հարցերին է նվիրված «Կաչաղակաքերղ» ազգային պարկի ստեղծումը: Ազգային պարկի նշված վայրերում ստեղծելը պատահական չէ: Ժամանակին նշված վայրերում առկա էր հարուստ կենսաբազմազանություն, սակայն ինչպես երկրում ստեղծված պատերազմական գործողությունները, այնպես էլ ծանր սոցիալական պայմանները հանգեցրել են բնական համակարգերի փլուզմանը և արդյունքում՝ կենսաբազմազանության աղքատացմանը: Ազգային պարկը բնության հատուկ պահպանվող տարածք է, որտեղ շրջակա միջավայրի պահպանության նկատառումներով սահմանվում

է մարդու գործունեությունը: Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) կողմից տրվել է



Տեսարան Կաչաղակաբերդից

ազգային պարկի հետևյալ սահմանումը՝ «Ազգային պարկը կենտրոնական իշխանության կողմից հաստատված տարածք է, որտեղ պետք է իրականացվի երեք հիմնական պայմաններ՝ բնության լրիվ պահպանություն, բավականին մակերես, հաստատուն վիճակ: Ազգային պարկի տարածքում թույլատրվում և կազմակերպվում է տուրիզմ: Ազգային պարկի տարածքը գտնվում է իրավաբանական պահպանության ռեժիմի տակ, որը բացառում է մարդու կողմից բնական ռեսուրսների շահագործումը և տարածքային անբողջականության խաթարումը»:

Ազգային պարկի տարածքի ռելիեֆի մեծ հակադրությունների պատճառով կլիման աչքի է ընկնում բազմազանությամբ: Ազգային պարկում կլիման բարեխառն է, բնորոշ է նախալեռնային միջին և բարձր լեռնային գոտիների կլիմային: Հունվարյան միջին ջերմաստիճանը կազմում է -6 - -8 °C, իսկ հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ 16 - 18 °C: Սթնոլորտային տեղումների տարեկան քանակը՝ 900 - 1100 և ավելի մմ: Առավելագույն տեղումները մայիս-հունիս ամիսներին է, նվազագույնը՝ դեկտեմբերին:

Ազգային պարկում բարեխառն կլիման ձևավորվում է լեռնալանջերի և սարահարթերի միջև 2400 մ բարձրությամբ: Կլիմայական սեզոնները համընկնում են օրացույցայինին: Չմեռը ցուրտ է, տևողությունը 3 - 4 ամիս, համեմատաբար խոնավ, հաստատուն ձնածածկույթով, ձյան շերտի հաստությունը 5 - 30 սմ, ձնառատ շրջաններում կարող է հասնել 40 - 45 սմ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -2 - -8 °C է, բացարձակ նվազագույնը կարող է հասնել մինչև -15 - -20 °C: Գարունը մեղմ է, երկարատև, ամառը՝ տաք, չափավոր խոնավ, պարզ եղանակներով: Օդի միջին ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին 20 °C է, առավելագույնը 28 - 30 °C: Աշունը տաք է, անհողմ եղանակների գերակշռությամբ: Սառնամանիքի ժամանակաշրջանը 110 - 130 օր է: Տարեկան տեղումների քանակը 900 - 1100 մմ, երբեմն ավելին, լանդշաֆտը անտառային, անտառատափաստանային, բարեխառն կլիմայի գոտին նպաստավոր է ռելիեֆի և առողջարանային նպատակներով օգտագործելու համար:

ՖԱՈՒՆԱԳԵՆԵՋ ԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պահպանվող տարածքների էկոլոգիական արժեքը նախևառաջ կայանում է հազվագյուտ կամ անհետացման եզրին գտնվող կենդանիների գոյատևման գոյության պայմանների պահպանման հնարավորություն: Այդպիսի տեսակների մեծամասնության համար շատ կարևոր է պահպանել դրանց յուրօրինակ բնակատեղերը, որտեղ նրանք կարող են իրենց համար գտնել օպտիմալ էկոլոգիական խորշ: Ժամանակակից բնապահպանական գործունեության մյուս՝ ոչ պակաս կարևոր

առանձնահատկությունը կենսաբազմազանության պահուստի ստեղծումն է: Պարտադիր չէ, որ հատուկ պահպանվող տարածքներում բնակվող կենդանիների մեջ լինեն հազվագյուտ կամ անհետացման եզրին գտնվող տեսակներ, այլ պետք է գիտակցել, որ այն ձեռք է բերում տեսակային համակեցությունների պահպանության առավել լրիվ նշանակություն:

Ազգային պարկի թռչունների կարգաբանական կառուցվածքը տարբերվում է մեծ բազմազանությամբ: Մեր կողմից առայսօր կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզել ենք, որ ազգային պարկի տարածքում առկա են 14 կարգին պատկանող 128 տեսակ թռչուն: Ուսումնասիրած թռչունների 29,7%-ը բնադրող չվող է, 3,9%-ը՝ չվող, 7,8%-ը՝ պատահական չվահյուր, 0,8%-ը՝ չվող ձմեռող, 5,5%-ը՝ ձմեռող, 52,3%-ը՝ նստակյաց: Ազգային պարկի տարածքում հիմնականում բնադրում է համարյա 82%-ը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

«Կաշաղակաբերդ» ազգային պարկի թռչնաֆաունայի կառուցվածքը և սեզոնային փոփոխությունները

	Կարգ	ընդամենը տեսակ	%	այդ թվում					
				Նվիչ Նավևորո չվող	Չվող	Պատահական չվահյուր	Չվող ձմեռող	Չմեռող	Նստակյաց
1	Բարձրասրունքներ	2	1,6		-	1			1
2	Գիշատիչ թռչուններ	23	17,9	6	-	3		2	12
3	Հավազգիների	6	4,7	1	-				5
4	Քարադրամաններ	4	3,1	-	-	1	1		2
5	Աղավնամաններ	6	4,7	1					5
6	Կլումանաններ	2	1,6	1		1			
7	Բվանաններ	7	5,5	3					4
9	Այծկիթանաններ	1	0,8	1					
10	Մանգաղաթևանաններ	2	1,6	2					
11	Ճեղագռավանաններ	4	3,1	3					1
12	Հոպոպանաններ	1	0,8	1					
13	Փայտփորանաններ	7	5,5			1			6
14	Ծնճուկանաններ	63	49,1	19	5	3	-	5	31
	Ընդամենը	128	100	38	5	10	1	7	67

Ազգային պարկի տարածքում թռչնաֆաունայի տեսակային կազմը և քանակը անընդհատ ենթարկվում է փոփոխության, այն առավելագույնի է հասնում գարնանը, նվազում աշնան սկզբներին և նվազագույնի հասնում ձմռանը: Բնության հատուկ պահպանվող տարածքներում թռչունների բազմազանության պահպանման առավել շահավետ ռազմավարության մշակման համար կարևոր նշանակություն ունի թռչնաֆաունայի ձևավորման ճանապարհների հստակ վերլուծությունները: Չկա այնպիսի մի մայրցամաք, որտեղ համատեղ չապրեն աշխարհագրական ամենաբազմազան շրջանների և մարզերի ներկայացուցիչները: Նշվածն առավել հստակ է դառնում թռչունների սեզոնային չուի ժամանակ, կամ արեալի սահմաններում տեղափոխությունների ու թռչերի ընթացքում:

Թռչունների ուղղահայաց գոտիականությամբ բաշխվածության վերաբերյալ տվյալները Արցախի ֆաունայում բացակայում է: Նախալեռնային և Լեռնային շրջաններում, մասնավորապես ազգային պարկում և նրա հարակից տարածքներում, մեր կողմից կատարված արշավների արդյունքում ստացված տվյալների հիման վրա պարզել ենք քննարկվող թռչնատեսակների բաշխվածությունը:

Ինչպես մյուս վայրերում, նույնը և Արցախում, բարձր լեռնային գոտիներին բնորոշ է բնական միջավայրերի՝ մեկը մյուսից խիստ տարբերվող պայմանները, որի արդյունք էլ ձևավորվում է տվյալ տարածքի ֆաունան և բնադրող թռչունների բնակեցումը: Օրնիտոֆաունայի տեսակային կազմը ուղղահայաց գոտիականությամբ աղքատանում է: Բարձր լեռնային անտառներում, թռչնաֆաունայի մեծ բազմազանություն արձանագրվում է գարնանային և ամառային շրջաններում, մերձալպյան և ալպյան գոտիներում՝ ամռանը: Նախալեռնային գոտիներում կարելի է հանդիպել թռչունների մեծ բազմազանության: Մեր կողմից կատարված դիտարկումներից պարզել ենք, որ յուրաքանչյուր բարձունքային գոտի օժտված է իրեն բնորոշ թռչնաֆաունայով, միաժամանակ պարզել ենք, որ անցումները այդ օրնիտոֆաունայում սահուն են և իրենց կազմում միշտ ունեն ընդհանուր տեսակների մեծ քանակություն (աղյուսակ 2):

Թռչունների բաշխվածությունը ըստ լանդշաֆտների

		լանդշաֆտային գոտիները			
		Լեռնատափ աստանային	Անտառա յին	Մերձալ պյան	Ալպյան
1	Մոխրագույն տառեղ- <i>Ardea cinerea</i>	+	-	-	-
2	Սպիտակ մեծ տառեղ- <i>Ardea alba</i>	+	-	-	-
3	Տափաստանային ճուռակ- <i>Butte rufinus</i>	+	-	+	+
4	Փոքր ենթարծիվ- <i>Aquila pomarina</i>	-	+	+	+
5	Մեծ ենթարծիվ- <i>Aquila clanga</i>	+	-	+	-
6	Քարարծիվ- <i>Aquila chrysaetos</i>	-	+	+	+
7	Սպիտակապոչ արծիվ- <i>Haliaeetus albicilla</i>	+	+	-	-
8	Օձակեր արծիվ- <i>Circaetus gallicus</i>	+	-	+	+
9	Գերեզմանարծիվ- <i>Aquila heliacal</i>	+	+	-	-
10	Գաճաճ արծիվ- <i>Hieraaetus pennatus</i>	-	+	+	-
11	Գիշանգղ- <i>Neophora percnopterus</i>	+	-	+	-
12	Գառնանգղ- <i>Gypaetus barbatus</i>	+	+	-	-
13	Սև անգղ- <i>Aegyptius monachus</i>	-	-	+	+
14	Սպիտակագլուխ անգղ- <i>Gyps fulvus</i>	-	+	+	+
15	Մարգագետնային մկնաճուռակ- <i>Circus pygargus</i>	-	-	+	+
16	Դաշտային մկնաճուռակ- <i>Circus cyaneus</i>	+	+	-	-
17	Սովորական հողմավար բազե- <i>Falco tinnunculus</i>	+	-	+	
18	Լորաճուռակ- <i>Accipiter nisus</i>	-	+	-	-
19	Եվրոպական ճնճղաճուռակ- <i>Accipiter brevipes</i>	+	+	-	-
20	Ցախաքլորաորս- <i>Accipiter gentilis</i>	-	-	-	-
21	Աղավնաբազե- <i>Falco columbarius</i>	+	-	+	-
22	Արտույտաբազե- <i>Falco subbuteo</i>	+	+	-	-
23	Սապսան- <i>Falco peregrinus</i>	+	-	-	-
24	Բալոբան- <i>Circus macrourus</i>	-	-	+	-
25	Տափաստանային մկնաճուռակ- <i>Falco cherrug</i>	+	-	-	-
26	Թխակապույտ աղավնի- <i>Columba livia</i>	-	+	+	-
27	Անտառային աղավնի- <i>Columba palumbus</i>	+	+	-	-
28	Հոբալ- <i>Columba oenas</i>	-	+	-	-
29	Սովորական տատրակ- <i>Streptopelia turtur</i>	+	+	-	-
30	Փոքր տատրակ- <i>Streptopelia senegalensis</i>	+	-	-	-
31	Օղակավոր տատրակ- <i>Streptopelia decaocto</i>	+	-	-	-
32	Քարակաքավ- <i>Alectoris chukar</i>	+	-	+	-
33	Մոխրագույն կաքավ- <i>Perdix perdix</i>	+	-	+	-
34	Կովկասյան մայրեհավ- <i>Lyrurus mlkosiewiczzi</i>	-	+	+	-
35	Անդրկովկասյան (սովորական) փասիան- <i>Phasianus colchicus</i>	+	+	-	
36	Վայրի հնդկահավ- <i>Tetraogallus caspius</i>	-	-	+	+
37	Ներկարար- <i>Coracias garrulous</i>	+	-	-	-
38	Կանաչ մեղվակեր- <i>Merops persicus</i>	+	-	-	-
39	Ոսկեգույն մեղվակեր- <i>Merops apiaster</i>	+	+	-	-
40	Հոպոպ- <i>Upupa epops</i>	+	+	-	-
41	Վարսակտցար- <i>Lymnocryptes minimus</i>	+	+	-	-
42	Մորակտցար- <i>Gallinago gallinago</i>	-	+	+	-
43	Անտառակտցար- <i>Gallinago media</i>	-	+	-	-
44	Կրկնակտցար- <i>Scolopax rusticola</i>	-	-	+	+
45	Փուփուլավոր կկու- <i>Clamator glandarius</i>	+	+	-	-
46	Սովորական կկու- <i>Cuculus canorus</i>	+	+	-	-
47	Եվրոպական բվիկ- <i>Otus scops</i>	+	+	+	-
48	Տնային բվիկ- <i>Athene noctua</i>	+	+	-	-
49	Թավշատ բու- <i>Aegolius funereus</i>	-	+	+	-
50	Ականջավոր բու- <i>Asio otus</i>	+	+	+	-
51	Ճահճային բու- <i>Asio flammeus</i>	-	-	+	+
52	Անտառաբու- <i>Strix aluco</i>	-	+	+	-
53	Բվեճ- <i>Bubo bubo</i>	+	+	+	-

Աղյուսակ 1-ի շարունակությունը					
54	Աս մանգաղաթև- <i>Apus apus</i>	+	+	-	-
55	Աս փայտփոր- <i>Dryocopus martius</i>	-	+	-	-
56	Փոքր խայտաբղետ փայտփոր- <i>Dendrocopos minor</i>	+	+	-	-
57	Սիրիական փայտփոր- <i>Dendrocopos syriacus</i>	+	+	-	-
58	Միջին փայտփոր- <i>Dendrocopos medius</i>	-	+	-	-
59	Խայտաբղետ փայտփոր- <i>Dendrocopos major</i>	+	+	-	-
60	Սպիտակամեջք փայտփոր- <i>Dendrocopos leucotos</i>	-	+	-	-
61	Կանաչ փայտփոր- <i>Picus viridis</i>	-	+	-	-
62	Սրնգահավ- <i>Bombycilla garrulus</i>	+	-	+	
63	Առափնյա ծիծեռնակ- <i>Riparia riparia</i>	+	-	+	
64	Գլուղական ծիծեռնակ- <i>Hirundo rustica</i>	+	-	-	-
65	Մոխրագույն արտույտ- <i>Calandrella rufescens</i>	+	-	+	-
66	Անտառային արտույտ- <i>Lullula arborea</i>	-	+	+	-
67	Եղջերավոր արտույտ- <i>Eremophila alpestris</i>	+		+	+
68	Դաշտային արտույտ- <i>Alauda arvensis</i>	-	-	+	+
69	Դեղին խաղտոնիկ- <i>Motacilla flava</i>	+		+	-
70	Սպիտակ խաղտոնիկ- <i>Motacilla alba</i>	+	+	+	-
71	Լեռնային խաղտոնիկ- <i>Motacilla cinerea</i>	-	-	+	-
72	Դաշտային ձիաթռչնակ- <i>Anthus campestris</i>	-	+	+	-
73	Անտառային ձիաթռչնակ- <i>Anthus trivialis</i>	-	+	+	-
74	Մարգագետնային ձիաթռչնակ- <i>Anthus pratensis</i>	-	-	+	+
75	Լեռնային ձիաթռչնակ- <i>Anthus spinoletta</i>	+	-	+	+
76	Կարմրախածի ձիաթռչնակ- <i>Anthus cervinus</i>	+	-	-	-
77	Մարգագետնային չքքան- <i>Saxicola rubetra</i>	-	-	+	+
78	Սևազլուխ չքքան- <i>Saxicola torquata</i>	+	+	-	-
79	Ժուլյան- <i>Lanius cristatus</i>	+	+	-	-
80	Սևաճակատ շամփրուկ- <i>Lanius minor</i>	+	-	-	-
81	Մոխրագույն շամփրուկ- <i>Lanius excubitor</i>	+	+	-	-
82	Պիրուկ- <i>Oriolus oriolus</i>	+	+	-	-
83	Եղնջաթռչնակ- <i>Troglodytes troglodytes</i>	-	+	+	-
84	Անտառային նրբագեղիկ- <i>Prunella modularis</i>	+	+	-	
85	Խայտաբղետ նրբագեղիկ- <i>Prunella ocularis</i>	-	-	+	+
86	Ալպիական նրբագեղիկ- <i>Prunella collaris</i>	-	-	+	+
87	Ջրաճնճղուկ- <i>Cinclus cinclus</i>	+	+	-	
88	Հարավային սոխակ- <i>Luscinia megarhynchos</i>	+	+	-	-
89	Սովորական սոխակ- <i>Luscinia luscinia</i>	+	+	-	-
90	Արշալուսիկ- <i>Erithacus rubecula</i>	+	+	+	-
91	Կապտափող սոխակ - <i>Luscinia svecica</i>	+	-	+	-
92	Սևուկ կարմրատուտ- <i>Phoenicurus ochruros</i>	+	+	+	-
93	Սովորական կարմրատուտ- <i>Phoenicurus phoenicurus</i>	+	+	+	-
94	Կարմրափորիկ կարմրատուտ- <i>Phoenicurus erythrogaster</i>	+	-	-	-
95	Աս կեռնեխ- <i>Turdus merula</i>	+	+	+	+
96	Սևախածի կեռնեխ- <i>Turdus atrogularis</i>	+	+	+	-
97	Սոսնձակեռնեխ- <i>Turdus viscivorus</i>	-	+	+	-
98	Երգող կեռնեխ- <i>Turdus philomelos</i>	+	+	+	-
99	Սինկեռնեխ- <i>Turdus pilaris</i>	+	+	+	-
100	Սևազլուխ շահրիկ- <i>Sylvia atricapilla</i>	+	+	+	-
101	Խայտաբղետ ճանճորս- <i>Ficedula hypoleuca</i>	+	+	+	-
102	Փոքր ճանճորս- <i>Ficedula parva</i>	-	+	+	-
103	Սպիտակավիզ ճանճորս- <i>Ficedula albicollis</i>	-	+	+	-
104	Մեծ երաշտահավ- <i>Parus major</i>	+	+	+	-
105	Երկնագույն երաշտահավ- <i>Parus caeruleus</i>	+	+	+	-
106	Աս երաշտահավ- <i>Parus ater</i>	+	+	+	-
107	Սովորական սիտեղ- <i>Sitta europaea</i>	+	+	+	-
108	Սովորական դրախտապան- <i>Emberiza citrinella</i>	+	-	+	+
109	Կորեկնուկ- <i>Miliaria Calandra</i>	+	-	+	+
110	Լեռնային դրախտապան- <i>Emberiza cia</i>	+	-	-	-
111	Ժայռային դրախտապան- <i>Emberiza buchanani</i>	-	-	+	-
112	Սևազլուխ դրախտապան- <i>Emberiza melanocephala</i>	+	-	+	+
113	Ազնվասարեկ- <i>Carduelis spinus</i>	-	+	+	-

Աղյուսակ 1-ի շարունակությունը

114	Կարմրակատար- <i>Carduelis carduelis</i>	+	-	+	-
115	Ամուրիկ- <i>Fringilla coelebs</i>	+	+	+	-
116	Սովորական սերինոս- <i>Fringilla montifringilla</i>	+	+	-	-
117	Կանաչ սերինոս- <i>Carduelis chloris</i>	+	+	-	-
118	Սովորական ոսպնուկ- <i>Carpodacus erythrinus</i>	-	+	+	+
119	Յատրեկիչ- <i>Coccothraustes coccothraustes</i>	+	+	+	-
120	Չյան դրախտապան- <i>Plectrophenax nivalis</i>	+	+	-	-
121	Ղաշտային ճնճղուկ- <i>Passer montanus</i>	-	+	+	+
122	Իսպանական ճնճղուկ- <i>Passer hispaniolensis</i>	+	+	-	-
123	Անտառային կաչաղակ- <i>Garrulus glandarius</i>	+	+	+	-
124	Սովորական կաչաղակ- <i>Pica pica</i>	+	+	-	-
125	Սերմնաքաղ- <i>Corvus frugilegus</i>	+	+	+	-
126	Մոխրագույն ագռավ- <i>Corvus cornix</i>	+	-	+	-
127	Սև ագռավ- <i>Corvus corax</i>	+	+	+	+
128	Սովորական քարաթռչնակ- <i>Oenanthe oenanthe</i>	-	+	+	-
Ընդամենը		86 (67,2%)	81 (63,3%)	73 (57%)	24 (17,8%)

Լանդշաֆտներում կենդանիների բազմազանության պարզագույն, միևնույն ժամանակ տեղեկատվական ցուցանիշը հանդիսանում է տարբեր բնակատեղերում տեսակների խտությունը, որն արտահայտվում է 1կմ²-ում տեսակների քանակով: Տարբեր ֆաունագենետիկ համալիրներին վերաբերող թռչունների տեսակային բազմազանության տարածական անհամաչափությունը, որպես հավաստի ցուցասարք, կարող է ծառայել կենսամիջավայրերի անթրոպոգեն խախտումների համար, կամ հակառակը վկայել բնականիջավայրերի վերափոխման ընթացքում կենդանիների նոր հարմարողականությունների դրսևորման մասին:

Մեր կողմից առայսօր կատարված դիտարկումներով պարզվել է, որ ազգային պարկում հայտնաբերած 128 տեսակներից 12-ը կամ 9,4%-ը համարվում են տիպիկ լեռնատափաստանային գոտու բնակիչներ ու չենք հանդիպել մյուս գոտիներում, անտառային գոտուն բնորոշ է 8 տեսակ կամ 6,2%-ը: Մի շարք տեսակներ հանդիպում են բոլոր գոտիներում: Լեռնատափաստանային և անտառային գոտուն ֆաունայի նմանության ինդեքսը կազմում է 0,635 կամ 63,5%, անտառային և մերձալպյան գոտուն՝ 0,545 կամ 54,5%, մերձալպյան և ալպյան գոտուն՝ 0,286 կամ 28,6%: Մոխրագույն և սպիտակ տառեղների խտությունը լեռնատափաստանային գոտուն, 1կմ²-ում կազմել է 0,6-0,8 առանձնյակ, սապսանների խտությունը՝ 0,3: Ազգային պարկի նախալեռնային գոտուն առավել խիտ բնակեցված տեսակներից են սև կեռնեխը (1կմ²-ում 10-15 առանձնյակ) և անտառային կաչաղակը (1կմ²-ում 13-18 առանձնյակ): Բավականին քաղաքանակ են գիշատիչ թռչունները, 1կմ²-ում դրանց թվաքանակը տատանվում է 2-3 առանձնյակ, այս կարգի ներկայացուցիչներից բավականին հազվագյուտ են սև և սպիտակագլուխ անգղերը, գառնանգղը, գիշանգղը: Աղավաններից հանդիպման ցածր հաճախականություն ունեն հորբալը, անտառային աղավանին, սովորական տատրակը, փոքր տատրակը, հազվագյուտ են օղակավոր տատրակները: Ազգային պարկի խոցված թռչնատեսակներից են հավազգիները, որոնցից անհետացման եզրին է կոկկասյան մայրեհավը, ուլարը, իսկ մյաուս տեսակները սակավաթիվ են:

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Թռչունների բնակեցման կազմի ու կառուցվածքի դինամիկայի ուսումնասիրությունները հանդիսանում է ԲՀՊՏ-ի կենսաբազմազանության հետազոտման անհրաժեշտ մասը: Տարվա սեզոնների ընթացքում տարբեր բնականիջավայրերում թռչունների թվաքանակի և տեսակային բազմազանության փոփոխության բնույթը վկայում է հատուկ պահպանվող տարածքների այս կամ այն մասի պոտենցիալ բնապահպանական նշանակությունը: Լանդշաֆտների առանձին կառուցվածքային տարրեր, հազվադեպ բնային կամ ձմեռման շրջանում, աշնանային կամ գարնանային միգրացիաների ընթացքում, չուի շրջանում ժամանակավոր կայանատեղերում հազվագյուտ տեսակների համար հանդիսանում են թաքստոցներ:

Ազգային պարկի տարածքում, կամ առհասարակ, թռչունների բնակեցման դինամիկայի ուսումնասիրությունների համար առանձնացրել ենք հետևյալ սեզոնային ասպեկտները՝ ձմեռային (15.11–15.02), նախագարնանային (15.02–15.03), նախաբնային (15.03–15.04), բնային (15.04–30.06), հետբնային (01.07–15.09) և միգրացիոն (15.09–15.11):

Չմեռային ասպեկտը բնութագրվում է թռչնաֆաունայի տեսակային կազմի և թվաքանակի համեմատաբար կայուն վիճակով: Թռչունների համար այդ ընթացքում ազգային պարկի տարածքում դրանց տեղափոխությունների համար սահմանափակող գործոն է հանդիսանում անբարենպաստ եղանակա-կլիմայական գործոնները, սակայն նշված ժամանակահատվածում որոշ տեսակներ կեր հայթայթման համար կատարում են օրական քոչեր: Նախագարնանային ասպեկտում սննդային քոչերը կրճատվում են, սակայն թռչունները սկսում են ավելի ակտիվ տեղափոխությունները և բնադրման տեղերի ընտրումը: Այդ ընթացքում վաղ բնադրվող թռչունները սկսում են առաջին թխսի շրջանը: Շրջանի ավարտին թռչիքի ինտենսիվությունը ընկնում է, սակայն որոշ չբնադրված տեսակներ

շարունակում են հանդիպել պարկի տարածքի սահմաններում: Բնային շրջանում թռչունների կազմի և կառուցվածքի վրա ազդում է բուսականության բնույթը, տեղումների քանակը, մարդածին ճնշումը: Արդյունքում ձևավորվում է կայուն թռչնահամալիր, որտեղ թռչունները սերտ կապված են ինչպես բնային տարածքների հետ, այնպես էլ հարևանների: Թռչունների կապը տարածքների հետ նշանակալիորեն թուլանում է հետբնային շրջանում: Մեծ քանակությամբ մատուցվող առանձնյակներ սկսում են ցրվել ազգային պարկի տարածքում և զբաղեցնում կերային նպաստավոր պայմանները: Միգրացիայի շրջանում քոչող թռչուններին, որոնք բնադրվել են պարկի տարածքում կամ նրա սահմանների մոտ, միանում են չվող թռչունները: Դրանց քանակը բավականին գերկշռում է տեղական առանձնյակներին:

Ասպեկտների ժամանակագրական շրջանակները տարեցտարի կարող են փոխվել: Այսպես. տաք ու սակավածյուն տարիներին այն շարժվում է դեպի վաղ ժամկետները, իսկ խստաշունչ եղանակային պայմաններով ձմեռը և ցուրտ ու ձգձգվող գարունը հանգեցնում են ասպեկտների ուշացմանը: Ֆենոլոգիական պայմանների միջև հստակ սահմանների ընդգծումը հնարավոր չէ: Առավել ճիշտ կլիմի ասել երկու հարևան ասպեկտների առանձնահատկությունները բնութագրող յուրօրինակ անցումային կարգավիճակի մասին, որը սովորաբար տևում է 8-10օր:

Լեռնատափաստանների թռչնահամալիրների դինամիկան: Ամառային և ձմեռային ստացիոնար բնակեցվող թռչունների տեսակային կազմը բավականին աղքատ է: Այդ շրջանում դրանց խտությունը նույնպես նոսր է լինում և կազմում է 1-2 առանձնյակ/կմ², իսկ աշնանային և գարնանային շրջանում խտությունը կարող է հասնել մինչև 50-60 առանձնյակ/կմ²: Այդ տարածքներում արձանագրվում կամպոֆիլ տեսակներ՝ մոխրագույն և սպիտակ տառեղները:

Լեռնատափաստանները ձմեռային շրջանում տարբերվում են թռչունների բնակեցման անկայունությամբ: Համդիպում են մոխրագույն կաքավներ, քարակաքավներ, կարմրակատարներ, հազվադեպ՝ փասիաններ և այլն: Ամբարենպաստ պայմաններին թռչունները թաքնվում են թփուտներում, քարակույտերի տակ: Այստեղ դրանք գտնում են իրենց կերը, երբեմն կերի բացակայության կամ սակավության դեպքում կարող են տեղափոխվել ագրոցենոզներ: Այդ ժամանակահատվածում թռչունների բնակեցման խտությունը կազմում է 0,3-1,2 առանձնյակ/կմ²:

Նախագարնանային շրջանում տեսակների թվի ավելացում չի արձանագրվում դա պայմանավորված է նրանով, որ ծյան ծածկույթը տափաստաններում երկար է մնում և սահմանափակում թռչունների հասանելիությունը խոտաբույսերի սերմերին: Սակայն վերը նշված տեսակների քանակը փոքր-ինչ ավելանում է և այդ ժամանակահատվածում խտությունը կազմում է 0,8-2,5 առանձնյակ/կմ²:

Նախաբնային շրջանը տարբերվում է տեսակային բազմազանության ավելացմամբ: Ձնհալին գուլգընթաց այստեղ են հայտնվում դաշտային արտույտը, կապտափող սոխակը, ժուլանը, այգու դրախտապանը, խաղտոնիկները: Թփուտներում բնադրվում են մարգագետնային ճուռակները: Նախաբնային շրջանում, տեսակային բազմազանությունը լեռնատափաստաններում կազմում է 7-8 առանձնյակ/կմ²:

Բնային շրջանում լեռնատափաստանային բնակատեղերում, մյուս բնականիջավայրերի համեմատությամբ, բնութագրվում են տեսակային բազմազանության և բնակեցման ցածր խտությամբ: Համարյա բոլոր վայրերի բուսական համակեցություններում հանդիպում են դաշտային արտույտները, մոխրագույն կաքավները, դեղին և սպիտակ խաղտոնիկները, երբեմն՝ օձակեր արծիվ, դաշտային մկնաճուռակ, տափաստանային մկնաճուռակ, արտույտաբազե, կովկասյան փասիան, մարգագետնային չքքան, սևագլուխ չքքան: Այս շրջանում թռչունների տեսակային առավել մեծ բազմազանությամբ աչքի են ընկնում ազգային պարկի հարավային հատվածը, մասնավորապես Նորաշենիկի, Արտաշավի, Բազմատուսի հատվածները: Հյուսիսային հատվածում աչքի է ընկնում Մարտակերտի շրջանի նախալեռնային գոտին՝ Դաշտազլիսի, Նարեշտարի հատվածները: Այս տարածքներում հողերը ենթարկված են էրոզիայի, ինչն անասունների անկանոն արածեցման արդյունք է: Այդ պայմաններում հեղեղատների հատակին ձևավորվում է մասրենու, մոշենու, սզենու խիտ թփուտներ: Այդպիսի վայրերում մեծանում է կապտափող սոխակների, ժուլանների, սովորական սոխակների, սևաճակատ և մոխրագույն շամփրուկների քանակը:

Հետբնային շրջանում լեռնատափաստանները համարյա թե չեն օգտգործվում թռչունների կողմից, ինչը պայմանավորված է դրանց կերային բազա հանդիսացող բուսականության չորացմամբ: Բացառություն են կազմում թփուտածածկ տարածքները, որտեղ իրենց համար ապահով թաքստոց և կեր են գտնում անուրիկի, ժուլանների, հարավային սոխակների, սովորական դրախտապանների ճտերը: Այդ ժամանակահատվածում 1 կմ երթուղում հաշվարկվում է 2-3 տեսակ թռչուն՝ 0,5-1 առանձնյակ/հա:

Միգրացիայի շրջանը բնութագրվում է տեսակների թվի ավելացմամբ, սակայն թռչուններն այստեղ գտնվում են ոչ երկարատև: Միգրացիայի այդպիսի վարքագիծ բնորոշ է բնադրող բոլոր ներկայացուցիչներին, որոնք ձևավորվում են ամռան սկզբին, ինչպես նաև անուրիկներին, կարմրակատարներին, կանաչ սերինոսներին, որոնք բազմանում են այլ վայրերում: Այս վայրերում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 1 կմ երթուղում հաշվարկվում է 13-14 տեսակ թռչուններ, իսկ կայունությունը գնահատելն անհնար է, քանի որ թռչունները կորցնում են կապն իրենց տարածքների հետ:

Անտառներում բնակվող թռչունների սեզոնային դինամիկան: Ազգային պարկի անտառածածկ տարածքներն իրենցից ներկայացնում են յուրօրինակ բնակատեղեր, որոնք ամբողջ տարվա ընթացքում գրավում են մեծ քանակությամբ թռչուններ, դրանով իսկ մեծ ներդրում ունենալով պարկի օրնիտոհամալիրի տեսակային բազմազանության պահպանության գործում: Գարնանային-ամառային շրջաններում այստեղ բնադրում են բազմաթիվ տեսակներ, որոնք երբեք կապված չեն եղել լեռնատափաստանային զոտիների հետ: Ձմռանը թռչուններն անտառներում ունենում են լայն կերային և պաշտպանվածության պայմաններ, իսկ գարնանային և աշնանային չուի ժամանակ բազմաթիվ տեսակներ անտառաշերտերն օգտագործում են հանգստի համար: Ազգային պարկի տարածքի համարյա մեկ երրորդը կազմում են անտառածածկ տարածքները: Անտառների ծառատեսակները բազմազան են: Այստեղ թփուտային հարկայնությունը համարյա արտահայտված չէ:

Ձմռանային շրջանում անտառներում թռչնակազմի բազմազանությունը թույլ է արտահայտված (նոսր անտառներում երթուղում հաշվարկվում է 2-3 տեսակ/կմ, իսկ խիտ անտառներում՝ 4-5 տեսակ/կմ) և ունեն ցածր գույնարային կայունություն: Թռչուններն անտառեզրերը երբեմն օգտագործում են որպես թաքստոց կերահրապարակներ, իսկ խոր շերտերում ձևավորում են ձմեռային կայուն թռչնակոմպլեքս: Նոյեմբերի վերջերից մինչև փետրվար անտառների հիմնական բնակիչներից են կապույտ երաշտահավերը, սև կեռնեխները, անտառային կաչաղակները, փայտփորերի տարբեր տեսակները: Տաք ու սակավածյուն ձմռանը անտառաշերտերում և բացատներում հանդիպում են սրնգահավեր, ամուրիկներ, կանաչ սերինոսներ, սովորական սերինոսներ, անտառային և թխակապույտ աղավնիներ, որոնք սնվում են չորացած հատապտուղներով:

Որոշ թռչնատեսակների, օրինակ կարմրակատարների, կաչաղակների, մոխրագույն ագռավների, սերմնաքաղերի, դաշտային ճնճղուկների և այլ, քանակը անտառաշերտերում փոփոխական է: Ցերեկով դրանք սնվում են անտառաշերտերում, անտառաբացատներում, երեկոյան տեղափոխվում բնակելի վայրեր, գետերի ափեր: Ամբարենպաստ պայմաններում թռչունները մի քանի օր կարող են չլքել իրենց թաքստոցները: Չնայած անտառներում թռչունների բնակեցումը համեմատաբար կայուն է, սակայն դեկտեմբերի սկզբներից մինչև փետրվարի կեսերը տեսակների քանակը աստիճանաբար նվազում է և կրկին սկսում ավելանալ: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ձմռան կեսերին կերի հայթայթման համար թռչունների ամենօրյա ակտի քոչերով և փետրվարի կեսերի առաջին տաքացման գործընթացով:

Նախագարնանային փուլում թռչունների բնակեցման խտությունը էապես չի տարբերվում ձմեռայինից, սակայն այդ ընթացքում նկատվում է որոշ թռչունների վարքագծի փոփոխություններ: Երաշտահավերի, կեռնեխների, անտառային կաչաղակների ամենօրյա սննդային քոչերը անտառներից դեպի մոտակա բնակավայրեր և հակառակը կրճատվում է: Թռչունները սկսում են տեղափոխվել իրենց անհատական տարածքների շուրջը և ձայներով նշադրել նրա սահմանները: Անտառաբավերը, փայտփորները, ձմեռելով բնակավայրերի եզրերին, նույնպես սկսում են զբաղեցնել իրենց բնային տարածքները: Սերմնաքաղերը, մոխրագույն ագռավները, դաշտային ճնճղուկները ժամանակի մեծ մասը անցկացնում են գաղութային բնակեցումներով, իսկ որոշներն արդեն մարտի կեսերից սկսում են բնադրվել: Մարտի կեսերին հայտնվում են հոբալը, հատբեկիչը:

Նախագարնանային փուլում թռչունների տեսակային կազմը, ի տարբերություն ձմեռայինի, փոքր-ինչ ավելանում է (3-6 տեսակ/կմ): Սակայն դա պայմանավորված է ոչ այնքան տեսակների թվի ավելացմամբ, որքան հավասարաչափ բաշխմամբ: Մարտի վերջին անտառային թռչնաֆաունան ավելանում է և 1հա-ում հաշվարկվում է մոտ 6-7 առանձնյակ:

Նախաբնային շրջանը տարբերվում է գարնանային ինտենսիվ թռիչքով, որի ընթացքում մի շարք թռչուններ կանգնում են անտառներում՝ հանգստի ու սնման համար: Տեսակների թիվը և թռիչքի ինտենսիվությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է ալիքաձև: Ապրիլի սկզբներին առավել ինտենսիվ միգրացիաներ են կատարում կանաչ սերինոսը, ամուրիկը, ճուռակները, տսնձակեռնեխը, երգող կեռնեխը: Ամսվա երկրորդ և երրորդ տասնօրյակներում այստեղ հայտնվում են սոխակները (կապտափող, հարավային և սովորական սոխակներ), սևախածի կեռնեխը, իսպանական և դաշտային ճնճղուկները, երկնագույն ու երկարագի երաշտահավերը: Ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին այստեղ կերակրվում են մեծ քանակությամբ թռչուններ: Երբեմն վերը թվարկած թռչուններից որոշները, ինչպես նաև գիշատիչ թռչուններից քարարծիվը, գերեզմանարծիվը, փոքր ենթարծիվը, բնադրվում են անտառներում:

Կատարված դիտարկումներով պարզել ենք, որ թռչունների քոչերի և չուի ինտենսիվությունը կախված է եղանակային պայմաններից: Այսպես՝ սոխակների, արշալույսիկների առաջին երզը տաք գարնանը կարելի է լսել ապրիլի կեսերին, իսկ առավել ցուրտ եղանակներին՝ միայն ամսվա վերջին: Մեկ տեսակի ինտենսիվ միգրացիաների ֆոնի վրա մյուս տեսակները ցուցադրում են իրենց տարածքային վարքագիծը (փայտփորներ, սիտեղներ) կամ արդեն սկսում են ձվադրել (սերմնաքաղեր, ագռավներ, կաչաղակներ): Մայիսի սկզբներին անտառեզրերին կամ նրան հարող տարածքներում հաջողվել է հայտնաբերել տարբեր թռչունների անավարտ բներ: Մայիսի առաջին տասնօրյակում անտառեզրերին կամ խորքային շերտերում համարյա բոլոր բնադրավայրերը զբաղեցված են լինում: Ի տարբերություն նախագարնանային շրջանի՝ ավելանում է թռչունների տեսակների թիվը: Այդ ընթացքում տեսակների կայունությունը տատանվում է 14,5-16,2 առանձնյակ/հա, առանձին վայրերում, մասնավորապես պարկի հարավային հատվածում և հյուսիսային շրջանի նախալեռնային զոտում, տեսակների կայունությունը կարող է հասնել մինչև 23,5-24 առանձնյակ/հա: Իսկ գաղութային

կենսակերպ վարող սերմնաքաղերի կամ ագռավների բնակավայրերում այդ ցուցանիշը կարող է հասնել մինչև 120-130 առանձնյակ/հա:

Անտառային հիմնական թռչնաֆաունայի համալիրը կազմում է թռչունների դենդրոֆիլ խումբը: Անտառներում առավել հավասարաչափ բաշխված բնային հատվածներ և խտության առավելագույն ցուցանիշներ ունեն լորաճուռակը, եվրոպական ճնճղաճուռակը, սովորական տատրակը, անտառային աղավնին, խայտաբղետ ճանճորսը, անտառային կաչաղակը: Թռչունների այդպիսի կազմ ակնհատ է դառնում 4-5կմ երթուղում: 9-12կմ երթուղիներում կարելի է հանդիպել սերմնաքաղերի, սև ագռավների 80-100, միգուցե և ավելի զույգերի: Անտառներում բնադրող թռչունների տեսակային կազմը լրիվությամբ բացահատելն ունի իր բարդությունները. նախ՝ շատ աշխատարար գործընթաց է և պահանջում է մեծ քանակությամբ աշխատուժ, երկրորդ՝ որոշ տեսակներ բնադրվում են անտառածածկի դժվարամատչելի վայրերում: Մյուս դենդրոֆիլ տեսակներին կարելի է հանդիպել նաև լեռնատափաստանների թփուտներում կամ պտղատու այգիներում բնադրված: Նման տեսակներից են սև կեռնեխները, անտառային կաչաղակները, սովորական սիտեղները: Բնային շրջանում անտառներում թռչունների քանակը համեմատաբար կայուն է մնում և 1կմ²-ում կազմում է տարբեր տեսակներին պատկանող 275-324,5 առանձնյակ, սակայն այդ քանակությունը հունիսի վերջերին ավելանում է ճտերի հաշվին, որոնք մնում են բնային շրջանում կամ նրանցից ոչ հեռու: Արդեն հուլիսի կեսերին անտառներում թռչունների քանակը նվազում է, քանի որ մատղաշ առանձնյակները քոչում են դեպի առավել նպաստավոր կերային պայմաններ:

Հետքնային փուլը բնութագրվում է տեսակների թվի աճով: Այդ ընթացքում թռչունների բաշխումն անհավասարաչափ է, իսկ կապը տարածքների հետ՝ ծայրահեղ թույլ: Օգոստոսի վերջերին, սեպտեմբերի սկզբներին անտառեզրերին հանդիպում ենք ինչպես բնադրող, այնպես էլ վաղ միգրացվող թռչուններին: Առաջին խմբի տեսակներից են ամուրիկը, մեծ երաշտահավը, դաշտային ճնճղուկը և այլն: Անտառներում հետքնային քոչեր բնորոշ են փոքր և խայտաբղետ ճանճորսներին, սոխակներին: Այդ ընթացքում որոշ թռչուններ անտառն օգտագործում են որսի (արտույտաբազե, լորաճուռակ) կամ հանգստի (ոսկեգույն և կանաչ մեղվակերներ, ներկարար) վայր: Հետքնային շրջանում հաշվարկային երթուղիներում թռչունների խտությունը նվազում է: Հուլիսի կեսերին այդ ցուցանիշը երթուղիներում կազմում է 38,7-85,6 առանձնյակ/կմ, իսկ օգոստոսին նվազում մինչև 20,2-45,7 առանձնյակ/կմ:

Միգրացիոն շրջանի տեսակային բազմազանությունը համադրելի է նախաբնային շրջանի հետ: Մեկ կիլոմետր կտրվածքով երթուղում արձանագրվող տեսակների թիվը, կախված անտառածածկի խտությունից և տեղադիրքից, տատնվում է 14-ից մինչև 29-ը: Այդ ժամանակահատվածի համար անտառեզրերում հավաքվում են սև կեռնեխների, սոսնձակեռնեխների, անտառային և դաշտային ձիաթռչնակների երամներ: Որոշակի ժամանակահատվածում զգալիորեն ավելանում է արշալուսիկների, սոխակների, ճանճորսների քանակը: Այդ տեսակների մատղաշ թռչունները սնվում են թփուտներում, իսկ անբարենպաստ պայմաններում՝ ապաստանում անտառներում: Անտառներում թռչունների տեսակային կազմի և թվաքանակի կայուն դինամիկայի վրա անկասկած իր ազդեցությունն ունի մարդածին գործոնը, այսպես՝ անտառներին մոտ գտնվող ցանքատարածքներում հացահատիկային կուլտուրաների մնացորդները, թափված հատիկը, կամ չհնձված արևածաղիկը, եգիպտացորենը և այլն կայուն կերի բազա են հանդիսանում բազմաթիվ տեսակների համար, որոնք ցերեկը սնվում են դաշտերում, իսկ գիշերելու համար տեղափոխվում են անտառներ: Այդ ժամանակահատվածում հաշվարկային երթուղիներում թռչունների քանակն անկայուն է: Մի շարք տեսակների զանգվածային քոչեր կատարվում է ալիքաձև: Բացի դրանից, կախված եղանակային պայմաններից ամուրիկը, արշալուսիկը, ձյան դրախտապանը կարող են պարկի տարածքը լքել կամ հոկտեմբերի վերջերին, կամ մինչև կայուն ձյան շերտի առկայությունը, իսկ երբեմն նաև ձմեռել պահպանվող տարածքում: Անտառային հատվածում առավել մեծ տեսակային բազմազանություն արձանագրվում է նախաբնային և միգրացիոն շրջանում, առավել քիչը՝ ձմռանը: Անտառային թռչունների կազմում արձանագրվում են նաև լեռնատափաստանային թռչուններ: Ձմեռային և բնային շրջանում թռչունների քանակն աննշան է փոփոխվում:

Թռչունների բնակեցման դինամիկան բնակավայրերում: Ազգային պարկում բնակեցված տարածքները մեծ չեն: Հյուսիսային հատվածն ընդգրկում է Դաշտագլխի, Շրագի և Նարեշտարի, իսկ հարավում՝ հիմնականում բնակեցված վայրերը գտնվում են ազգային պարկի եզրագծում: Դիտարկումներ կատարելիս հաշվի ենք առել նաև հարակից բնակատեղերը և գործող ու լքված անասանաֆերմաները:

Ձմեռային շրջանում բնակավայրերում, ի տարբերություն մյուս կենսամիջավայրերի, թռչունների բնակեցման խտությունն առավել բարձրն է: Կատարված դիտարկումներով և այստեղ կատարված հաշվարկներով գրանցել ենք 37-39 տեսակ թռչուններ: Բնակավայրերն իրենցից ներկայացնում են շատ անհամասեռ լանդշաֆտներ: Այստեղ տեսակների առավել բազմազանություն ընդգծվում են կառույցներում և հանդիպում են ինչպես անթրոպոֆիլ տեսակներ, տնային ճնճղուկներ, թխակապույտ աղավնիներ, այնպես էլ անտառային բնակիչներ՝ փայտփորներ, սիտեղներ, երաշտահավեր և այլն: Երբեմն հանդիպում են նաև սրնգահավեր, կարմրակատարներ: Մեծ քանակությամբ թռչուններ (օղակավոր տատրակ, անտառային աղավնի, կեռնեխներ, եղջերավոր արտույտներ, տնային և դաշտային ճնճղուկներ) ձմեռում են կերի պահեստներում: Ի տարբերություն վերը թվարկած բոլոր վայրերի՝ բնակավայրերի եզրային սահմաններում թռչունների բնակեցման

խտությունը համեմատաբար ցածր է, սակայն տեսակային բազմազանությունը՝ բարձր: Թռչունների կառուցվածքում նվազում է տնային և դաշտային ճնճղուկների, թխակապույտ աղավնիների, եղջերավոր արտույտների բաժինը: Առանձնյակների մեծամասնությունը բնակավայրերում մնում է որպես նստակյաց, սակայն տեսակների որոշ խումբեր կատարում են օրական քոչեր: Սերմնաքաղերը, կաչաղակները, ճնճղուկները և մոխրագույն ազռավները կերի հայթայթման համար բնակավայրերի տարածքում կատարում են ամենօրյա տեղափոխություններ, իսկ գիշերելու համար կրկին վերադառնում են բնակավայրեր: Այդպիսի կարճատև քոչերը սովորաբար լավ նկատելի է նոյեմբեր-հունվար ամիսների նպաստավոր եղանակներին, իսկ սառնամանիքների կամ ուժեղ քամիների ընթացքում լքում են բնակավայրերի սահմանները:

Բնակելի շինությունների շրջանում, երթուղիների 1կմ-ում արձանագրվում են 8-9 տեսակ թռչուն, իսկ կայունությունը գնահատվում է 10-18 առանձնյակ/հա: Բնակավայրերի եզրային շերտերում այդ ցուցանիշները կազմում են 4-6 տեսակ/կմ, իսկ կայունությունը՝ 1-8 առանձնյակ/հա:

Նախագարնանային շրջանում սեփական տների, տնտեսական կառույցների շրջանում, ինչպես նաև անտառաշերտերում կամ այգիներում թռչնաֆաունայի տեսակային կազմը և կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվում, քանի որ քոչող կամ չվող թռչունները գերադասում են կերակրվել կամ հանգստանալ այն վայրերում, որտեղ իրենց քիչ են անհանգստացնում: Բնակավայրերի եզրամասերում թռչունների քանակությունը և տեսակային բազմազանությունը ավելանում է արդեն փետրվարի վերջերին, որի պատճառը, մեր կարծիքով, մեծ քանակությամբ ավտոմայրուղիների առկայությունն է, որտեղ ձյան հաստությունը մեծ չէ և ձնհալն ավելի շուտ է սկսում, քան նրա շրջակայքի ագրոցենոզներում: Այստեղ սնվում են ամուրիկները, երաշտահավերը, իսպանական ճնճղուկները, սովորական կարմրատուտները, եղջերավոր, դաշտային արտույտները, անտառային կաչաղակները: Այդ ընթացքում նկատվում է նաև սերմնաքաղերի, մոխրագույն ազռավների, կաչաղակների տեղափոխություն դեպի իրենց ապագա բնադրավայրեր: Այսպիսով բնակավայրերում տեսակային բազմազանությունը նախագարնանային շրջանում ավելանում է և ձմեռայինի համեմատությամբ կազմում է 13-15 տեսակ/կմ: Բնակելի կառույցներում թռչունների խտությունը նվազում է մինչև 9-19 առանձնյակ/հա, իսկ պարկի տարածքի եզրային գյուղերում՝ 3,4-17,2 առանձնյակ/հա:

Նախաբնային շրջանում բնակելի տարածքները բնութագրվում են թռչնատեսակների թվի աննշան ավելացումով: Գաղթի առաջին ալիքն այստեղ թույլ է արտահայտվում: Միայն ամուրիկները, երաշտահավերը, դաշտային արտույտները հազվադեպ կարող են կանգնել հանգստի ու կերակրման համար: Բնակավայրերի եզրերին, ընդհակառակը, մարտի կեսերին հավաքվում են եղջերավոր արտույտները, դեղին խաղտոմիկները, կարմրախածի ձիաթռչնակները, սևազուլխ չքչքանները, փոքր ճանճորսները, կռեռեխները: Գաղթի երկրորդ ալիքին, բնակավայրերում ձմեռած տեսակներին ավելանում են սպիտակ խաղտոմիկները, սև և երգող կռեռեխները, սովորական քարաթռչնակները, սևազուլխ և դաշտային դրախտապանները, աշալույսիկները, կարմրատուտները: Բնակավայրերի եզրային սահմաններում թվարկած տեսակներին ավելանում են նաև ժուլանները, շամփրուկները, սովորական սոխակները:

Գաղթի երրորդ ալիքն էապես փոխում է թռչունների արդեն մասամբ ձևավորված բնադրավայրերը: Բնակելի և տնտեսական կառույցներում արդեն հայտնվում են գյուղական ծիծեռնակները, մանգաղաթևերը, կապտափող սոխակները, սպիտակավիզ ճանճորսերը: Ծառերի և թփուտների վրա բնադրվում են պիրոլները: Ամբողջ նախաբնային շրջանում թռչունների տեսակների թիվը և խտությունը աստիճանաբար ավելանում է և մայիսի սկզբներին կազմում է 15-17 տեսակ/կմ ու 18-42,5 առանձնյակ/հա: Բնակավայրերում կերի կայուն քանակը, կառուցվածքային բարդությունը և տարածական անհամասեռությունը պայմանավորում են թռչունների՝ այստեղ կայուն բնադրավայրերի բնակեցման ձևավորմանը: Նստակյաց տեսակների մեծամասնությունը ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին սկսում են թխսել, իսկ չվող տեսակները սկսում են բնային տարածքներ յուրացնել մայիսի առաջին տասնօրյակում:

Բնակելի շինությունների գոտիներում բազմաթիվ են դառնում տնային ճնճղուկները, գյուղական ծիծեռնակները, ամուրիկները, մեծ և փոքր երաշտահավերը, օղակավոր տատրակները, հոպոպները, տնային բվիկները, խայտաբղետ փայտփորիկները, առափնյա ծիծեռնակները, սև մանգաղաթևերը, որոնք և բոլոր տեսակների մեջ հանդիսանում են թվաքանակով գերակշռող: Ծառաթփուտային բուսականությունում (պուրակներում, անհատական այգիներում, անտառաշերտերում) բարձր խտություն են ունենում ամուրիկները, սերմնաքաղերը, սևազուլխ դրախտապանները: Ազգային պարկի այն եզրաշերտերում, որտեղ առկա է գործող կամ լքված անասնաֆերմաներ, կերի պահեստներ կամ այլ տնտեսական շինություններ, կենցաղային աղ բի թափոններ գերակշռում են դաշտային ճնճղուկները, գյուղական ծիծեռնակները, խայտաբղետ ճանճորսերը, կարմրակատարները, կաչաղակները, հոպոպները, եղջերավոր և դաշտային արտույտները:

Ընդհանուր առմամբ բնակավայրերում օրնիտոֆաունայի տեսակային բազմազանությունը և առավել բարձր խտությունն արձանագրվում է բնային շրջանում: Մեր դիտարկումներով Նարեշտարի և Դաշտագլխի տարածքում հաշվարկել ենք 72 տեսակ և առավելագույն խտությունը կազմել է 112 առանձնյակ/հա: Արտաշավի, Վաղազին համայնքներում այդ ցուցանիշները համեմատաբար կազմել է 86 և 134 առանձնյակ/հա: Այստեղ տեսակների մեծ քանակը և բնակեցման բարձր խտությունը, մեր

կարծիքով, պայմանավորված է բնակչության համեմատաբար խիտ բնակեցմամբ ու տնտեսական գործունեությամբ: Այդ ընթացքում ծառաթփուտներում թռչունների տեսակային կազմը և բնակեցման ու բնադրման խտությունը նույնպես բարձր է լինում:

Հետքնային շրջանում թռչունների համակեցության կառուցվածքը և կազմը բնականաբար փոխվում է: Արդեն մատղաշների ի հայտ գալը նպաստում է բնակեցման խտության բարձրացմանը: Հուլիս-օգոստոս ամիսներին նկատվում է թռչունների բնակեցման սահմանների խախտում: Կերի հայթայթման համար թռչունները կատարում են ակտիվ տեղափոխություններ՝ բնակավայրերից դեպի եզրային սահմաններ, այնտեղից՝ ագրոցենոզներ և հակառակը: Այդ շրջանում տեսակային բազմազանության պահպանության առաջատար դերը կատարում են անթրոպոգեն լանդշաֆտների կառուցվածքի որոշ տարրեր: Օրինակ, որոշ քանակությամբ թռչուններ խտացվում են գյուղամերձ աղբանոցներում, լքված ֆերմաներում, տների տանիքներում, պահեստներում: Հետքնային շրջանում 1կմ հաշվարկային երթուղում արձանագրվում է 14-17 տեսակ, իսկ խտությունը՝ 4,3-17,2 առանձնյակ/հա:

Բնակավայրերում, ի տարբերություն մյուս ասպեկտների, առավել ցածր խտություն արձանագրում ենք միգրացիոն շրջաններում: Այդ վայրերում մնում են միայն նստակյացները, օրինակ, կաչաղակները, սև ու մոխրագույն ագռավները, տնային ճնճղուկները, մեծ երաշտահավերը, փայտփորները: Բացառություն են կազմում այն բնակավայրերը, որտեղ առկա են ջրամբարներ, լճակներ, գետեր: Շրջանի ավարտին օրնիտոֆաունան հարստանում է այստեղ տեղափոխված ձմեռող թռչունների հաշվին, ինչպիսիք են մորակտցարը, վարսակտցարը, կրկնակտցարը, անտառակտցարը:

Այսպիսով՝ տարվա բոլոր սեզոններին կատարված ուսումնասիրություններով բոլոր կենսամիջավայրերում բնակվող թռչունների հիմքը մեծամասամբ կազմում են լայնատերև անտառների տեսակները, իսկ լեռնատափաստանների և ազոնալ ֆաունիստական համալիրները փոքր-ինչ աղքատ են ու մնում են կայուն: Վերլուծելով վերը նշված նյութը՝ կանգ առնենք ազգային պարկի թռչունների բնակեցման դինամիկայի հանգուցային առանձնահատկությունների վրա: Առայսօր կատարված ուսումնասիրությունների արդյունքում հաշվարկային երթուղիներում, ստացիոնարներում և կիսաստացիոնարներում հաշվարկել ենք 128 տեսակ թռչուն: Սակայն պարկի տարբեր հատվածներում ձմեռային, նախագարնանային, նախաբնային և հետքնային շրջաններում տեսակների թիվը ենթարկվում է փոփոխությունների: Տեսակային առավել մեծ բազմազանություն բնորոշ է ջրամերձ և բնակավայրերին մոտ տարածքներում:

Թռչունների բնակեցման խտությունը ուժեղ փոփոխվում է տարվա ընթացքում: Այսպես՝ գարնանային և աշնանային միգրացիաների շրջանում, տարվա ընթացքում պարկի տարածքի հետ կապը չընդհատող, նստակյաց առանձնյակների բաժինը չի գերազանցում թռչունների զունարային թվի 3-5%-ը: Այդ շրջանում խտության հստակ գնահատական դժվար է տալ, քանի որ առկա են մեծ քանակությամբ միգրանտներ: Չմռանը պարկի տարածքում մնում են հիմնականում նստակյացները և ձմեռողները, այդ ընթացքում կայունության ցուցանիշները չեն գերազանցում 0,6-4,2 առանձնյակ/կմ², բացառությամբ բնակավայրերի տարածքը, որտեղ խտությունը տատնվում է 0,8-19,2 առանձնյակ/հա:

Գարնան ավարտին և ամռան սկզբին ազգային պարկի տարածքում ձևավորվում է կայուն բնային բնակեցվածություն: Այստեղ առաջատար դերը պատկանում է բուսական ծածկույթին, ջրաբանական պայմաններին և անթրոպոգեն գործոններին:

Մոխրագույն տառեղ *Ardea cinerea* (նկ.1)

Մարմնի երկարությունը կազմում է 80-106 սմ, հազվադեպ՝ նաև 145-185 սմ: Մարմինը ունի մոխրագույն գունավորում ունեցող փետրավորում: Թևերի ծայրերը, կրծքի և որովայնի կողային հատվածները և պարանոցով երկայնակի անցնող շերտերը ունեն սև գունավորում: Սպիտակ է միայն փորի հատվածը: Ոտքերն ու կտուցը երկար են, դեղնագորշավուն, աչքերը դեղին են, իսկ նրանց շրջափակող օղակը՝ կանաչավուն: Կենդանի քաշը կազմում է 1,1-2 կգ: Էգերը համեմատաբար ավելի փոքրամարմին են:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց: Ազգային պարկում զբաղեցնում են գետափերը, ճահճուտ վայրերը, երբեմն կարելի է հանդիպել նաև չոր մարգագետիններում: Չմայած ունեն տարածման լայն արեալ, այնուամենայնիվ, մեր պայմաններում համարվում են հազվադեպ հանդիպող տեսակ: Գտնվում է խոցված վիճակում (ՎՍ): Բնադրվում են առանձին զույգերով կամ կազմում են գաղութներ: Ապրիլ ամսին դնում են 4-5 երկնականաչավուն երանգով ձվեր: Թխսի տևողությունը 26-28 օր է, թխում են երկու զույգերը: Չագերը սկսում են թռչել 55-60 օրականում:

Մոխրագույն տառեղը մեծամասամբ սնվում է կենդանի սնունդով: Նրա կերակրացանկի հիմնական մասը կազմում են ձկները: Սնվում են նաև գորտերով, տարատեսակ մանր



կաթնասուններով, ինչպես օրինակ՝ կրծողներ (գետնասկյուռները ներառյալ), սողուններով, շերեփուկներով, միջատներով:

Ն4.1 Մոխրագույն տառեղ

Գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել նրանց վնասակար լինելու մասին, որը տառեղը հասցնում է թանկարժեք ձկների գլխաքանակին, հատկապես ձկնաբուծական տնտեսություններում: Այդ պատճառով անցյալում (1980-ականներ), բայց երբեմն ներկա ժամանակներում մոխրագույն տառեղներին վնասել են՝ տարբեր մեթոդներով նվազեցնելով նրանց թվաքանակը: Բայց վերջին տարիների հետազոտություններն ապացուցել են, որ այս տառեղի հասցրած վնասը չափազանց փոքր է, և որ տառեղին կարելի է համարել օգտակար, քանի որ սանիտարի դեր է կատարում սնվելով ձկներից վնաս հասցնող մակաբույծներով:

Սպիտակ մեծ տառեղ *Ardea alba* (նկ.2)

Խոշոր թռչուն է, երկար ոտքերով ու կտուցով: Աչքն ամբողջությամբ դեղին է, փետրավորումը՝ սպիտակ, ոտքերը և կտուցը սև են: Ամռանը միայն կտուցի հիմքն է դեղնում, իսկ ձմռանն ամբողջ կտուցը: Գարնանը մեջքի վրա ունի երկար, նոսր ու կոշտ (30-40 հատ) հովհարած կփետուրներ, որոնք հասնում են մինչև պոչը: Քաշը՝ 1-1.5 կգ է:

Սպիտակ մեծ տառեղն ունի հանդիպման հազվագյուտ հաճախականություն (UV, DD): Հանդիպում են ազգային պարկի գետահովիտների ծանծաղուտ վայրերում, ճահճացած հատվածներում: Անընդհատ կատարում է տեղափոխություններ և կլոր տարին համարվում է չվահյուր: Ամեն տարի մեծ սպիտակ տառեղները երամներով ձմեռում են Սարսանգի և Մատաղիսի ջրամբարներում, կարելի է հանդիպել նաև Խաչենի ջրամբարում:

Այս թռչունների մոտ սեռական հասունացումը վրա է հասնում երկու տարեկանում: Դրանք համարվում են սեզոնային մոնոգամներ, այսինքն՝ զույգերը կազմում են միայն մեկ ամուսնական սեզոնի համար (Elphick, Chris, John Dunning, and David Allen Sibley, 2001): Տարվա մեջ ունենում են մեկ սերունդ, բազմանում են գարնանը կամ աշնանը, երբ առկա է առատ կեր: Բնադրավայր առաջինը տեղափոխվում են արուները և ընտրում բնադրավայրը: Հիմնականում բնադրվում են գաղութներով: Բները սկսում են կառուցել զույգերի ձևավորումից անմիջապես հետո: Սակայն տառեղները գաղութներում հաճախ փոխում են իրենց բները: Դրանք բները մեկ տեղում կուտակած շիվերի և ճյուղերի կույտեր է, որոնք կարող են պահպանվել մի քանի տարի, չնայած գաղութը կարող է տեղափոխվել այլ շրջան կամ ծառ:

Էգը, 2-3 օր միջակայքով, դնում է 3-6 կապտականաչավուն, մոտ 57-60մմ երկարությամբ ձվեր: Թխսում է ինչպես էգը, այնպես էլ արում: Թխսի տևողությունը 23-26 օր է: Ճտերը ծնվում են կույր, մերկ



Նկ. 2, Սպիտակ մեծ տառեղ

անօգնական: Եթե կերի առումով տարին նպաստավոր է ապա ամբողջ սերունդը փետրածածկվում է և զոյատևում, մյուս դեպքերում՝ մեկ կամ երկու ճուտ, մնացածը մահանում են: Ճուտերը լրիվ փետրածածկվում են 42-49 օրականում: Ճուտերը սկսում են թռչել մոտ 7 շաբաթականում, բայց ծնողներից կախված են մնում 10-11 շաբաթ: Սնվում են գորտերով, օձերով, ձկներով, կրծողներով, տարբեր հողվածոտանիներով:

Տափաստանային ճուռակ *Butte rufinus* (նկ.3)

Տափաստանային ճուռակների չափերը հասնում են 57-65 սմ-ի, իսկ թևերի բացվածքը՝ 135-160 սմ: Տափաստանային ճուռակի թևերի երկարությունը և ձևը նրան տալիս է արծվի տեսք:



Նկ. 3 Տափաստանային ճուռակ

Տափաստանային ճուռակը հեշտությամբ կարելի է շփոթել ճուռակների այլ ենթատեսակ Buteo Buteo vulpinus-ի հետ, բայց տափաստանային ճուռակը ավելի մեծ է և ունի ավելի լայն թևեր: Տափաստանային ճուռակը նույնպես նման է ոսկրոտ կտուցով ճուռակի, բայց վերջինս փետուներում երբեք կարմրավուն երանգներ չունի: Տափաստանային ճուռակների արտաքին տեսքը բազմաձև է: Տափաստանային ճուռակների գլուխն ու կրծքավանդակը բաց գույնի են: Թևերի թեթև փետուրները նույնպես չեն խաչաձևվում, բայց ծայրերում մուգ են: Դրանց ձայնը նման է սովորական ճուռակի արձակած ձայնին, բայց ավելի երկար է, չնայած որ տափաստանային ճուռակը, ընդհանուր առմամբ, ավելի լուռ է:

Տափաստանային ճուռակներ հիմնականում զբաղեցնում են լեռնային տարածքները և բաց լանդշաֆտները, ինչպես նաև տափաստանները և կիսաանապատները: Այս թռչունների համար բնակության վայր են հանդիսանում նաև անապատները, որտեղ կա առատ որս: Ազգային պարկի տարածքում համարվում են քիչ տարածված (UV) և հանդիպում են անտառաբացատներում, լեռնատափաստաններում ու մարգագետիններում: Մեր կողմից կատարված դիտարկումներով պարզել ենք, որ դրանք կարող են կատարել սեզոնային քոչեր կամ հանդես գալ որպես պարբերաբար քոչեր կատարողներ: Մեր պայմաններում բների կառուցման համար օգտագործվում են ժայռերի զագաթները, սանդղավանդերը, ինչպես նաև ծառերի կատարները, այսինքն՝ նախընտրում է բույն կառուցել բարձրադիր վայրերում, որտեղից կարող է լավ դիտարկել շրջակայքը: Որպես կանոն, տափաստանային ճուռակները ապրիլի սկզբին բնում դնում են երկուսից հինգ ձու: Չվից նոր դուրս եկած ճուռիկները մնում են բնի մեջ մինչև 50 օր, որից հետո հունիսի վերջին սկսում են թռչել:

Տափաստանային ճուռակների կերաբաժինը հիմնականում կազմված են փոքրիկ կաթնասուններից, որտեղ գերակշռում են կրծողները: Տափաստանային ճուռակները որսում են նաև սողուններ, երկկենցաղներ և միջատներ, ինչպես նաև մորեխներ: Չմռանը, երբ որսը հազվադեպ է տափաստանային ճուռակները սնվում են նաև թափված մնացորդներով: Նա իր զոհին բռնում է թռիչքի ժամանակ և երբեմն նույնիսկ հետապնդում է գետնին:

Փոքր ենթարծիվ *Aquila pomarina* (Նկ 4)

Ունեն փոքր չափեր և համարյա հավասար են ջրարծիվին: Մարմնի երկարությունը 58-65 սմ է, թևերի բացվածքը՝ 135-165սմ, քաշը՝ մինչև 2կգ, էգերը փոքր- ինչ խոշոր են արուներից: Նստած թռչնի



Նկ. 4. Փոքր ենթարծիվ

մոտ ծալած թևերի եզրերը դուրս են գալիս պոչի սահմաններից: Հասուն թռչունների երանգը գորշա-չազանակագույն է, գլուխը, ենթապոչը և վերնապոչը համեմատաբար բաց: Թափափետուրներին առկա են սպիտակ բծեր: Թռչելիս տեսանելի են թևավերևի և պոչի հիմքի մանր սպիտակ բծերը, թևավերևի և թևատակի ծածկողները գույնով ավելի բաց են, քան թափահարողները: Ճախրող

թռչունները թևերը իրանի նկատմամբ պահում են հորիզոնական: Պոչը համեմատաբար երկար է և թեթևակի կլորավուն: Ընդհանուր առմամբ թռիչքը խուսանավող է:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող, չվող և գտնվում են անհետացման վտանգի տակ (EN): Այս տեսակի պոպուլյացիաների համար վտանգ են ներկայացնում ցանկացած տիպի անհանգստությունները, անտառահատումները, հրդեհումները, գետերի հունների փոփոխությունները, որի արդյունքում ճահճացած հատվածները չորանում են և այլն: Գերադասում են բնակություն հաստատել անտառաբացատներում, ժայռոտ ու բլրոտ վայրերում, խոնավ տարածքներում, բնադրվում են ծառերի ճյուղերին: Սկսում են ձվադրել ապրիլի երկրորդ կեսից: Բնում ունենում են 2 ձու: Թխսում են միայն էգերը: Տարվա մեջ ունենում են մեկ սերունդ: Չափերին կերակրում են 48-55 օր: Սնվում են կրծողներով, միջատներով, այլ թռչուններով: Ենթակա են պահպանության:

Մեծ ենթարծիվ *Aquila clanga* (ՎՊ. 5)



Նկ. 5 Մեծ ենթարծիվ

Մեծ ենթարծիվը իր ցեղի տիպիկ ներկայացուցիչն է: Դրանք միջին չափերի թռչուններ են, որոնք իրենց ճկնությամբ չեն զիջում ցեղի մյուս ներկայացուցիչներին: Դրանց մարմնի երկարությունը 75-80սմ է, թևերի բացվածքը՝ 160-185սմ, քաշը մինչև 3,3կգ: Մեռական երկձևությունը կայանում է նրանում, որ էգերը սովորաբար խոշոր են արուներից: Փետրածածկի երանգը գորշ է, միայն ծոծրակն ու ենթապոչն ունեն բաց երանգ:

Ազգային պարկի տարածքում հանդիպում ենք լեռնատափաստաններում, թփուտածակ վայրերում: Ամբողջ տարին չվահյուր են, սակայն բավականին հազվագյուտ (EN): Մեր պայմաններում կատարում են սեզոնային քոչեր. աշնանը կարելի է հանդիպել ցանքատարածքներում, գարնանը՝ լեռնային մարգագետիններում: Բնադրվում են բարձրացողուն ծառերին, որոնք գտնվում են գետահովիտներում կամ ճահճացած տարածքներում: Ապրիլի առաջին կեսերին էգը դնում է երկու ձու և այն թխսում 40 օր: Չափերը բները լքում են 8-9 շաբաթականում: Սնվում են կրծողներով, նապաստակներով, միջատներով, թռչուններով: Ենթակա է պահպանության:

Քարարծիվ *Aquila chrysaetos* (Նկ. 6)

Խոշոր, բավականին լայն թևերով ու համեմատաբար երկար ու թույլ կլորավուն պոչով արծիվներ են: Փետրածածկի գունավորումը սևագորշավուն է, ծոծրակին և պարանոցի հետին կողմին սրված մի քանի ավելի բաց ոսկե-դեղնավուն փետուրներով: Փորի և ազդրերի երկար փետուրները գորշ գույնի «տաբատ» է առաջացնում: Կրկնաթաթը մինչև մատները նույնպես փետրածածկ են: Արուները չափերով փոքր են, քան էգերը: Արուները կշռում են 2,8-4,5կգ, իսկ էգերը՝ 3,8-5,8կգ: Արուների մարմնի երկարությունը՝ 82-91 սմ է, էգերինը՝ 89-102 սմ, թևերի բացվածքը (երկու սեռի մոտ)՝ 180-220 սմ: Արցախի ֆաունայում նստակյաց են, սակայն գտնվում են կրիտիկական վիճակում (CR): Ազգային պարկում հանդիպում են լեռներում, խոր ձորերում, անտառներում, տափաստաններում, ալպյան մարգագետիններում: Աշնանը իջնում են հացահատիկի ցանքատարածքներ: Բնակատեղերում հիմնականում հանդիպում են զույգերով և դրսևորում են կապվածություն բնակատեղերի հետ: Բնադրավայրերում հայտնվում են փետրվարի կեսերին: Դրանց կտղուցքը սկսում է դեռևս ձյունը չհալած: Փետրվարի վերջին քարարծիվները սկսում են բների կառուցումը և մարտի սկզբներին հենց բնում էլ զուգավորվում: Բները կառուցում են ծառերին: Չվադրում են մարտին, երբեմն փոքր-ինչ ուշ:

Տարվա մեջ ունենում են մեկ սերունդ: Բնում ունենում են երկու ձու: Հիմնականում թխսում է էզը՝ 43-45 օր: Էգի թխսի ընթացքում արուն կերակրում է նրան: Ճտերը դուրս են գալիս ապրիլի վերջին, մայիսի սկզբներին: Ճտերը թռչել կարողանում են հուլիսի կեսերին՝ մոտ 75 օրականում: Աշնանը ճտերը վարում են ինքնուրույն կենսակերպ: Սնվում են կրծողներով, նապաստակներով, աղվեսներով,



Նկ. 6, քարարծիվ
տարբեր խոշոր թռչուններով: Ենթակա են պահպանության:

Սպիտակապոչ արծիվ *Haliaeetus albicilla* (7)



Նկ. 7, Սպիտակապոչ արծիվ

Թևավոր գիշատիչներից ամենախոշորն է: Թևերի բացվածքը 250 սմ է, մարմնի երկարությունը՝ 70-90 սմ, քաշը՝ 4-7 կգ: Փետրածածկը վերևից գորշ է, ներքևից՝ թեթևակի բաց, թափափետուրները՝ սևագորշ, պոչը՝ մաքուր սպիտակ՝ այդ տեսակներին բնորոշ առանձնահատկություն: Գլխի համեմատմամբ կտուցը բավականին մեծ է: Արցախի ֆաունայում կլոր տարին չվահյուր է, ձմեռող, հազվագյուտ ու անհետացող (EN):

Բնադրավայրերում հայտնվում են փետրվար մարտ ամիսներին և անմիջապես սկսում բների վերանորոգումը կամ կառուցումը: Բները կառուցում են բարձրացողուն ծառերին: Բներն ունենում են մոտ 2 մ տրամագիծ: Բնում ունենում են 1-3 ձու, թխսում են մոտ 30 օր: Էկոլոգիան մանրակրկիտ ուսումնասիրությունների կարիք ունի: Ենթակա է պահպանության:

Օձակեր արծիվ *Circaetus gallicus* (8)



Նկ. 8 Օձակեր արծիվ

Բավականին խոշոր թռչուն է, փետրածածկը վերևից ունի գորշ երանգ, ներքևից՝ բաց, գորշ բծերով, պարանոցը և կուրծքը գորշ են: Պոչին առկա են 2-3 լայնակի շերտեր: Մարմնի երկարությունը 65-75 սմ է, թևերի բացվածքը՝ 160-180 սմ, կենդանի քաշը՝ 1,5-1,8կգ, էգերը խոշոր են արուներից:

Արցախի ֆաունայում բնադրող չվող է և ունի հանդիպման ցածր հաճախականություն ու գտնվում է խոցված (VU) վիճակում: Հետ վերադառնում են մարտի վերջերին կամ ապրիլի առաջին կեսերին: Ազգային պարկի տարածքում նախընտրում են բնադրվել ծածուկ վայրերում: Բները կառուցում են բարձրացողուն ծառերին: Մեր դիտարկումներով օձակեր արծիվները կապված են իրենց հին բների հետ, որովհետև ոչ թե կառուցում են նոր բներ, այլ հինն են վերանորոգում: Դրանց բները հաստ շիվերից փուխր կառույցներ են, որոնց չափերը մեծ չեն, այնպես որ թխսած էգի գլուխը, կրծքի և պոչի մի մասը նկատելի է: Բնում ունենում են մեկ ձու, ձվադրում են ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբին, թխսի տևողությունը 40-42 օր, ճտերը բները լքում են 60-65 օրականում: Ազգային պարկի տարածքում, ամբողջ դիտարկումների ընթացքում հայտնաբերել ենք բնադրող երեք զույգ:

Գիշատիչ ստենոֆագեր են: Սնվում են սողուններով, երկկենցաղներով, օձերով, կարող են սնվել նաև մանր կաթնասուններով: Ենթակա են պահպանության:

Գերեզմանարծիվ *Aquila heliaca* (9)

Բավականին խոշոր, քարարծիվից փոքր ինչ մանր, արծիվներ են, պոչը և թևերը կարճ են: Մարմնի երկարությունը 70-85 սմ է, թևերի բացվածքը՝ 170-210 սմ, քաշը՝ 2,5-4,5 կգ: Սրունքներին լավ է զարգացած փետրածածկ «տաբատը»: Փետրածածկը մուգ գորշավուն է, «բաշը»՝ դեղնահարդավուն, ուսափետուրներին առկա են սպիտակ փոքր բծեր: Արցախի ֆաունայում համարվում է բավականին հազվագյուտ և խոցված (VU):

Գերադասում են բնակվել լեռնատափաստաններում կամ անտառատափաստաններում: Բնադրման համար նախընտրում են բարձր ծառերը, հազվադեպ՝ թփուտները կամ հեղեղատները: Բներն ունենում են մոտ մեկ մետր տրամագիծ: Բնում ունենում են 2, երբեմն 3, ձու, որին հիմնականում

թխսուն է էզը, սակայն թխսին մասնակցում են նաև արուները: Թխսի տևողությունը 40-45 օր է: Գտերը



Նկ. 9. գերեզմանարծիվ

բները լքում են 9-11 շաբաթական հասակում, սակայն որոշ ժամանակահատվածում մնում են ծնողների հետ:

Չնայած անվանում են գերեզմանարծիվ, նրա կերաբաժինը հիմնականում կազմված է դաշտամկներից, գետնասկյուռներից, համատերներից, միայն գարնան սկզբներին կան աշնան վերջերին, երբ մանր կրծողները մտնում են բները, կարող են սնվել լեշերով: Ենթակա են պահպանության:

Գաճաճ արծիվ *Hieraaetus pennatus* (նկ. 10)

Փոքր չափերի թռչուն է: Սարմնի վերին հատվածը գորշաշագանակագույն է, իսկ



Նկ. 10 գաճաճ արծիվ

ուսափետուրները՝ բաց դեղին կամ սպիտակավուն գունավորում ունեն: Թևերի վերին հատվածի վրա կան մանր բաց դարչնագույն նախշեր: Պոչը երկար է՝ ավելի մուգ գույնի ծայրով: Մարմնի երկարությունը՝ 40 – 55 սմ է, թևերի բացվածքը՝ 90 – 120 սմ, կենդանի զանգվածը՝ 600 – 800 գրամ: Արցախի ֆաունայում բնադրող չվող է, համարվում է խոցված տեսակ (VU):

Բնակվում են խառը և լայնատերև անտառներում, հարթավայրերում, որտեղ կան բարձրաբուն ծառեր: Ամառվա վերջին դրանց կարելի է հանդիպել հնձված ցանքատարածքներում: Ազգային պարկի տարածքում բնադրվում են բարձր ծառերի վրա: Բույնը միջին չափսերի է 60-70 սմ տրամագծով, մեկ բույնը կարող է օգտագործվել մի քանի տարի: Չվադրում է մայիս-հունիսին՝ դնելով կանաչասպիտակավուն, երբեմն ոչ շատ կարմրավուն բծերով 1-2 ձու: Թխսակալում է եզը, հենց առաջին ձվից՝ 35 օր: Հուլիսի վերջերին օգոստոսի սկզբներին ծտերը լքում են բույնը:

Սնվում են մանր կաթնասուններով՝ նապաստակներ, գետնասկյուռներ, երբեմն սողուններով, թռչուններով: Ենթակա են պահպանության:

Գիշանգո *Neophora percnopterus* (նկ 11)

Երիտասարդների փետրածածկը բաց գորշագույն է կամ բաց դարչնագույն: Հասակավոր առանձնյակները հաճախ կեղտոտ սպիտակ են, թևերի փետուրները՝ սև գույնի: Տեսակի կտուցը երկար



Նկ. 11. գիշանգո

է, դեղին գույնի, ծայրը ծոված դեպի ներքև: Մագիլները բութ են: Դիմային նարնջագույն մաշկը փետրագուրկ է: Մարմնի երկարությունը՝ 65 – 70 սմ է, թևերի բացվածքը՝ 150 – 178 սմ, կենդանի զանգվածը՝ 2-2,5 կգ: Արուների և էգերի գույնը միանման է:

Արցախի ֆաունայում բնադրվող չվող են, երբեմն նաև ձմեռում են: Բնակվում են լեռների և նախալեռների չոր լանդշաֆտներում: Նախընտրելի բնակավայրերից են նաև գետահովիտները: Բարձրանում են մինչև 3500 մ բարձրությունները: Ազգային պարկի տարածքում հանդիպում ենք կիրճերում, ժայռագագթներում: Ամենուր վտանգված են (EN):

Բնադրում են ժայռերի վրա, զառիթափերում, մարդկային շինությունների փլվածքում, երբեմն կարող են բնադրվել ծառերի վրա: Բնում ունենում են 2, հազվադեպ 1 դեղնասպիտակավուն թանձր գորշակարմրավուն բծերով ծածկված ձու: Թխսում են երկու զույգերը: Թխսի տևողությունը մոտ 40 օր է: Չագերին կերակրում են 85 օր

Սնունդը փնտրում են թռիչքով: Սնվում են լեշերով, թափոններով, սնվում են նաև սողուններով, ձվերով: Բավականին զգույշ թռչուն է: Ենթակա են պահպանության:

Գառնանգղ *Gypaetus barbatus* (նկ.12)

Խոշոր գիշատիչ թռչուն է: Թևերը և պոչը երկար են: Պոչի ծայրը սեպածն է: Մարմինը վերևից դարչնագույն է կամ սև գույնի, իսկ կուրծքը՝ դեղնաշիկավուն է: Գլխի վրա աչքերի ուղղությամբ անցնում է սև բիծ: Գլուխը և պարանոցը ծածկված են վրձնանման փետուրներով, ստորին ծնոտի տակ փետուրներից մորուք ունի: Կտուցը կողքերից սեղմված է, երկարացված և ծայրում ծռված: Ուտերը փետրածածկված են մինչև մատերի հիմքը: Մարմնի երկարությունը հասնում է 98-120 սմ-ի, թևերի բացվածքը՝ 255 -278 սմ, կենդանի զանգվածը՝ 4,8-6 կգ: Սնվում են լեշերով, թռչուններով, վայրի և ընտանի կենդանիներով:



Նկ. 12 գառնանգղ

Արցախի ֆաունայում նստակյաց են, ամենուր քչաքանակ, վտանգված տեսակ է (EN): Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են խոր կիրճերը, լեռնագագաթները: Գառնանգղերի բազմացումը սկսվում է դեռևս փետրվարին: Բնադրվում են ժայռերի ճեղքերում կամ քարանձավներում: Դնում են 2 ձու, սակայն ճտերից աճում և զարգանում է մեկը: Չուն բղետ է, ճտերը դուրս են գալիս ապրիլին, լրիվ փետրակալում են հունիսի վերջերին և հուլիսի սկզբներին: Ծնողների հետ մնում են մինչև աշուն: Թխսում է եզը, թխսի տևողությունը մոտ 2 ամիս է: Ենթակա են պահպանության:

Սև անգղ *Aegypius monachus* (նկ.13)



Նկ 13 սև անգղ

Պարանոցը մերկ է: Գլուխը խոշոր ու ծածկված աղվափետուրներով, կտուցը կողքերից սեղմված է և զանգվածեղ: Վերնակտուցը երկար է և ունի սուր կեռիկ: Քթանցքերը լայն են և կլոր: Մաշկը կապտաերկնագույն է, պարանոցի հիմքում օձիք ունեն: Ընդհանուր փետրավորումը մուգ գորշագույն է, թևերի թափահարող փետուրները սև են: Լեշակեր թռչուններ են: Մարմնի երկարությունը 75-100 սմ է, թևերի երկարությունը՝ 72-85 սմ, թևերի բացվածքը՝ 250-295 սմ: Հասուն թռչունը ունի մուգ

շագանակագույն գունավորում, իսկ երիտասարդ թռչունները ավելի սև են՝ կապտավուն փետրագուրկ կոկորդով: Պոչը կարճ է՝ բութ ծայրով: Կենդանի քաշը տատանվում է 6,5 կգ-ից մինչև 11 կգ:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և գտնվում է անհետացման եզրին (EN): Ազգային պարկի տարածքում արձանագրել ենք երկու զույգ: Բնադրվում են ծառերին, երբեմն ժայռերին: Հարթավայրային գոտում, երբ պայմանները նպաստավոր են, նաև՝ գետնին: Բնի տրամագիծը 1,7- 2մ է: Դնում են 1-2 ձու, որոնց սպիտակ երանգի վրա առկա է կարմրագորշավուն բծեր: Թխսում են երկու զույգերը, թխսի տևողությունը 55 օր է: Ենթակա են պահպանության:

Սպիտակագլուխ անգղ *Gyps fulvus* (նկ.14)

Գլուխը համեմատաբար խոշոր է, ծածկված սպիտակ աղվափետուրներով: Կտուցը կողքերից սեղմված է, նրա վրա գտնվում են լայնակի ճեղքանման քթանցքերը: Սեռական դիմորֆիզմ արտահայտված չէ: Փետրավորումը գորշաշիկավուն կամ դարչնագույն է: Վզի հիմքում կա փետուրների սպիտակ օձիք: Թափափետուրները և պոչը սև են, պոչի վերին հատվածի փետուրները



Նկ. 14. սպիտակաքգլուխ անգղ

բաց շիկավուն են: Մագիլները թույլ են զարգացած: Մարմնի երկարությունը հասնում է 98 - 105 սմ, թևերի բացվածքը՝ 2, 2 մետր, կենդանի զանգվածը՝ 6 – 9 կգ:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց, սակայն քիչ տարածված, գտնվում է անհետացման եզրին (EN): Ազգային պարկի տարածքում զբաղեցնում է բարձր լեռների ժայռոտ տեղամասերը: Նախընտրում է բնակվել դժվարանատելի լեռնազանգվածներում, զառիթափերի խորշերում, քիվերին նաև՝ փոքր քարանձավներում: Համարվում է բացարձակ լեռակեր գիշատիչ թռչուն: Իշխում է գիշանգղի վրա: Սպիտակագլուխ անգղը կենդանի որսի չի հետապնդում և գոյության միակ նախապայմանը բնական համակարգերում լեռերի առկայությունն է: Լեռնատափաստանների բնակիչ է: Աշնանային շրջանում կարող են հանդիպել նաև հարթավայրային գոտում: Բարձրանում են ծ.մ. մինչև 2800-2900մ:

Բնադրվում են ժայռերի սանդղավանդերին կամ խորշերում, երբեմն ծառերի վրա: Զուգավորումը կատարվում է հունվարի վերջերին: Չվաղում են ապրիլի վերջերին, դնում են 1 ձու: Թխսի տևողությունը 50-55 օր է: Ծտերը բնում մնում են ոչ պակաս քան 3 ամիս: Ենթակա է պահպանության:

Մարգագետնային մկնաճուռակ *Circus pygargus* (նկ.15)

Փետրածածկի գունավորումը բաց մոխրակապտավունից մինչև մոխրադարչնագույն է: Թևերի վրա ունեն մեկական սև շերտեր, թափահարող փետուրները ամբողջովին սև են: Երիտասարդ էգերը նման են դաշտային մկնաճուռակի էգերին: Աղոտ սպիտակ խայտերով են, աչքի շուրջը կա դիմային լայն սպիտակ նախշ: Մարմնի երկարությունը 42-45 սմ է, թևերի բացվածքը՝ 99 – 115 սմ, կենդանի զանգվածը՝ 250 - 550 գրամ:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, աչքի են զարնվում քիչ տարածվածությամբ և գտնվում են խոցված վիճակում (UV):

Նախընտրելի բնակատեղերն են լեռնատափաստանների մարգագետնային խոնավ տեղանքները, ճահճուտների, գետերի շրջակայքը, որտեղ կան ցածր թփուտներ: Արեալի ներսում պարբերաբար կատարում են սննդային միգրացիաներ: Ամռան վերջերին դրանց կարելի է հանդիպել նաև ցանքատարածքներում: Չվում են սեպտեմբերի վերջերին: Սնվում են մկնանման կրծողներով և մանր կաթնասուններով: Ազգային պարկի տարածքում հիմնականում հանդիպում են լեռնամարգագետնային բիոտոպերում:



Նկ. 15. մարգագետնային մկնաճուռակ

Բնադրում են գետնին, սովորաբար ջրային տարածքներից կամ խոնավ մարգագետիններից ոչ հեռու: Դնում են սպիտակ, երբեմն գորշավուն կետերով 3-5 ձու: Չվադրումը կատարվում է մայիսի կեսերին: Չուն դնում են յուրաքանչյուր 24ժ կամ 2-3 օրը մեկ: Թխսի տևողությունը մոտ մեկ ամիս է, ճտերը բնից թռչում են հուլիսի վերջերին: Ենթակա է պահպանության:

Դաշտային մկնաճուռակ *Circus cyaneus* (նկ.16)

Տեսակը մարգագետնային մկնաճուռակից մի քիչ ավելի մեծ է, մարմնի երկարությունը՝ 43 – 50 սմ է, թևերի բացվածքը՝ 100–120 սմ, կենդանի զանգվածը՝ 350 – 600 գրամ: Հասուն արուի մարմնի վերին մասը, կոկորդը, կտնառքը և «գլխարկը» մոխրագույն են, իսկ որովայնը, դիմային սկավառակը և վերնապոչը՝ սպիտակավուն: Թևերի ծայրերը սև գույնի են, իսկ նրա հետին եզրը՝ մուգ մոխրագույնից սև: Էգը մոխրադարչնագույն է, իսկ փորի մասը՝ դեղին դարչնագույն՝ մոխրադարչնագույն բծերով: Որսի պահին նա թռչում է թևերը V-աձև վեր բարձրացրած: Թռիչքի ժամանակ լավ երևում է գոտկատեղի սպիտակ բիծը:

Արցախի ֆաունայում ձմեռող են, քիչ տարածված ու գտնվում են խոցված վիճակում (UV):

Նախընտրելի բնակավայրերն են հարթավայրերը, նախալեռները, լեռնատափաստանները: Թռիչքի ժամանակ կարելի է հանդիպել նաև կիսաանապատներում: Սնվում են դաշտամկներով, մանր կաթնասուններով, սողուններով, թռչուններով: Ձմեռային և գարնանային շրջաններում հիմնականում բնակվում են ցանքատարածքների շրջակայքում օ.մ. 350-1800 մ բարձրություններում:

Չուգավորումը սկսվում է ապրիլի կեսերին, երբ նկատվում է ամուսնական թռիչք: Բները պատրաստում են գետնի վրա, որոնք ունենում են 50, երբեմն 80 սմ տրամագիծ և 30 սմ բարձրություն: Բների պատրաստման համար օգտագործում են նուրբ խոտեր, ճյուղեր և բույնը պահում են մաքուր: Չվերը դնում են մայիսի կեսերին: Բնում ունենում են 3-5 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը մոտ մեկ ամիս է: Թուխը կատարվում է հենց առաջին ձվից: Մայրը տաքացնում է ձվերը և ճտերին, իսկ հայրը՝ կերակրում: Ենթակա են պահպանության:



Նկ.16. դաշտային ճուռակ

Սովորական հողնավար բազե Falco tinnunculus (նկ.17)



Նկ/ 17 սովորական հողնավար բազե

Առաջին թափափետուրները շատ թե քիչ հավասար են չորրորդին: Թևերը շատ սուր են: Արուի գլուխը և պոչը մոխրագույն են, մեջքը՝ կարմրադարչնագույն պուտերով, էգը՝ շիկակարմրադարչնագույն՝ մուգ խայտերով: Էգի և երիտասարդ առանձնյակի մարմինը ներքևից խիտ պուտերով ու խայտերով է, պոչի հիմքը՝ դարչնագույն: Պոչը երկար է, կլորավուն, նախածայրաշերտը՝ լայն, թևատակը՝ մուգ և խիտ պուտերով: Թևերը համեմատաբար լայն են, իսկ պոչը երկար: Պոչի ծայրը երիզված է սև շերտով, մագիլները սև են: Մարմնի երկարությունը 32-35 սմ է, թևերի բացվածքը՝ 71-80 սմ, կենդանի զանգվածը՝ 190 – 220 գրամ:

Արցախի ֆաունայում նստակյաց է, կարգավիճակի վերաբերյալ տվյալները սուղ են (DD):

Գերադասում են բնակություն հաստատել այն տարածքներում, որտեղ առկա են անտառներ, թփուտներ, քանի որ դրանք անհրաժեշտ են բնադրման համար: Բնակվում են կուլտուրական

լանդշաֆտներում, որն էլ օգտագործում են թռչչքի և ձմեռման համար: Կարող են բարձրանալ 6 մ. մինչև 2500-3000մ: Սավառնում է՝ պոչը հովհարանման բացած, թռչում է թևերի ոչ խորը թափահարումներով, հաճախ կանգ առնում օդում: Տեսակը սնվում է միջատներով, թռչուններով, մանր կաթնասուններով: Նստում է լարերին, սյուներին, ժայռերին, շինությունների տանիքներին: Ազգային պարկում հիմնականում զբաղեցնում են լեռնատափաստանները, մերձալպյան գոտիները, գետածորերը:

Բները կառուցում են ծառերի վրա, շենքերի տանիքներում, պատերի ճեղքերում: Չվաղում են ապրիլ-մայիս ամիսներին, դնում են 3-6 շիկավուն, կարմրագորշավուն պուտերով ձվեր: Թխսում են 27-29 օր: Գետերը բները լքում են 35 օրականում: Ենթակա են պահպանության:

Լորաճուռակ *Accipiter nisus* (նկ.18)

Կարճաթև և լայնաթև երկարապոչ թռչուն է: Արուն զգալի փոքր է էգից: Փետրավորումը վերևից մուգ մոխրագույն է, այտերը՝ շիկակարմրավուն, ներքևից՝ սպիտակ՝ խիտ շիկակարմրավուն գույներով: Երիտասարդը նման է էգին, սակայն մարմինը վերևից ավելի դարչնագույն է՝ նարնջագույն երանգի նեղ երիզված փետուրներով, ներքևից՝ դարչնագույն անկանոն գույներով: Աչքերը դեղին են: Մարմնի երկարությունը 28 – 38 սմ է, թևերի բացվածքը՝ 55 – 70 սմ:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, սակայն քչաքանակ են և մեր պայմաններում համարվում են խոցված (UV): Գերադասում են բնակվել բացատաշատ անտառներում, որտեղ խիտ են բնակեցված մանր թռչունները: Ազգային պարկի տարածքում հիմնականում զբաղեցնում են անտառաբացատները, պտղատու այգիները: Լորաճուռակը զբաղեցնում է ոչ մեծ տարածքներ, հատկապես՝ աղավանդոցների մերձակայքում, քանի որ թռչչքի ժամանակ նա հաճախ է աղավանդներ որսում: Որսի ժամանակ թռչում են գետնից ոչ բարձր ու արագ, ծառերի ու թփուտների միջև: Տեսակը բնակվում է տարբեր գոտիներում տափաստանայինից մինչև բարձր լեռնային շրջաններ: Սնվում են հիմնականում թռչուններով, հազվադեպ կրծողներով:



Նկ. 18. Լորաճուռակ

Սեռահասում են դառնում մինչև մեկ տարեկանը: Բները և բնատեղերը օգտագործում են երկար տարիներ: Բները կառուցում են ծառերի վրա, գետնից 2-4, մինչև 8 մ բարձրության վրա: Բնադրման համար կարող են օգտագործել նաև մարդկային շինությունները: Բնում ունենում են 4-6 կապտասպիտակավուն ձվեր: Թխսում են 30-35 օր, թխսում է միայն էգը՝ հենց առաջին ձվից: Գետերը դուրս են գալիս հունիսի վերջին հուլիսի սկզբներին: Առաջին օրերին կերը հայթայթում են արունները: Ենթակա են պահպանության:

Եվրոպական ճնճաճուռակ *Accipiter brevipes* (նկ.19)

Բաց գույնի թևատակը ցայտերանգ է, սև ծայրերով: Արունները վերևից բաց կապտավուն – մոխրագույն են, առաջնային փետուրները՝ մուգ, մարմինը ներքևից՝ սպիտակ, փորը և կուրծքը՝ նարնջագույն գույներով: Պոչի կենտրոնական փետուրները վերևից առանց գույների են: Էգի մարմինը վերևից մոխրագույն – դարչնագույն է, ներքևից՝ սպիտակ, մինչև արտաքին թևը՝ խիտ շիկակարմիր – դարչնագույն գույներով: Երիտասարդների մարմինը ներքևից սպիտակ է՝ ցայտուն, երկայնակի դարչնագույն պտերով, մոտիկից նկատելի է կզակի մուգ շերտը: Արուի թևատակը սպիտակավուն է, էգինը՝ շիկակարմիր դարչնագույն գույներով: Մարմնի երկարությունը 32 – 38 սմ է, թևերի բացվածքը՝ 65 – 75 սմ, կենդանի զանգվածը՝ 100 – 200 գրամ:

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող, քիչ տարածված, սակայն կարգավիճակի մասին տեղեկությունները սուղ են (DD):

Եվրոպական ճնճաճուռակը բնակվում է անտառներում, պտղատու այգիներում, գետածորերում, բաց տարածություններում: Բարձրանում են մինչև 2000 մ բարձրությունները: Թռչում է ուղիղ գծով՝ թևերի հաճախակի թափահարումներով: Որսի ընթացքում հաճախ սահասավառնում է բաց տարածքներում, զոհին բռնում է գետնին: Չվում են երամներով: Սնվում է միջատներով, մանր ողնաշարավորներով: Ազգային պարկում հանդիպում են անտառներում:



Նկ. 19 եվրոպական ճնճղաճուռակ

Բազմացման և էկոլոգիկենսաբանական որոշ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալներ ուսումնասիրությունների լուրջ կարիք ունեն:

Ցախաքլորաորս *Accipiter gentilis* (նկ.20)

Հասուն թռչունների մարմնի վերին մասը գորշ է, որովայնը՝ սպիտակավուն լայնակի նախշերով: Երիտասարդների մոտ մեջքի մասը գորշավուն է, որովայնը՝ կավագույն է կամ սպիտակավուն՝ գորշ նախշերով: Թևերը՝ լայն՝ դեպի վեր փքված երկրորդային փետուրներով, արտաքին թևը՝ նեղ, պոչը՝ կլորավուն, ներքնապոչը՝ սպիտակ, աչքի վերին մասում կա ցայտուն սպիտակավուն շերտ: Արուն զգալի փոքր է էգից: Աչքերն ու ոտքերը դեղին են: Մարմնի երկարությունը 48-62 սմ է, թևերի բացվածքը՝ 90-120 սմ, կենդանի զանգվածը՝ 0,7-1,9 կգ:



Նկ. 20. ցախաքլորաորս

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, քիչ տարածված ու խոցված տեսակ (UV):

Չափազանց զգույշ և թաքնված թռչուն է: Տեսակը բնակվում է բացատաշատ անտառներում, խուսափում են համատարած անտառաշերտերից: Սնվում է առավելապես թռչուններով և նապաստակներով, կրծողներով: Չայնը կտրուկ ճչոցի է նման: Չոհի վրա թաքստոցից հարձակվում է անսպասելիորեն: Կերը հայթայթում է արուն և թռչչի ընթացքում կարող է որսը փոխանցել էգին:

Բնադրում են բարձր ծառերին, երբեմն օգտագործում են այլ գիշատիչ թռչունների բներ: Չվադրում են ապրիլ-մայիս ամիսներին, դնում են 3-4 սպիտակ ձու: Թխսի տևողությունը 38 օր է, այդ ընթացքում արուն կեր է բերում էգին: Ենթակա են պահպանության:

Աղավնաբազե *Falco columbarius* (նկ.21)

Մարմնի երկարությունը 23-30սմ է, թևերի բացվածքը՝ 52-62 սմ, կենդանի քաշը՝ 160-250գ: Էգը խոշոր է արուից: Արուի փետրածածկը վերևից բաց կապտամոխրագույն է, առաջնային փետուրները՝ մուգ, ներքևից՝ բաց նարնջագույն՝ սև խայտերով: Թռիչքը նմանվում է ծիծեռնակի թռիչքին, ճարպիկ է ու խուսանավող:

Արցախի ֆաունայում համարվում են ձմեռող, չվող և հազվագյուտ: Մեր պայմաններում կարգավիճակի վերաբերյալ տվյալները բավականին սուղ են (DD):



Նկ. 21 աղավնաբազե

Համարվում է բաց տարածքների բնակիչ: Հիմնականում զբաղեցնում է թփուտածածկ լեռնատափաստանները, գետերի հովիտները: Ազգային պարկի տարածքներում հանդիպում են նոսր անտառներում: Էկոլոգիային և կենսաբանությանը նվիրված հարցերը Արցախում պարզաբանված չեն:

Արտույտաբազե *Falco subbuteo* (նկ.22)

Մուգ, բարեկազմ թռչուն է: Թևերը սրածայր են, երկար, պոչը՝ կարճ, կուրծքը և փորը՝ սպիտակավուն՝ մուգ խայտերով, ներքնապոչը և ոտքերի փետուրները՝ դարչնամարնջագույն: Դեմքի վերին մասը մուգ է, կոկորդը՝ սպիտակ: Լավ արտահայտված է այտի բեղանման շերտը: Արուն վերևից մուգ մոխրագույն է, էգը՝ ավելի դարչնագույն: Երիտասարդի գագաթը մուգ կապտամոխրագույն է, ճակատը՝ խայտերով, մարմինը վերևից՝ բաց երիզված փետուրներով, ներքևից՝ սևավուն խայտերով: Սավառնում է՝ թևերն ուղիղ տարածած, պոչը՝ հովհարանման բացած: Օդում կանգ չի առնում:

Արցախի ֆաունայում համարվում են մստակյաց, հազվագյուտ են (EN):

Սնվում է միջատներով, մանր թռչուններով: Բնադրում է ծառերի վրա, ավելի հաճախ՝ այլ թռչունների (առավելապես՝ ագռավի) հին բներում: Ձոռին բռնում է օդում՝ արագ ու ճարպիկ թռիչքով հետապնդելով նրան: Ավելի գործուն է երեկոյան: Ազգային պարկի տարածքում բնակվում է լեռնալանջերին, անտառներում, պտղատու այգիներում:

Մարմնի երկարությունը 30-36 սմ է, թևերի բացվածքը՝ 82-92 սմ, կենդանի քաշը՝ 160-280 գ:



Նկ. 22. արտույտարագե

Բնադրվում են ծառերի կատարին, լավ տեսանելիությամբ վայրերում, բնում ունենում են 3 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 28-33 օր է:

Սապսան *Falco peregrinus* (նկ. 23)

Սապսանները խոշոր բազեներ են, դրանք բավականին արագաշարժ են ու ընդունակ են կարճ տարածքի վրա զարգացնել 322կմ/ժ արագություն: Սապսանների մարմնի երկարությունը 34-50 սմ է, թևերի բացվածքը՝ 80-120 սմ, կենդանի քաշը՝ 910-1500գ, ինչպես մյուս գիշատիչների մոտ է, սապսանների մոտ ևս էգերը փոքր ինչ խոշոր են արուներից: Գունային երանգներում սեռական դիֆորմիզմը համարյա բացակայում է: Հասուն թռչունների մարմնի վերին մասն օժտված է գունային ցայտերանգությամբ, փորի հատվածը սովորաբար բաց է՝ մոխրա սպիտակավուն, կամ բաց վարդագույն շիկավուն երանգներով:

Արցախում համարվում են նստակյաց, ունեն հանդիպման ցածր հաճախականություն, խոցված են (VU):

Բնակության համար ընտրում են այն վայրերը, որոնք անհասանելի են մարդու համար: Գերադասում են ժայռոտ վայրերը: Բները պատրաստում են ժայռերի ճեղքերում, անտառներում կարող են զբաղեցնել ագռավների բները: Խույս են տալիս խիտ ու մութ անտառներից և անտառազուրկ տարածքներից:

Սապսանները մոնոգամ են: Սեռահասուն են դառնում կյանքի հաջորդ տարում, չնայած բազմացմանը մասնակցում են երկրորդ կամ երրորդ տարում: Բնում ունենում են 2-3 ձու: Թխսում են երկու ծնողները: Թխսի տևողությունը 33-35 օր է: Ծուները թռչում են 35-45 օրականում, սակայն 2-3 շաբաթ մնում են ծնողների հսկողության տակ: Սնվում են մանր թռչուններով, հազվադեպ թռչող մկներով, սկյուռներով, երկկենցաղներով: Ենթակա են պահպանության:



Նկ. 23 սապսան

Ծուները թռչում են 35-45 օրականում, սակայն 2-3 շաբաթ մնում են ծնողների հսկողության տակ: Սնվում են մանր թռչուններով, հազվադեպ թռչող մկներով, սկյուռներով, երկկենցաղներով: Ենթակա են պահպանության:

Տափաստանային մկնաճուռակ *Circus macrourus* (նկ. 24)

Հասուն արուի փետուրները վերևից բաց մոխրագույն են, իսկ որովայնը սպիտակավուն, թևերի ծայրերին առկա են մուգ մոխրագույն հատվածներ, որոնք տեսանելի են թռիչքի ժամանակ: Էգի ստորին մասը բաց դարչնագույնից սպիտակ է, դարչնագույն և շիկակարմիր-դարչնագույն խայտերով, ամենախիտը կրծքի վրա է: Պոչի վերին հատվածը ծածկող փետուրները ոչ մաքուր սպիտակ են: Բացված թևի վրա ակնառու է թևատակի սպիտակ գույնի կիսալուսնաձև նախշը: Էգի քաշը՝ 800-1000գ է, արուներինը՝ 300-500 գրամ, թևերի բացվածքը՝ 96-115 սմ է, իսկ մարմնի երկարությունը՝ 40-50 սմ է:

Նախընտրելի վայրերն են լեռնատափաստանային գոտիների խոտհարքերը, ցանքատարածքները, և սովորաբար կարող են բարձրանալ 850-2100 մ բարձրությունները: Բնակվում են նաև կիսաանապատային և հարթավայրային գոտիներում: Սնվում են բազմազան կերերով, սակայն կենդանական ծագման կերերի գերակշռումով, որտեղ մեծ մաս են կազմում մկնանման կրծողները, ճագարամկները, երբեմն նաև թռչունները, սողունները:



Նկ. 24 տափաստանային մկնաճուռակ

Արցախում կլոր տարին չվախյուր են, քիչ տարածված, սակայն կարգավիճակի մասին տեղեկությունները սուղ են (DD):

Բնադրվում են գետնի վրա, ձվադրում են ապրիլ մայիս ամիսներին: Սովորաբար դնում են 3-5 սպիտակ, հազվագյուտ բղետ ձվեր: Թխսում են մոտ մեկ ամիս: Ծուերը թևերը բարձրացնում են 40 օրականում: Ենթակա են պահպանության:

Բալդրան *Falco cherrug* (նկ. 25)



Նկ.25 բալդրան

Բալթբանը խոշոր բազե է: Մարմնի վերին մասը մուգ գորշավուն է մինչև շիկագորշավուն: Արուները փոքր են էգերից: Մարմնի երկարությունը 43-65 սմ է, թևերի բացվածքը՝ 105-120 սմ, կենդանի քաշը՝ 650-1400գ:

Բալթբանները բաց տարածքների թռչուններ են: Արցախում համարվում են նստակյաց, սակայն հազվագյուտ, գտնվում են անհետացման եզրին (EN): Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են ժայռոտ վայրերը: Էկոլոգիայի և կենսաբանության վերաբերյալ տվյալները սուղ են և ենթակա են լուրջ ուսումնասիրությունների: Ենթակա են պահպանության:

Թխակապույտ աղավնի Columba livia (նկ.26)

Բավականին խոշոր աղավնիներ են: Մարմնի երկարությունը 29-36 սմ է, թևերի բացվածքը՝ 50-67 սմ, քաշը՝ 270-400 գ: Գունավորման մեջ առկա է աշխարհագրական փոփոխություններ, սակայն



Նկ. 26 թխակապույտ աղավնի

ընդհանուր փետրածածկը հիմնականում կապտամոխրագույն է, գոտկատեղը, մեջքի հետին մասը և թևատակը՝ սպիտակ, մեջքը՝ բաց մոխրագույն, թևին կան 2 երկար սև շերտեր: Արցախի ֆաունայում հարթավայրային գոտում տարածված թխակապույտ աղավնիների մոտ գունային երանգը համեմատաբար բաց է, իսկ անտառային հատվածներում, մասնավորապես ազգային պարկի տարածքում՝ մուգ:

Արցախում համարվում են նստակյաց: Այսօր, կապված անտառահատումների հետ, նկատվում է թվաքանակի նվազման տենդենց, թվաքանակը գնահատված չէ (NE):

Բնադրվում են ժայռերում, գետածորերում, բնակելի վայրերում, այդ թվում նաև քաղաքների բարձրահարկ շենքերի տանիքներում: Մեր դիտարկումներով թխակապույտ աղավնիները կատարում են սեզոնային քոչեր, գարնանը և ամռանը դեպի բարձր լեռներ, իսկ աշնանը և ձմռանը՝ հարթավայրեր:

Ինչպես ընտանիքի մյուս ներկայացուցիչները, թխակապույտ աղավնիները մոնոգամ են: Արեալի սահմանում կարող են բազմաձև փետրվար-հունիս ամիսներին: Տարվա ընթացքում ունենում են 7-8 ձվադրում, որոնցից յուրաքանչյուրն ունենում է 2 ձու: Թխսում են երկու ծնողները: Թխսի տևողությունը 16-19 օր է: Ձագերին կերակրում են երկու ծնողները, ձագերը թռչում են 35-37 օրականում:

Այս թռչունների թվաքանակի նվազման հիմնական պատճառներից է անկանոն որսը, որսագողությունը: Ենթակա են պահպանության:

Անտառային աղավնի Columba palumbus (նկ.27)

Բավականին խոշոր աղավնիներ են, մարմնի երկարությունը ավելի քան 40 սմ է, քաշը՝ 900-950գ, թևերի բացվածքը՝ 75-85 սմ: Մարմնի գունավորումը կապտամոխրագույն, կուրծքը կարմրամոխրագույն, պարանոցի կանաչ մետաղափայլ երանգի եզրերին առկա են սպիտակ բծեր:

Թևերն ավելի մուգ են, խոշոր՝ սպիտակ կիսալուսնաձև հատվածով, պոչի ծայրաշերտը լայն է, մուգ: Երիտասարդն ավելի խամրած է, վզի կողքերի սպիտակ բծերը բացակայում են: Ամռանը բնակվում է դաշտամերձ անտառներում, ձմռանը՝ ավելի բաց տարածքներում: Հաճախ հանդիպում են երամներով:



Նկ. 27. անտառային աղավնի

Արցախի ֆաունայում անտառային աղավնիները նստակյաց են, ունեն տարածման լայն արեալ, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալները գնահատված չեն է (NE), քանի որ համարվում է որսի օբյեկտ, անհրաժեշտ են մանրակրկիտ ուսումնասիրություններ:

Բնադրում է ծառերի ճյուղերին: Բույնը (տրամագիծը՝ 30-40 սմ) տափակ, նոսր հարթակ է՝ չոր ճյուղերից: Չույգեր կազմում են ապրիլ-մայիս ամիսներին: Բնում առաջին ձվերը հայտնվում են ապրիլի վերջերից մինչև հուլիսի 1-ը: Բնում ունենում են 2 ձու: Թխսում է հիմնականում եգը, թխսի տևողությունը՝ 17-18 օր: Չազերը թռչում են 20 օրականում: Սնվում է սերմերով, պտուղներով, տերևներով և այլն:

Հորալ *Columba oenas* (28)

Հորալները թխակապույտ աղավնու մոտ ազգակցականներն են: Բավականին զգույշ թռչուններ են: Մարմնի երկարությունը 32-34 սմ է, թևերի բացվածքը՝ 63-70 սմ, քաշը՝ 286-290գ, արունները փոքր-ինչ խոշոր են էգերից: Գունային երանգով նմանվում են թխակապույտ աղավնիներին: Թևերի վրա կան մուգ շերտեր, սակայն դրանք շատ թույլ են արտահայտված, կտուցը բաց գույնի է, աչքերը մուգ շագանակագույն են, ոտքերը՝ վարդագույն, պոչի ծայրը՝ սև լայն շերտով:

Արցախի ֆաունայում նստակյաց են, քիչ տարածված և համարվում են խոցելի (VU):

Մեր պայմաններում համարվում են անտառածածկ տարածքների բնակիչներ: Բնադրվում են տարբեր տիպի անտառներում, կարող են բնադրվել նաև հին կառույցներում: Չեն խուսափում խոնավ վայրերից, այդ պատճառով դրանց կարելի է հանդիպել գետերի ափերին: Բազմանում են ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Բնադրվում են զույգերով, կարող են առաջացնել նաև ազատ գաղութներ: Բները կառուցում են ծեր ծառերի փչակներում: Ապրիլ-մայիս ամիսներին սկսում են ձվադրել, բնում ունենում են 2 ձու, թխսում են երկու զույգերը: Թխսի տևողությունը 16-18 օր է: Ծտերը բները լքում են 25-28 օրականում: Որսի օբյեկտ են և ենթակա են պահպանության:



Նկ. 28 հորալ

Սովորական տատրակ *Streptopelia turtur* (29)

Արտաքին տեսքով նման են աղավնիներին, սակայն չափերով բավականին փոքր: Մարմնի երկարությունը 26-28 սմ է, թևերի բացվածքը՝ 47-53 սմ, կենդանի զանգվածը՝ 110-130 գ: Հասունի փետրածածկը վերևից դարչնանարնջագույն է, փետուրների կենտրոնները՝ սև, թևի միջնամասը՝ մոխրակապույտ: Վիզը և կուրծքը վարդագույն են՝ բաց մանուշակագույն երանգով: Վզի կողքերին կան սև ու սպիտակ զուլավոր հատվածներ: Պոչը սև է՝ երիզված սպիտակ շերտով: Աչքերը կարմիր են, ակնօղակը՝ կարմրավուն: Երիտասարդն ավելի խամրած է, իսկ վզի բծերը բացակայում են:

Գարնանը գալիս են ուշ՝ ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին: Վերադառնալուց անմիջապես հետո զույգերով զբաղեցնում են բնային տարածքները: Բնադրվում են ամենաբազմազան անտառներում, սակայն գերադասում են լայնատերև հատվածները: Հաճույքով բնակվում են գետերի ափերի խոնավ անտառներում:



Նկ. 29. սովորական տատրակ

Արցախում համարվում են բնադրող չվող, քիչ տարածված: Անկանոն որսի, անտառահատումների և հրդեհումների արդյունքում դարձել են խոցված (VU): Ազգային պարկի տարածքում հանդիպում են

անտառածածկ հատվածներում, հազվագյուտ դեպքերում կարելի է հանդիպել նաև բնակավայրերում կամ ճանապարհի եզրերի էլեկտրական լարերի վրա:

Բնադրվում են զույգերով: Բները կառուցում են ծառերին, երբեմն նաև՝ թփերին: Բների բարձրությունը 5-6 սմ է, տրամագիծը՝ 20-24 սմ, խորությունը՝ 1,5-2սմ: Չվաղրումը սկսում են մայիսի սկզբներին կամ առաջին կեսին, որոշ զույգեր տարվա մեջ կարող են ունենալ երկու սերունդ: Բնում ունենում են 2 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերը բները լքում են 18 օրականում: Օգոստոս ամսում կարելի է հանդիպել ուշ ծնված մատղաշների:

Աշնանային չուն սկսում են օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի առաջին կեսերին: Ենթակա են պահպանության:

Փոքր տատրակ Streptopelia senegalensis (30)

Փոքր տատրակները ոչ մեծ թռչուններ են, մարմնի երկարությունը 26-29 սմ է, պոչը երկար, թևերի



Նկ. 30 փոքր տատրակ

երկարությունը՝ 12,4-ից 14,4 սմ է, թևերի բացվածքը՝ 40-43 սմ, քաշը՝ 90-130գ: Մարմնի վերին հատվածը կարմրա-դարչնագույն է՝ թևերին և պոչին թխակատույտ երանգներով: Թաթերը՝ կարմիր է: Գլուխը և փորը՝ բաց:

Փոքր տատրակները բները կառուցում են ծառերին, թփերին մարդու կառույցներում: Ազգային պարկի տարածքում հիմնականում զբաղեցնում են գյուղամերձ տարածքները: Արցախի ֆաունայում համարվում են բավականին քիչ տարածված ու գտնվում են խոցված վիճակում (VU): Բազմացման ու զարգացման առանձնահատկությունները մեր պայմաններում լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն: Որսի օբյեկտ է և ենթակա է պահպանության:

Օղակավոր տատրակ Streptopelia decaocto (31)

Արտաքինից նման են սովորական տատրակին, հասուն և մատղաշ թռչունները փետրածածկի երանգով համարյա չեն տարբերվում: Ընդհանուր երանգը գորշամոխրագույն է, պարանոցը և կուրծքը կարմրավուն շերտերով: Մյուս տեսակներից հեշտ է տարբերելը, պարանոցին ունի կիսաօղակ, մանգաղաձև սև փետրաշերտ: Մարմնի երկարությունը 32-37 սմ է, թևերի բացվածքը՝ 53-60 սմ, քաշը՝ 120-280 գ.:

Համարվում են մարդաբնակ տարածքների բնակիչներ, բնակվում են նոսր անտառաշերտերում, անտառների եզրերին: Կապված են բնակատեղերի հետ, գերադասում են բարձր ծառաբույսերը: Խույս են տալիս խիտ ու մութ անտառածածկ տարածքներից: Ազգային պարկում այս թռչունների գերադասելի վայրերը գյուղամերձ տարածքներն են, գետերի ու առվակների ափերը:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, սակայն քիչ տարածված: Խոցված են (VU):

Բնադրվում են ծառերին, շենքերի տանիքներին: Բների բարձրությունը 8-14 սմ է, տրամագիծը՝ 14-20 սմ: Բնում ունենում են 2 ձու: Կախված տարվա եղանակից կարող են ձվադրել արդեն փետրվարից,



Նկ.31. *օղակավոր տատրակ*

սովորաբար՝ մարտ-ապրիլից: Տարվա մեջ ունենում են 2-3 սերունդ: Թխսում են երկու ծնողները, թխսի տևողությունը 14-16 օր է: Ճտերը բները լքում են 20 օրականում: Ենթակա են պահպանության:

Քարակաքավ *Alectoris chukar* (32)

Փետրածածկի ընդհանուր գունավորումը մոխրագույն է, թույլ դարչնագույն երանգներով: Կոկորդը և այտերը սպիտակ են, ճակատը՝ կտուցի հիմքից մինչև աչքի անկյունը սև է, սև շերտը շարունակվում է մինչև կտնառքը և օղակաձև շրջապատում այտերի և կոկորդի սպիտակ փետուրները: Մարմինը վերևից դարչնամոխրագույն է, կուրծքը՝ մոխրագույն, մարմնի կողերի փետուրները նախշված են լայնակի սև ու շիկավուն ցայտերանգ շերտերով: Կտուցը, կոպերը և ոտքերը կարմիր են: Մարմնի երկարությունը՝ 30-35 սմ է, թևերի բացվածքը՝ 46-52, կենդանի զանգվածը՝ 350- 850 գրամ:



Նկ. 32. *քարակաքավ*

Քարակաքավը բնակվում է քարքարոտ և ժայռոտ լեռնալանջերին, կիսաանապատների արիդային տեղամասերում: Գետերի, առվակների մերձակա տարածքների բնակիչներն են: Աշնան սկզբներին կարելի է հանդիպել նաև լեռնատափաստանային լանջերի կուլտուրական լանդշաֆտներում: Հանդիպում են փոքր երամներով: Սնվում են բույսերով, սերմերով, միջատներով: Կատարված դիտարկումներով պարզել ենք, որ վերը նշված վայրերում գերադասում են թփուտածածկ ու քարքարոտ և բաց տեսադաշտով վայրերը: Բավականին հազվադեպ հանդիպում են բուսագուրկ և կտրուկ ժայռերում: Բնադրման շրջանում հիմնականում հայտնվում են հազվագյուտ թփուտներով լանջերին:

Կատարված դիտարկումներով պարզվել ենք, որ քարակաքավները կարող են պարբերաբար տեղափոխություններ կատարել: Տեղափոխությունների պատճառները բավականին բազմազան են, որտեղ իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն սեզոնային փոփոխությունները, կերի առկայությունն ու կայունությունը, ինչպես նաև տարբեր տիպի սթրեսները: Բազմիցս արձանագրել ենք, որ այս թռչունները կարող են իջնել մինչև կիրճերի ստորին հատվածները:

Արցախի ֆաունայում նստակյաց են, գտնվում է խոցված վիճակում (VU):

Մեր պայմաններում քարակաքավները բները սկսում են կառուցել մարտի վերջերին կամ ապրիլի կեսերին՝ կախված կլիմայական պայմաններից: Բները կառուցում են գետնին, խիտ թփուտածածկ, սակայն լայն տեսադաշտով վայրերում: Բնում կարող են ունենալ 8-22 ձու, միջինում՝ 14 ձու: Թխսում են վերջին ձուն դնելուց հետո: Մեր պայմաններում ունենում են մեկ սերունդ: Թխսի տևողությունը 21 օր է: Որսի օբյեկտ է և ենթակա է պահպանության:

Մոխրագույն կաքավ *Perdix perdix* (33)

Տեսակի մարմինը վերևից մոխրագույն-դարչնագույն է, դիմային մասը՝ խամրած նարնջագույն, որովայնը՝ մոխրագույն՝ սև բծերով: Պոչի եզրային փետուրները, մարմնի կողերի ուղղահայաց շերտերը՝ դարչնագույն-շիկակարմիր: Արուի դիմային մասի նարնջագույնը ավելի լայն է, փորի բիծը ավելի խոշոր, քան էգինը: Մարմնի երկարությունը 28-30 սմ է, թևերի բացվածքը՝ 44-45 սմ, կենդանի զանգվածը՝ 320- 550 գրամ:



Նկ. 33. մոխրագույն կաքավ

Տեսակի հիմնական բնակատեղերն են լեռնային տափաստանները և անտառային գոտու անտառամերձ բացատները: Կաքավը բնակվում է սարալանջերին, քարքարոտ հատվածներում, որտեղ կան թփուտներ խիտ մացառուտներ: Նրանց կարելի է նաև հանդիպել հացահատիկային կուլտուրաների ցանքատարածություններում: Նրանք սովորաբար հանդիպում են ոչ մեծ երամներով, հաճախ մշակովի դաշտերում:

Անկանոն որսորդության և որսագողության արդյունքում դրանց քանակը Արցախի ֆաունայում խիստ նվազել է: Մեր պայմաններում համարվում են նստակյաց, քիչ տարածված: Գտնվում են խոցված վիճակում (VU):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են բարձր լեռնային գոտիներում, հիմնականում զբաղեցնում են բաց ու խոտածածկ տարածքներ, քարքարոտ ու ժայռոտ վայրեր, գետերի ափամերձ մացառուտներ: Երբեմն կարելի է հանդիպել նաև պարկին հարակից ցանքատարածքներում:

Բնադրվում են մայիս-հունիսին: Դնում են 35 մմ տրամագծով, մոխրավուն 10-22 ձու: Թխսակալում է էգը՝ 24-25 օր: Չագերը բնից դուրս են գալիս հունիսի վերջին: Թռիչքին տիրապետող ձագերը հասունների հետ երան են կազմում հուլիս-օգոստոսին և աստիճանաբար շարժվում դեպի ցածրադիր հարթավայրային ձմեռանոցներ:

Արժեքավոր որսատեսակ է, միսն ունի բարձր կարգի սննդային հատկանիշներ: Մի շարք երկրներում բազմացվում է անազատ պայմաններում՝ ինկուբատորային եղանակով: Ենթակա են պահպանության:

Կովկասյան մայրեհավ *Lyrurus mlokosiewicz* (34)



Նկ.34. Կովկասյան մայրեհավ

Արուն ունի փայլուն սև փետրածածկ, աչքերի վերևում կրում է վառ կարմիր կատար: Ուսերի վրա կա սպիտակ բիծ, պոչը երկար է, երկատված՝ դեպի ներքև ու դուրս ծռված ծայրերով: Էգի մարմինը վերևից՝ դեղին- դարչնագույն զոլերով է: Մարմնի երկարությունը՝ 38 - 52 սմ է, թևերի բացվածքը՝ 58-62 սմ, կենդանի զանգվածը՝ 600- 1200 գրամ:

Տեսակի կենսամիջավայրը համարվում են ենթալպյան մարգագետինների սահմանը, անտառները: Բնակվում է անտառի վերին սահմանի փարթամ բուսականություն ունեցող շրջաններում, թփուտների և խոտաբույսերի մացառուտներում: Հաճախ ճանապարհներին փոշու լոգանք է ընդունում: Կերակրվում է սաղարթավոր անտառի վերին սահմանի մարգագետիններում: Սննդային ռացիոնը կազմված է մանր անողնաշարավորներից, հատիկներից:

Արցախի ֆաունայում նստակյաց են, ունեն հանդիպման ցածր հաճախականություն, գտնվում են անհետացման եզրին (EN):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են մերձալպյան մարգագետիններում:

Ամենայն հավանականությամբ սեռահասուն են դառնում կյանքի երկրորդ տարում: Պոլիգամ են: Կողոզքը սկսում է զարման առաջին կեսերից: Բները ձվերով հայտնվում են մայիսի երկրորդ կեսի կամ հունիսի ընթացքում: Բույնը ոչ մեծ փոսիկ է, ցանքարը՝ խոտաբույսերից ու փետուրներից պատրաստված: Բնադրում է գետնին՝ թփուտների տակ կամ խիտ բուսուտներում: Դնում է 51 մմ տրամագծով, դեղին-սպիտակ՝ կարմրադարչնագույն պտերով 2-10 ձու: Օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին կազմում են ընտանիքներ (5-8 ձագ), այնուհետև միավորվում խմբերում: Թխսում է միայն էգը:

Անդրկովկասյան (սովորական) փասիան *Phasianus colchicus* (35)

Խոշոր են, համարյա հավերի չափերի և կառուցվածքով, բայց երկար (առանձնապես արունների մոտ) պոչով թռչուն է: Հասուն արուն ունի ոսկեգույն-մարնջագույն փետուրներ՝ սև ծայրով,

Գլուխը՝ մուգ կանաչ, մետաղափայլով, փշփշագինդերը՝ կարմիր, գոտկատեղը՝ դարչնավուն, թևերի ծածկողները՝ բաց դարչնագույն: Էգի ընդհանուր գունավորումը՝ դարչնագույն՝ կարմրավուն և սև խայտերով, գլուխը և վիզը՝ բաց կապտամանուշակագույն երանգով: Արուի և էգի պոչը՝ երկար, սրածայր, զուլավոր: Էգը այլ հավանմաններից տարբերվում է մեծ չափերով և երկար սրածայր պոչով:



Նկ. 35. Կովկասյան փասիան

Մարմնի երկարությունը՝ 50-90 սմ է, թևերի բացվածքը՝ 68-90 սմ, կենդանի զանգվածը՝ 700-1250գ:

Գերադասում են բնակվել նոսր անտառներում, լեռնատափաստանային թփուտաշատ գոտիներում, կուլտուրական լանդշաֆտներում, հացահատիկի ցանքատարածքներում: Սնվում է բույսերի կանաչ մասերով, հատիկներով, միջատներով, երբեմն մանր ողնաշարավորներով:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց: Չկանոնակարգված որսի արդյունքում դրանց քանակը խիստ նվազել է և գտնվում են խոցված վիճակում (VU):

Ազգային պարկում հանդիպում են անտառամերձ թփուտածածկ տարածքներում, գերադասելով խիտ մացառուտները:

Բազմացումը սկսվում է գարնանը՝ ապրիլի վերջին, մայիսի կեսերին: Ոչ խորը գավաթաձև բույնը պատրաստում են գետնին՝ խիտ թաքստոցներում, ցամքարը չոր խոտաբույսերից է: Դնում է 8-15 կանաչ-դարչնագույն ձու՝ 45 մմ տրամագծով: Թխսակալում է էգը՝ 21-23 օր: Ենթակա է պահպանության:

Վայրի հնդկահավ (ուլար) *Tetraogallus caspius* (36)

Մեծ թռչնատեսակ է: Ընդհանուր գունավորումը մոխրագույն է, թևի ծածկող փետուրները և մարմինը ներքևից՝ մանր կարմիր-դարչնագույն, դեղին-դարչնագույն և սև նախշերով: Կզակը և կոկորդը՝ սպիտակ: Այտի շերտը և վզնոցը՝ դարչնագույն, կրծքի վերին մասը՝ կապտավուն-մոխրագույն՝ դարչնագույն նոսր պուտերով: Թռչելիս թևի վրա ակնառու է սպիտակ շերտը: Մարմնի երկարությունը 58-62 սմ է, թևերի բացվածքը՝ 95-105 սմ, կենդանի զանգվածը՝ 1,5- 2,0 կգ:

Նախընտրելի բնակավայրերն են ալպյան, քարքարոտ ժայռերը, սարալանջերը, որտեղ բարձր խոտերի և թփուտների առկայությունը պարտադիր է: Վարում է թաքնված կենսակերպ: Ճանաչելի է մոտ 1 կմ հեռավորության վրա նրա լսվող բարձր սուլոցներով: Սնվում է բույսերով, նրա արմատներով, սերմերով և պտուղներով:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և գտնվում է անհետացման եզրին (EN):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են բարձր լեռներում՝ բնակեցնելով ժայռային բեկորներով թեք լանջերը, ծ.մ. 2000–2400մ բարձրություններում: Բնադրում են մայիսի սկզբին: Բույնը գավաթաձև է՝ 30 սմ տրամագծով: Դնում է 66 մմ տրամագծով մոխրագույն-կանաչ՝ ավելի մուգ վրձնախազ 6-9 ձու:

Ուլարի, ինչպես նաև մյուս գետնաբնակ թռչունների թվաքանակի վրա բացասականորեն կարող են ազդել անասունների գերարածեցումը, անհանգստացնելը վայրի բույսեր հավաքողների և հովիվների շների կողմից, ինչպես նաև ապօրինի որսը: Ենթակա են պահպանության:



Նկ. 36 վայրի հնիկահավ

Ներկարար *Coracias garrulous* (37)

Չափերով և մարմնակազմով նմանվում են անտառային կաչաղակներին: Գլուխը, պարանոցը, փորի կողմը և վերին ծածկող փետրածածկը կապույտ է, մեջքը՝ շիկադարչնավուն, գոտին, թափափետուրները՝ մուգ գորշավուն: Պոչը կապտա-երկնագույն է, միայն ղեկափետուրների միջին զույգը մուգ գորշավուն է՝ կապտավուն շերտերով: Արուն և էգն արտաքինից չեն տարբերվում: Թռիչքը



Նկ.37. ներկարար

թեթև է և ուժեղ: Մարմնի երկարությունը 30-34 սմ է, թևերի երկարությունը՝ 19,8-20,8 սմ, թևերի բացվածքը՝ 62-73սմ, կենդանի զանգվածը 100-200գ.:

Բնակվում են անենաբազմազան լանդշաֆտներում, առավելապես ծառերի առկայությամբ կիսաբաց տարածքներում, հաճախ հատված անտառաբացատներում: Բները տեղադրում են փչակներում, հեղեղատներում (բները փորում են իրենք), ժայռերի ճեղքերում, տանիքներում:

Արցախում համարվում են բնադրող չվող, քիչ տարածված: Թվաքանակի վերաբերյալ տեղեկությունների անբավարարության պատճառով կարգավիճակն անհայտ է (DD):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են լռնատափաստանների թփուտածածկ և անտառածածկ տարածքներում: Բնադրվում են առանձին զույգերով: Չվադրումը սկսում են մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, բնում ունենում են 3-5 ձու: Թխսի տևողությունը 18-19 օր է, թխսում են երկու զույգերը: Ճտերը բները լքում են մոտ մեկ ամսականում: Արդեն օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի կեսերին տեղի է ունենում չուն: Ենթակա են պահպանության:

Կանաչ մեղվակեր *Merops persicus* (38)



Նկ. 38. Կանաչ մեղվակեր

Արու և էգ առանձնյակներն ունեն նույն երանգը: Էգերն աննշան փոքր են արուներից: Փետրածածկը համատարած կանաչ է, ճակատը սպիտակավուն է: Կզակը դեղին է, որը սահուն անցնում է դարչնագույն կոկորդի: Մարմնի երկարությունը 26-32 սմ է, թևերի բացվածքը՝ 45-50 սմ: Կենդանի զանգվածը՝ 40-60գ:

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող և ունի հանդիպման ցածր հաճախականություն: Թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Ազգային պարկում հազվադեպ հանդիպում են անտառաեզրերին, թփուտածածկ բացատներում: Բնադրվում են գառիթափերում: Բները փորում են երկու ծնողները, տարվա մեջ ունենում են մեկ սերունդ, սակայն կենսաբանությունը և էկոլոգիան լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն: Ենթակա է պահպանության:

Ոսկեգույն մեղվակեր *Merops apiaster* (39)

Մարմնի երկարությունը 23-30 սմ է, թևերի բացվածքը՝ 44-49 սմ, կենդանի զանգվածը՝ 41-68 գ: Փետրածածկը ցայտուն բազմերանգ է, կտուցը՝ ներքև ծռված, պոչը՝ երկար, կենտրոնական փետուրները՝ մյուսներից քիչ երկար: Չասունի թռչնի կոկորդը դեղին է, մարմինը վերևից՝ դարչնագույն՝ շիկակարմիր ու դեղին նախշերով: Չետբնադրման շրջանում փետուրները կապույտ են՝ կանաչ ծայրերով: Երիտասարդի ուսափետուրները թևավերևում կանաչ են: Պոչի դուրս ցցված հատվածը բացակայում է:

Չանդիսանում են բաց տարածքների բնակիչներ, կարող են զբաղեցնել բոլոր այն վայրերը, որտեղ հարմար է բազմացման ու բնադրման համար: Մեր պայմաններում համարվում են բնադրող չվող և տարածված տեսակ: Ազգային պարկի տարածքում բնադրաման համար ընտրում են առափնյա գառիթափերը, բները փորում են արուները և էգերը: Բների խորությունը կարող է հասնել մինչև 2-2,5մ: Գարնանը մեզ մոտ հայտնվում են ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին: Չվադրում են

համենատաքար ուշ՝ հունիսին: Բնում ունենում են 5-8 ձու: Թխսի տևողությունը 25 օր է, թխում են երկու ծնողները: Ճտերը բները լքում են մոտ մեկ ամսականում: Չվում են սեպտեմբերի կեսերին:



Նկ.39. ոսկեգույն մեղվակեր

Հոպոպ *Upupa epops* (40)

Հայտնի է հոպոպի միայն մեկ տեսակ, որը չափերով փոքր է աղավնուց: Շնորհիվ երկար, բարակ դեպի ցած ծռված կտցի, գլխի լավ զարգացած հովհարածև փուփուլի հանրաճանաչ է:



Նկ. 40 հոպոպ

Գունավորումը բղետ է՝ գլուխը, պարանոցը, մեջքի և կրծքի առջևի մասը շիկակարմրավուն է՝ սև և սպիտակ շերտերով: Մարմնի կողքերին առկա են երկայնակի սև շերտեր: Կտուցը և ոտքերը գորշ են: Թևերը լայն են, ծայրերը՝ բութ, որովայնը սպիտակավուն է, մնացած փետրավորումը՝ շիկավուն: Մարմնի երկարությունը 26-33 սմ է, կենդանի զանգվածը՝ 68-72 գ, թևերի բացվածքը՝ 42-49 սմ:

Ձբաղեցնում են ամենաբազմազան տիպի լանդշաֆտները՝ լուսավոր լայնատերև կամ խառն անտառները, գետերի ափերը, ագրոլանդշաֆտները, գյուղամերձ տարածքները:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և տարածված տեսակ: Գարնանը վերադառնում են ապրիլի կեսերին: Բնադրվում են ծառերի փչակներում, ինչպես նաև հարարմատային խոռոչներում, քարակույտերի խոռոչներում, տանիքներում: Չվադրում են մայիսին: Բնում ունենում են 6-12 ձու: Թխսում է միայն էգը, թխսի տևողությունը՝ 18-19 օր: Ծտերը զարգանում են բնակալ տիպի և բները լքում՝ 25-27 օրականում:

Վարսակոցար *Lymnocyptes minimus* (41)



Նկ. 41. Վարսակոցար

Վարսակոցարը արտույտի չափի է, արտաքինից նման է մորակոցարների, սակայն տարբերվում է փետրածածկի ավելի մուգ երանգով: Արունների և էգերի գունային երանգները միանման է: Գագաթի կենտրոնը մուգ, դիմային մասը՝ բաց գույնի է: Մեջքը համարյա սև է, փետուրներն ունեն մանուշակագույն և կանաչավուն մետաղական փայլ և կենտրոնում շիկավուն եզրեր: Մեջքի կողքերով անցնում են երկու երկայնակի շիկագորշավուն շերտեր: Մեջքի հետին մասը և վերնապոչը սև է՝ մանուշակագույն ծուլվածքով: Մարմնի երկարությունը 19-23 սմ է, թևերի բացվածքը՝ 35-41 սմ, կենդանի զանգվածը՝ 50-94 գրամ:

Արցախի ֆաունայում համարվում են պատահական չվահյուր, ազգային պարկի տարածքում հանդիպում են գետերի ճահճացած հատվածներում, գետափերին: Թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD): Մեր պայմաններում կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Մորակոցար *Gallinago gallinago* (42)

Կեռնեխի չափերի թռչուններ են: Մարմնի վերին մասը գորշագույն է՝ շիկավուն բծերով, կուրծքը գորշաշիկավուն է՝ երկայնակի բծերով, որովայնը սպիտակ է, գլխի վերին մասը սև է՝ երկայնակի շիկավուն շերտերով, պոչի եզրային փետուրները իրենց լայնությամբ հավասար են միջին փետուրների լայնությանը: Մարմնի երկարությունը 25-32 սմ է, թևերի բացվածքը՝ 43-48սմ, կենդանի զանգվածը՝ 91-140 գրամ:

Բնակվում են գետերի ճահճացած հատվածներում, գետերի, առվակների ափերին: Գերադասում են ծանծաղ ջրերով և փարթամ բուսականությամբ տարածքները: Մորակոցարները մթնշաղային և գիշերային կենսակերպ վարող թռչուններ են: Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, նախկինում լայն տարածված, իսկ այսօր, կապված անտառահատումների և գետերի հունների փոփոխությունների հետ, թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Բնադրվում են առանձին զույգերով: Բները կառուցում են խիտ ու խոնավ մացառուտներում, երբեմն նաև չոր տարածքներում: Բնային շրջանը ձգծգված է, մեր պայմաններում սկսում են ապրիլի վերջերից մինչև հուլիս: Բնում ունենում են 4-6 ձու: Թխսի տևողությունը 19-20 օր է: Ծտերը բնախույս տիպի են և ձվից դուրս գալու երկրորդ օրը լքում են բները և ցրվում:



Նկ. 42. մորակտցար

Կրկնակտցար *Gallinago media* (43)

Արտաքինից նման են մորակտցարներին: Մարմնի երկարություն 27-29 սմ է, թևերի բացվածքը՝ 47-50 սմ, կենդանի զանգվածը՝ 135-210 գ: Մարմինը գեր է, կտուցը՝ երկար: Պոչի եզրային փետուրները սպիտակ մեծ հատվածով են: Մարմինը վերևից դարչնավուն է, փետուրները՝ սևավուն շերտերով և բաց գույնի երիզված: Թևավերևի ծածկողների ծայրերը ջինջ սպիտակ են: Մարմինը ներքևից աղոտ սպիտակ է, իսկ մարմնի ու փորի կողքերն ունեն խոշոր և մուգ դարչնագույն զուլեր:



Նկ 43. կրկնակտցար

Հետքնադրման շրջանում փետրավորումը թվացյալ ավելի մութ ու խամրած է: Ինչպես մյուս տեսակներն են, կրկնակտացարները նույնպես գերադասում են բնակվել գետերի, ջրամբարների, լճակների ափերին, թաց խոտածածկով մարգագետիններում: Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են գետափերը և խոնավ մարգագետինները, գերխոնավ

տարածքները: Արցախի ֆաունայում համարվում են չվող ձմեռող, բավականին քիչ տարածված ու խոցված (VU):

Կենսաբանության ու էկոլոգիայի վերաբերյալ տվյալները սուղ են և ենթակա են լուրջ ուսումնասիրությունների:

Անտառակոցար *Scolopax rusticola* (44)

Մարմինը վերևից դարչնագույն-կարմիր է՝ սև, նարնջագույն և սպիտակ խճճված նախշերով,



Նկ. 44. անտառակոցար

ներքևից՝ հավասարաչափ զուլավոր: Ոտքերը հաստ են, մոխրավուն-վարդագույն: Մյուս մորակոցարներից տարբերվում են գլխի վրա կատարի և ծոծրակի լայնքով անցնող 4 կամ 3 սև լայն շերտերով: Ճակատը և կատարի առջևի մասը մոխրագորշավուն է: Մարմնի երկարությունը 34-38 սմ է, թևերի բացվածքը՝ 59-67 սմ, կենդանի զանգվածը՝ 270-300 գրամ:

Անտառների տիպիկ բնակիչներ են: Բնակվում են լայնատերև և խառը անտառներում: Հիմնականում ակտիվ են արշալույսին, մթնշաղին և գիշերը: Վտանգի դեպքում թռչում է գետնից ոչ բարձր, թևերի սուլոց արձակող թափահարումներով ճեղքում է օդը և բեկբեկուն թռչելով անհետանում թաքստոցում: Բնակվում է խոնավ անտառներում, տնկարաններում, պտղատու և խաղողի այգիներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, ունեն հանդիպման ցածր հաճախականություն և խոցված են (VU):

Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են համեմատաբար խոնավ վայրերը: Բնադրվում են ապրիլի վերջերին, կարող է ձգձգվել մինչև հուլիս, սակայն հիմնականում բնադրվում են մայիսին: Բնում ունենում են 4-5 ձու: Թխսում և ձագերի նկատմամբ խնամք տանում է հիմնականում էգը: Թխսի տևողությունը 20-24 օր է: Ճտերը բնախույս տիպի են և բները լքում են կյանքի երկրորդ օրը: Ենթակա են պահպանության:

Փուփուլավոր կկու *Clamator glandarius* (45)

Փուփուլավոր կկուների մարմնի երկարությունը 35-39 սմ է, թևերի բացվածքը՝ 58-66 սմ, կենդանի զանգվածը՝ 140-170 գրամ: Ոտքերը մոխրագույն է, մերձաչքային օղակը՝ նարնջագույն: Մեջքը և թևերը մուգ գորշավուն են, ծածկող փետուրների զագթներն ունեն սպիտակ բծեր: Մարմնի ստորին մասի գունավորումը բաց է, կոկորդն ու կուրծքն ունեն դեղնավուն երանգ:

Փուփուլավոր կկուները նախընտրում են լուսավոր անտառները, բաց լանդշաֆտները: Արցախի ֆաունայում համարվում է պատահական չվախյուր: Ազգային պարկի տարածքում հիմնականում հանդիպում են գետափերի ուռուտներում, նոսր ծառուտներում:

Թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Մեր պայմաններում փուփուլավոր կկուների կենսաբանությունը և էկոլոգիան լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:



Նկ.45. փուփուլավոր կկու

Սովորական կկու *Cuculus canorus* (46)

Սովորական կկուն իսկական կկուների կարգին պատկանող թռչուն է, բնային մակաբույծ է, ձվադրում է այլ թռչունների (խաղտոտնիկներ, երաշտահավեր, շամփրուկներ և այլն) բներում,



Նկ.46 սովորական կկու

յուրաքանչյուրում 1 ձու, որի գույնը նմանվում է տվյալ բնի տիրոջ ձվերին: Ձագը ձվից դուրս գալուց հետո, կկուն բնից նետում է տիրոջ ձագերին ու ձվերը և մնում միայնակ: Միջին մեծության թռչուններ են: Շնորհիվ երկար պոչի և գունային երանգի՝ թռիչքի ժամանակ նմանվում է մանր բազեների կամ լորաճուռակի: Մարմնի վերին փետրածածկը, գլուխը, պարանոցը, պոչը և թևերը մոխրագույն են, կուրծքը և փորը՝ սպիտակ՝ մուգ մոխրագորշ շերտերով խզբզված: Պոչը երկար է, աստիճանաձև,

կտուցը՝ թեթևակի ցած թեքված: Մարմնի երկարությունը 32–38 սմ է, թևերի բացվածքը՝ 54-68 սմ, կենդանի զանգվածը՝ 110–200 գրամ:

Բնակվում են ամենաբազմազան անտառներում՝ նախընտրելով խառը անտառները: Հանդիպում են նաև թփուտներում, գետերի ափամերձ տարածքներում, մարդու բնակարաններին մոտ:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, լայն տարածված:

Չվադրում են մայիս-հուլիս ամիսներին: Հայտնի են տվյալներ, որ մեկ սեզոնի ընթացքում դնում են 10-16, այլ դիտարկումներով նաև 19-20, անգամ 25 ձու: Չվի զարգացումը տևում է ընդամենը 11-13 օր, այնպես որ կլուների ճտերը մեծամասամբ դուրս են գալիս ավելի շուտ քան տիրոջ ճտերը: Կյանքի առաջին իսկ օրերին բնից նետում է տիրոջ ձվերը կամ ճտերը և ինքը մնում միայնակ: Կլուների ճտերը աճում են արագ և արդեն 6 ամսականում ընդունակ են թռիչքի:

Եվրոպական բվիկ *Otus scops* (47)



Նկ. 47.Եվրոպական բվիկ

Մարմնի երկարությունը 19-20 սմ է, թևերի բացվածքը՝ 53– 63 սմ, կենդանի զանգվածը՝ 80 գ: Էգերը խոշոր են արուներից: Մարմնի ընդհանուր փետրածածկը միատարր է՝ գորշ դարչնագույն, ներքևից՝ բարակ, մանր գուլերի խճճված նախշերով՝ սև, նուրբ խայտերով: Աչքերը դեղին են, ականջները՝ լայն փետրափնջերով: Գիշերային թռչուն է, բավական հեռվից լսվում են նրա մի քանի վայրկյանը մեկ կրկնվող սուլոցները: Բնակվում է անտառներում, անտառեզրերին, պտղատու այգիներում: Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, կարգավիճակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Գարնանային վերադարձը՝ մարտի առաջին կեսին: Բնադրում է ծառերի փչակներում, շինություններում կամ ագռավի հին բներում: Չվադրում է մայիսի առաջին կեսից հունիսի առաջին կեսը: Դնում է 3-5 ձու: Թխսակալում է էգը՝ 24-25 օր: Ձագերը բնից հեռանում են հուլիսի վերջին:

Տնային բվիկ *Athene noctua* (48)

Պոչը կարճ է: Ագռավից փոքր է: Փետրավորումը լինում է մուգ և բաց երանգներով: Բաց երանգի թռչունները ունեն մուգ բծիկներով գորշանոխրագույն մեջք, որովայնը բաց մոխրագույն է՝ երկայնակի մուգ բծերով: Թափափետուրները և մեծ ծածկող փետուրները արտաքինից ունեն սպիտակ բծեր: Կտուցը՝ բաց գույնի: Մարմնի երկարությունը՝ 37–45 սմ է, թևերի բացվածքը՝ 94-104 սմ, կենդանի զանգվածը՝ 450 – 690 գրամ: Էգերը խոշոր են արուներից:

Նախընտրելի բնակատեղերն են սաղարթախիտ և խառն անտառները, ուղղահայաց բարձրությամբ մինչև 2400 մ, խուսափում են կուլտուրական լանդշաֆտներից: Սնվում են բազմազան կրծողներով, թռչուններով, ձեռքաթևավորներով, միջատակերներով և այլն:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, քիչ տարածված և գտնվում են խոցված վիճակում (VU):



Նկ.48. տնային բվիկ

Բնադրվում են մարտ-ապրիլ ամիսներին: Բները պատրաստում են ծառերի փչակներում, որոնց բարձրությունը գետնից կարող են տարբեր լինել 80-90 սմ-ից մինչև 8-10 մ-ը: Դնում են 3-6 սպիտակ ձվեր, որոնց քանակը կարող է նաև ավել լինել՝ կախված կերի առատությունից և կլիմայական պայմաններից: Թխում են առաջին ձվից, թխսի տևողությունը 28-30 օր է: Չափերը թևերը բարձրացնում են 5-6 շաբաթականում: Ենթակա են պահպանության:

Թավջառտ բու *Aegolius funereus* (49)



Նկ. 49. Թավջառտ բու

Էգերը խոշոր են արուներից: Հասուն առանձնյակի ընդհանուր զուգավորումը մուգ դարչնագույն է՝ վերևից՝ սպիտակ պուտերով, առավելապես՝ գագաթը: Թևերի սպիտակ պուտերը նոսր են: Գլուխը խոշոր է, ուղղանկյունաձև, դիմային սկավառակները՝ սև, նեղ երիզով և խիտ դարչնագույն խայտերով: Աչքերն ու կտուցը՝ դեղին: Ոտքերը փետրավորված են մինչև մագիլների հիմքը: Մարմնի երկարությունը հասնում է 23- 26 սմ, թևերի բացվածքը՝ 53-62 սմ, կենդանի զանգվածը՝ 160-200 գրամ:

Հիմնականում լեռնային խառը և փշատերև անտառների բնակիչ է: Թռիչքն արագ է, ալիքաձև: Սնվում է մանր թռչուններով և մկնակերպ կրծողներով: Զոհին որսում է թաքստոցից կամ թռիչքի ժամանակ:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և հազվագյուտ տեսակ, գտնվում է խոցված վիճակում (VU):

Ազգային պարկի տարածքում թավառտ բվերը զբաղեցնում են բարձրացողում անտառները: Հաճույքով բնակվում են խուլ ափամերձ տարածքներում: Չեն խուսափում բնադրվել մարդու կառույցներում:

Բնադրվում են փչակներում, մարտ -ապրիլ ամիսներին դնում են 4-6 սպիտակ ձու, թխսում է էզը՝ 25-31 օր:

Ականջավոր բու *Asio otus* (50)

Միջին մեծության, ականջների բավականին երկար փետրափնջերով թռչուններ են: մարմնի վերին մասի փետրածածկի երանգը բաց գորշավուն է՝ մարմարյա նախշերով, մարմնի ներքևի հատվածը ժանգա-դեղնավուն է, խոշոր, երկայնակի գորշ բծերով և նուրբ գորշ լայնակի նախշերով:



Նկ.50. ականջավոր բու

Միջաչքային և կոցի շրջանի փետրածածկը սպիտակ է, դիմային սկավառակը բաց մոխրագույն է: Ութերը մինչև ճանկերը փետրակալված են բաց շիկավուն փետրերով: Մարմնի երկարությունը 33-39 սմ է, թևերի բացվածքը՝ 86-100 սմ, կենդանի զանգվածը՝ 160-490 գրամ: Արունները էգերից փոքր են:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, հազվադեպ հանդիպող, քիչ տարածված տեսակ, մեր դիտարկումներով գտնվում են խոցված վիճակում (VU):

Ազգային պարկի տարածքում բնակվում են նուր անտառներում, գետածորերում, մեկուսի պուրակներում, զբոսայգիներում: Սնվում է մանր թռչուններով, մկնակերպ կրծողներով: Սեփական բներ չեն կառուցում, օգտագործում են ագռավների, կաչաղակների և գիշատիչ թռչունների հին բները: Գիշերային թռչուններ են, ցերեկը թաքնվում են ծառերի խիտ ճյուղերում:

Սոնագամ են: Բնադրում են փետրվարի վերջերին: Մարտ-ապրիլի ամիսներին դնում են 3-6 ձու: Թխսակալում է էզը՝ 26-27 օր: Հունիսի 1-ի կեսից 5-6 շաբաթական ձագերը թռչում են բնից, ապա նորից վերադառնում և մի քանի օր անց վերջնականապես լքում այն: Չափազանց օգտակար թռչուններ են, սնվում են մկնանման կրծողներով, հանդիսանում են պայքարի կենսաբանական մեթոդ և ենթակա են պահպանության:

Գահճային բու *Asio flammeus* (51)

Իր չափերով և փետրածածկի գունավորումով նմանվում է ականջավոր բվերին: Տարբերվում է շատ կարճ ականջափետուրներով, աչքերի շուրջը սև փետուրներով և թևերի ստորին մասի քիչ նախշվածությամբ: Մարմնի երկարությունը 34-43 սմ է, թևերի բացվածքը՝ 84-110 սմ է, կենդանի զանգվածը՝ 220-450 գրամ:



Նկ.51. Ճահճային բու

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող, ունի հանդիպման ցածր հաճախականություն: Թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Ազգային պարկում ճահճային բվերը զբաղեցնում են բաց տարածքները, թաց մարգագետինները կամ ճահճացած հատվածները: Կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները մեր պայմաններում լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Անտառաբու *Strix aluco* (52)



Նկ. 52 անտառաբու

Պոչը կարճ է: Ագռավից փոքր են: Փետրավորումը լինում է մուգ և բաց երանգներով: Բաց երանգի թռչունները ունեն մուգ բծիկներով գորշամոխրագույն մեջք, որովայնը բաց մոխրագույն է՝ երկայնակի մուգ բծերով: Թափափետուրները և մեծ ծածկող փետուրները արտաքինից ունեն սպիտակ բծեր: Կտուցը՝ բաց գույնի: Մարմնի երկարությունը՝ 37-45 սմ է, թևերի բացվածքը՝ 94-104 սմ, կենդանի զանգվածը՝ 450-690 գրամ: Էգերը խոշոր են արուներից:

Ազգային պարկի տարածքում նախընտրելի բնակատեղերն են սաղարթախիտ և խառն անտառները, ուղղահայաց բարձրությամբ մինչև 2400 մ, խուսափում են կուլտուրական

լանդշաֆտներից: Սնվում են բազմազան կրծողներով, թռչուններով, ձեռքաթևավորներով, միջատակերներով և այլն: Գիշերային թռչուններ են, օրվա լուսավոր ժամերին նստում են խիտ ճյուղերի արանքում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, ունեն հանդիպման հազավայրուտ հաճախականություն, գտնվում են խոցված վիճակում (VU):

Բնադրվում են մարտ-ապրիլ ամիսներին: Բները պատրաստում են ծառերի փչակներում, որոնց բարձրությունը գետնից կարող են տարբեր լինել 80-90 սմ-ից մինչև 8-10 մ: Դնում են 3-6 սպիտակ ձվեր, որոնց քանակը կարող է նաև ավել լինել՝ կախված կերի առատությունից և կլիմայական պայմաններից: Թխսում են առաջին ձվից, թխսի տևողությունը 28-30 օր է: Չագերը թևերը բարձրացնում են 5-6 շաբաթականում: Ենթակա են պահպանության:

Բվեճ *Bubo bubo* (53)



Նկ. 53 բվեճ

Բարեկազմ մարմնով և լայն թևերով մեր ֆաունայի առավել խոշոր բուն է: Փետրածածկը փարթան է՝ ինչն ապահովում է անձայն թռիչքը: Մարմնի վերին մասի գույնը մուգ շիկավունից մինչև բաց շիկավուն գույնի, կուրծքը մուգ շիկավուն է՝ երկայնակի բծերով, կողային հատվածները և որովայնը՝ լայնակի բարակ շերտերով, ոտքերն ու մատները փետրածածկված են մինչև ճանկերի հիմքերը: Աչքերը խոշոր են, դեղնամարնջագույն, դեմքը փետրածածկ է, կտուցը՝ կեռ ու խոշոր: Մարմնի երկարությունը հասնում է 60-75 սմ -ի, թևերի բացվածքը՝ 160-185, կենդանի զանգվածը էգերի մոտ՝ 3-3,5 կգ, իսկ արուների մոտ 2-2,6 կգ-ի: Գլխի վրա կան երկու երկար ականջանման փետուրներ:

Ազգային պարկի տարածքում գերադասելի բնակատեղերն են՝ խուլ անտառները, ժայռերի խորշերը, փլատակները, կիրճերը: Խուսափում են բնակավայրերից: Բարձրանում են ծ. մ. մինչև 2800-2900 մ բարձրությունները: Բացարձակապես մթնշաղագիշերային կենսակերպ վարող տեսակ է, ամառային շրջաններում որսը կարող է կատարել մինչև առավոտյան ժամը 5-6: Օրվա բոլոր ժամերին ունեն լավ լսողություն և տեսողություն: Թռչում է սովորաբար գետնից ոչ բարձր: Սնվում է ամենատարբեր տեսակի կենդանիներով ու թռչուններով, սակայն կերի շոշափելի մասը կազմում են մկնանման կրծողները:

Արցախի ֆաունայում նստակյաց են ու քիչ տարծված, գտնվում են խոցված վիճակում (VU):

Սովորաբար բները կառուցում են գետնի վրա՝ անտառների փտող ցամքարի վրա, ժայռերի կամ զառիթափերի ճեղքերում, ծառերի վրա, երբեմն բաց տարածքներում ու դեզերի վրա: Չվաղորումը կատարվում է մարտ- ապրիլ ամիսներին, դնում են 2-3, անգամ 4-5 սպիտակ ձու: Թխսում է էգը, տևողությունը մոտ 35 օր: Ծտերը թռիչքի ընդունակ են դառնում մոտ 3 ամսականում: Ենթակա են պահպանության:

Սև մանգաղաթև Աpus apus (54)



Նկ. 54. Սև մանգաղաթև

Ոչ խոշոր թռչուններ են, փոքր ինչ մեծ են ծիծեռնակներից: Թևերը շատ երկար են, մանգաղանման: Պոչը եղանանման է, կտուցը՝ կարճ ու հարթ, ոտքերը՝ կարճ: Հասուն թռչունների մարմինը լրիվությամբ սևագորշ է, միայն կոկորդն է կեղտոտ սպիտակ: Կտցի և ոտքերի գույնը սև է: Մարմնի երկարությունը 16-21 սմ է, թևերի բացվածքը՝ 38-48 սմ, կենդանի զանգվածը՝ 29-45 գրամ:

Սև մանգաղաթևերը մյուս թռչունների մեջ «ռեկորդակիր» են օդում մնալու տևողությամբ: Դրանք չեն նստում ո՛չ գետնին, ո՛չ էլ ճյուղերին և ինչպես կեր հայտնաբերելու, այնպես էլ բույն կառուցելու համար նյութերը հավաքում են օդում, թաքնվում են միայն քնի և բնադրման համար: Հունիս-հուլիս ամիսներին մանգաղաթևերը ակտիվ են ամբողջ օրը:

Մանգաղաթևերը բնադրվում են տանիքներում, բարձրահարկ շենքերի պատերի ճեղքերում, ազգային պարկում նաև բարձր ծառերի փայտփորների փորած փչակներում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և լայն տարածված: Գարնանային վերադարձը լինում է ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբները, ինչը պայմանավորված է կլիմայական պայմաններով: Բազմացումը սկսում են մայիսի կեսերին: Բնում ունենում են 3-4 ձու: Թխսում են երկու ծնողները, թխսի տևողությունը 18-19 օր է: Նպաստավոր պայմաններում ծտերը բնում մնում են 33-39 օր, իսկ աննպաստ պայմաններում՝ 50-56 օր: Չուն կատարվում են օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին:

Սև փայտփոր Dryocopus martius (55)



Նկ 55 սև փայտփոր

Փայտփորներից առավել խոշորն է: Մարմնի միասեռ սև երանգով բավականին հեշտ նկատելի է: Հասուն արուների գլուխը ներկված է վառ կարմիր, իսկ էգերինը՝ միայն՝ ծոծրակը: Կտուցը դեղնագորշավուն է, երկար ու սուր: Ուռքերը կարճ են և ուժեղ, չորս մատներից երկուսը ուղղված են առաջ, երկուսը՝ ետ: Թևերը լայն են և ավարտվում են բութ ծայրով: Պոչի փետուրները կոշտ են ու ճկուն: Մարմնի երկարությունը 42-57 սմ է, թևերի բացվածքը՝ 69-80 սմ, կենդանի զանգվածը՝ 290-380գ:

Բավականին զգույշ թռչուններ են: Նստում են միայն ծառերի ցողուններին: Ջբաղեցնում են տարբեր տիպի անտառները՝ գերադասելով բարձրացողուն ծառերը: Ազգային պարկի տարածքում առավել հաճախ հանդիպում են կաղնուտներում, հաճարկուտներում, կարելի է տեսնել նաև պարկին հարակից տարածքների այգիներում՝ պտղատու ծառերի վրա:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և հազվագյուտ տեսակ, գտնվում են խոցված վիճակում (VU):

Բների կառուցումը սկսում են փետրվարի վերջերին, հաճախ՝ մարտի սկզբներին կամ կեսերին, ինչը կախված է կլիմայական պայմաններից: Արուները և էգերը, աշխատելով հերթափոխով, փչակը փորում են հիվանդ ծառերի բների մեջ: Բները սովորաբար տեղակայում տարբեր ծառերին, միայն թե բավականին բարձր: Չվաղրումը սկսում են ապրիլին, բնում ունենում են 4-5 ձու: Թխսում են էգն ու արուն, թխսի տևողությունը 14 օր է: Ճտերը բները լքում են 24 օրական հասակում: Ենթակա են պահպանության:

Փոքր խայտաբղետ փայտփոր Dendrocopos minor (56)



Նկ. 56. փոքր խայտաբղետ փայտաքիթ

Փետրածածկը բղետ է՝ սև-սպիտակ: Ենթապոչին կարմիր գույնը բացակայում է: Արուների գլուխը խամրած կարմիր է, էգերինը՝ ճակատը և կատարի առջևի մասը՝ կեղտոտ սպիտակ, իսկ հետինը՝ սև: Չափերը բավականին փոքր են մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 28-30սմ, կենդանի զանգվածը՝ 20-30գ:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, հանդիպում է բավականին հազվադեպ և գտնվում են խոցված վիճակում (VU):

Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են անտառածածկ տարածքները, հազվադեպ կարելի է հանդիպել նաև այգիներում, բերքատու ծառերին: Բնակվում է փչակներում, փորում է իր համար սեփական բույն: Բնի խորությունը հասնում է մինչև 10–20 սմ, երկարությունը հասնում է մինչև 10–12 սմ, իսկ տրամագիծը՝ 32–38սմ: Չվաղրում են մայիս հունիս ամիսներին: Բնում հիմնականում ունենում են 4-8 ձու: Թխսում են վերջին ձուն դնելուց հետո, որը տևում է 10–11 օր: Ենթակա են պահպանության:

Սիրիական փայտփոր Dendrocopos syriacus (57)

Արտաքինից նման է բղետ փայտփորիկին և միայն տարբերվում է նրանով, որ կտցի հիմքով անցնող գլխի կողքերի սև շերտը դեպի ծոծրակ անցնող ճյուղեր չունի: Այտերի վրա սպիտակ

հատվածը ձուլվում է պարանոցի սպիտակ հատվածին: Մարմնի երկարությունը 22-25 սմ է, թևերի բացվածքը՝ 39-45 սմ, կենդանի զանգվածը՝ 70-85գ:



Նկ. 57. սիրիական փայտփոր

Բնակվում է բացատներում, լուսավոր անտառներում, որտեղ գերակշռում են լայնատերև ծառերը: Ազգային պարկի տարածքում զբաղեցնում են գետահովիտները, հանդիպում են մրգատու այգիներում: Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և քիչ տարածված, գտնվում է խոցված վիճակում (VU):

Մարտ-ապրիլ ամիսներին սկսում են բներ պատրաստելը: Այն փորում են փչակներում, որոնց խորությունը մոտ 20 սմ է, տրամագիծը՝ 3,5 սմ: Չվաղորում են ապրիլ-մայիս ամիսներին: Բնում ունենում են 4-7 ձու: Թխսում են էգը և արուն, թխսի տևողությունը 9-11 օր է: Ճտերը բույնը լքում են 20-24 օրականում, սակայն մոտ երկու շաբաթ կապ են պահում ծնողների հետ, որից հետո ցրվում: Ենթակա են պահպանության:

Միջին փայտփոր *Dendrocopos medius* (58)



Նկ. 58. միջին փայտփոր

Բավականին փոքր են բղետ և սպիտակամեջք փայտփորներից, բայց խոշոր փոքր բղետ փայտփորից: Արուների գլուխը կարմիր է, ճակատը՝ կեղտոտ սպիտակ, գլխի կողքերը՝ սպիտակ: Ուսերի և թևերի վրայի լայնակի շերտերը սպիտակ են, որովայնը և մարմնի կողքային հատվածները՝ շիկադեղնավուն, պոչի ստորին հատվածը կարմիր է: Մարմնի երկարությունը 19-22 սմ է, թևերի բացվածքը՝ 36-42 սմ, կենդանի զանգվածը՝ 50-80գ:

Մեր պայմաններում գերադասում են բնակություն հաստատել լայնատերև ու երկարացողուն անտառներում, պուրակներում, այգիներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և ի տարբերություն մյուս տեսակների ունեն տարածման լայն արեալ:

Մոնոգամ են, զույգերը ձևավորում են ապրիլի կեսերին կամ մայիսի սկզբներին: Մայիսին էգը դնում է 5-9 սպիտակ ձու: Թխսում են երկու ծնողները, թխսի տևողությունը 12-14 օր է: Ճտերը բները լքում են 20-23 օրականում:

խայտաբղետ փայտփոր Dendrocopos major (59)



Նկ. 59. խայտաբղետ փայտփոր

Միջին չափերի փայտփորներ են: Փետրածածկը բղետ է: Հասուն արուի գլխի վերին մասը փայլուն սև է, ճակատը՝ կեղտոտ սպիտակ կամ գորշ, ծոծրակին ունեն կարմիր շերտ: Այտերը սպիտակ են՝ ներքևից երիզված սև շերտով, որն անցնում է դեպի բերանի անկյունը: Կոկորդը, պարանոցի հետին մասը, կուրծքը, փորը և թևերի ծածկող փետուրները սպիտակ են: Ենթապոչը վառը կարմիր է: Թափափետուրները և դեկափետուրները սև են լայնակի սպիտակ նախշերով: Ոտքերը և կտուցը մոխրագույն են: Մարմնի երկարությունը 22-26 սմ է, թևերի բացվածքը՝ 40-46 սմ, կենդանի զանգվածը՝ 60-100գ:

Բնակվում են բոլոր տիպի անտառներում, երտասարդ այգիներում հայտնվում են բնադրումից դուրս: Աշնանը և ձմռանը նրանց հաճախակի կարելի է տեսնել բնակավայրերում: Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և տարածված տեսակ:

Բազմացումը սկսում են մարտ-ապրիլ ամիսներին: Ապրիլի վերջերին բնում ունենում են 5-7 սպիտակ ձու: Թխսում են էգը և արուն, թխսի տևողությունը 12-13 օր է և 21-23 օրից հետո ճտերը լքում են բները:

Սպիտակամեջք փայտփոր Dendrocopos leucotos (60)

Միջին չափերի թռչուններ են և տարբերվում են փետրածածկի երանգով: Արուների ճակատը սպիտակագորշավուն է, գլխի վերևը կարմիր, այտերը՝ սպիտակ և սահմանագծող սև շերտերը սկիզբ են առնում բերանի անկյուններից: Կուրծքը և փորի առջևի մասը սպիտակ է, աշնանը դառնում է վարդագույն բծերով: Ենթապոչը կարմիր է: Մեջքի առջևի և պարանոցի հետին մասը սև է, իսկ մեջքի մնացած մասը և ուսերի փետուրները՝ սպիտակ: Էգերի գլխի կարմիր գույնը բացակայում է: Մարմնի երկարությունը 24-26 սմ է, թևերի բացվածքը՝ 43-45 սմ, կենդանի զանգվածը՝ 100-113գ.:



Նկ.60. սպիտակամեջք փայտփոր

Արցախի ֆաունայում պատահական չվահյուր է, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Կանաչ փայտփոր *Picus viridis* (61)



Նկ. 61. կանաչ փայտփոր

Բավականին խոշոր փայտփորներ են, համարյա ճայերի չափերի: Հասուն արուների վերին մասի փետրածածկը վառ կանաչ է, վերնապոչը՝ դեղին: Գլխի վերին մասը և ծոծրակը՝ կարմիր, ճակատը և մերձաչքային փետրածածկը՝ սև: Բերանի անկյուններից դեպի ներքև անցնում են «բեղիկները»

կարմիր շերտ՝ սև եզրերով: Ստորին մասը գորշա-կանաչավուն է, կողքերին մուգ բծերով, դեկա և թափափետուրները գորշ են լայնակի բաց մոխրագույն բծերով: Էգերի մոտ «բեղիկները» սև են՝ առանց կարմիր շերտերի, փորի բծերը՝ առավել կտրուկ: Մատղաշները տարբերվում են իրենց առավել խամրած գորշա-կանաչավուն երանգով: Մարմնի երկարությունը 30-35 սմ է, թևերի բացվածքը՝ 50-55 սմ, կենդանի զանգվածը՝ 135-220գ.:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց ու քիչ տարածված տեսակ և գտնվում է խոցված վիճակում (VU):

Մեր պայմաններում զբաղեցնում են խոնավ ու սաղարթավոր անտառները: Դրանց կարելի է հանդիպել նաև գետերի ափերին, անտառների լուսավոր հատվածներում, հազվագյուտ՝ պտղատու այգիներում: Բնադրվում են իրենց փորած փչակներում: Չվաղրում են ապրիլ հունիս ամիսներին, բնում ունենում են 3-6 ձու: Թխում են երկու ծնողները, թխսի տևողությունը՝ 19 օր է: Ծուները 22-25 օրականում լքում են բները: Ենթակա են պահպանության:

Սրնգահավ *Bombycilla garrulus* (62)



Նկ.62 սրնգահավ

Սարյակների չափերի, մոխրագորշավուն երանգով, փարթան փետրածածկով թռչուններ են, որոնց ստորին հատվածն ունի կար մրավուն երանգ: Կոկորդը և կտցի ու աչքերի միջև նեղ շերտը սև է, գլխին առկա է փոփոլ հիշեցնող երկար մազափունջ: Թափափետուրները սևագորշ են, դեղին և սպիտակ կատարներով: Պոչը սևագորշ է՝ դեղին կատարով, ենթապոչը՝ շագանակագույն: Մարմնի երկարությունը 18-20 սմ է, թևերի բացվածքը՝ 32-36 սմ, կենդանի զանգված՝ 55-75գ.:

Արցախի ֆաունայում համարվում է պատահական չվահյուր: Թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներ անբավարար են (DD):

Ազգային պարկի տարածքում հազվադեպ հանդիպում են թփուտածածկ տարածքներում, որտեղ առկա են հատապտուղներ: Կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Առափնյա ծիծեռնակ *Riparia riparia* (63)

Մյուս ծիծեռնակներից տարբերվում է փոքր չափերով, մարմնի վերին կողմի միանման գորշ գունավորմամբ: Կոկորդը կրծքից առանձնանում է գորշ երնագով, կուրծքը, փորը և ենթապոչը սպիտակ են: Կտուցը գորշ է, ոտքերը թույլ փետրակալած, որոնք հասուն առանձնյակների մոտ բները փորելուց հետո մաշվում են: Մարմնի երկարությունը 12-14 սմ է, թևերի բացվածքը՝ 26-29 սմ, կենդանի զանգվածը՝ 13-16գ.:

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Գարնանը վերադառնում է ապրիլ-մայիս ամիսներին: Չուի ընթացքում կազմում են երամներ, որոնք հավաքվում են գետերի, լճերի և լճակների ափերին: Խոշոր գաղութներով բնադրվում են զառիթափ ջրափերի փորվածքներում կամ հաճախ իրենք են բներ պատրաստում: Կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:



Նկ. 63. առափնյա ծիծեռնակ

Գյուղական ծիծեռնակ *Hirundo rustica* (64)

Արտաքին տեսքում անմիջապես աչքի է զառնվում եղանանման պոչը՝ ուժեղ երկարացված նեղ եզրային փետուրներով: Մեջքը և պոչը սև են՝ մետաղական փայլով: Ճակատը, կզակը և կոկորդը մուգ շիկաշագանակագույն են, որովայնը, մարմնի կողային հատվածները, թևերի ստորին մակերեսը՝ սպիտակ կամ շիկավուն: Մարմնի երկարությունը՝ 17-23 սմ է, թևերի բացվածքը՝ 32-35 սմ, կենդանի զանգվածը՝ 12-27գ.:



Նկ.64 գյուղական ծիծեռնակ

Բնակվում են կուլտուրական լանդշաֆտներում, սովորական են գյուղական տիպի բնակավայրերում: Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և տարածված տեսակ: Գարնանը վերադառնում են մարտ-ապրիլ ամիսներին: Վերադառնալուց մի քանի օր հետո սկսում են բների կառուցումը կամ վերանորոգումը: Չվադրում են մայիսին: Բնում ունենում են 4-6 ձու, թխսում են վերջին ձուն դնելուց հետո: Թխսի տևողությունը 14-16 օր է: Թխսում է միայն էգը, որը պարբերաբար

թողնում է բույնը և գնում կերակրվելու: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Կյանքի 21-րդ օրը ճտերը լքում են բները:

Աշնանային չուն սկսում են երամներ կազմելով, առավել հաճախ այդպիսի երամների կարելի է հանդիպել օգոստոսի կեսերին: Մեր պայմաններում գյուղական ծիծեռնակների չուն տեղի է ունենում սեպտեմբերի սկզբներին կամ կեսերին, որը լրիվությամբ ավարտվում է սեպտեմբերի վերջերին: Սակայն առանձին դեպքերում, կախված եղանակային պայմաններից, դրանց կարելի է հանդիպել նաև հոկտեմբերին:

Մոխրագույն արտույտ *Calandrella rufescens* (65)



Նկ. 65. մոխրագույն արտույտ

Փոքր արտույտներ են: Մարմինը դեղնամոխրագույն է՝ մոխրադարչնագույն երանգով, վերին մասում՝ ավելի գորշ: Հոնքը շիկավուն է, կտնառքը ունի երկու մուգ բծեր, պոչի եզրային փետուրները ունեն սպիտակ հատված: Կուրծքը և կողքերը մանր խայտերով են, թևի ծայրը՝ դուրս ցցված: Կտուցը կարճ է ու հաստ: Հասունի փետրածածկը խամրած է: Երիտասարդի մարմնի վերին մասի փետուրները բաց երիզով են: Մարմնի երկարությունը՝ 13-14 սմ է, թևերի բացվածքը՝ 24-32 սմ, կենդանի զանգվածը՝ 22,4-28,1 գ:

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող, տարածված տեսակ:

Բնակվում է կիսաանապատներում, չուի ընթացքում՝ լեռնատափաստաններում: Ազգային պարկի տարածքում գերադասում են բնակվել նոսր բուսականությամբ չոր տափաստանների ավազուտ վայրերում: Բնադրվում են մայիս-հունիս ամիսներին, բները կառուցում են գետնին: Բնում ունենում են 4-5 ձու: Թխսի տևողությունը 12-13 օր է:

Անտառային արտույտ *Lullula arborea* (66)

Անտառային արտույտի մարմնի վերին մասը, այտերը, պոչը, թևերը դարչնամոխրագույն են, պոչի եզրային փետուրները և աչքի վերին մասով ձգվող հոնքանման շերտերը դեղնասպիտակավուն են, մեջքի և կրծքի վրա կան երկայնակի դարչնագույն բծեր: Գլխի փոփուլը թույլ է արտահայտված, պոչը համեմատաբար կարճ է: Մարմնի երկարությունը 14-17 սմ է, թևերի բացվածքը՝ 27-34 սմ, կենդանի զանգվածը՝ 25-30գ: Կտուցը նեղ է, թևերը՝ լայն, գլխին կան ցայտուն նախշեր: Աչքերի վերին մասով ձգվող հոնքանման շերտերն սպիտակ են, որոնք միաձուլվում են ծոծրակի հատվածում: Թռչելիս տեսանելի է թևավերևի արտաքին եզրի սև ու սպիտակ բիծը: Երիտասարդի մարմնի վերևի փետուրների ծայրերը սպիտակ են:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և տարածված տեսակ: Ազգային պարկի տարածքում բնակվում են նոսր անտառներում, անտառաբացատներում, պտղատու այգիներում:

Բնադրվում են գետնին, թփուտների տակ, տարվա մեջ ունենում են երկու բնային ցիկլ: Չվադրում են ապրիլին, բնում ունենում են 4-5 ձու: Թխսում է միայն էգը, թխսի տևողությունը 12-14 օր է: Աշնանային չուն տեղի է ունենում սեպտեմբերի վերջերին: Սակայն վերջին տարիներին արձանագրել



Նկ. 66. անտառային արտույտ

Ենթ անտառային արտույտների ձմեռում նաև մեր պայմաններում, որը հետագա լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի:

Եղջերավոր արտույտ *Eremophila alpestris* (67)

Արտույտների մյուս տեսակներից բավականին հեշտ է տարբերել կատարի կողքերի գույգ փետրափնջերով, որոնք սրածայր կատարներով հիշեցնում են «եղջյուրների»: Մարմնի վերին փետրածածկը գորշամոխրագույն է, թափափետուրները գորշ են, ղեկափետուրները՝ սև, սպիտակ եզրանախշերով: Ճակատը, կոկորդը, աչքերի վերին շերտերը, այտերի հետին մասը և պարանոցը բաց դեղնավուն են: Կատարի առջևի մասը, «եղջյուրները», այտերը և կտնառքի վրա բծերը սև են: Կուրծքը



Նկ. 67. եղջերավոր արտույտ

և փորը սպիտակ են, մարմնի կողքերը՝ բաց մոխրագույն: Կտուցը՝ մուգ մոխրագույն, ոտքերը՝ մուգ գորշավուն: Էգերի «եղջյուրները» ավելի կարծ են, քան արուներինը: Մարմնի երկարությունը 16-20 սմ է, թևերի բացվածքը՝ 31-37 սմ, կենդանի զանգվածը՝ 30-42գ.:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, սակայն կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնադրվում են գետնին, թփուտների տակ կամ խիտ խոտածածկում: Բնում ունենում են 4-9 ձու: Թխսի տևողությունը՝ 9-12 օր է:

Դաշտային արտույտ *Alauda arvensis* (68)



Նկ. 68. Դաշտային արտույտ

Ծննդուկներից փոքր ինչ խոշոր թռչուններ են: Մարմնի վերին մասը դեղնակարմրա-գորշավուն է, սևագորշ բծերի խիտ նախշերով, գլխի կողքերը համեմատաբար բաց են: Կոկորդը, կուրծքը և փորը դեղնակարմրա-սպիտակավուն է, կողքերը՝ երկայնական գորշ նախշերով: Թափափետուրները գորշ են, հովհարի վրա բաց նախշերով, ղեկափետուրները գորշ են, եզրային զույգերը՝ գորշ հիմքով սպիտակ: Կտուցը և ոտքերը մուգ գորշ են: Մարմնի երկարությունը 17-21 սմ է, թևերի բացվածքը՝ 30-38 սմ, կենդանի զանգվածը՝ 28-46 գ.:

Բնակվում են ցածրախոտ մարգագետիններում, լեռնատափաստաններում, կուլտրական լանդշաֆտներում, անտառաբացատներում: Միշտ լինում են գետնին, ծառերին չեն նստում:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և լայն տարածված թռչնատեսակ:

Բնադրվում են գետնին, բնում ունենում են 3-5 ձու: Թխսում է միայն էգը, թխսի տևողությունը՝ 12-13 օր է: Ծուները դեռևս թռիչքի անընդունակ՝ 9-10 օրականում լքում են բները:

Դեղին խաղտոնիկ *Motacilla flava* (69)

Ծննդուկներից փոքր, երկար պոչով և համեմատաբար երկար ոտքերով թռչուններ են: Արունների գլխի վերին մասը և կողքերը մոխրագույն են, այտերը՝ երբեմն սև, մեջքի և եմքապոչի փետրածածկը մոխրականաչավուն: Թափափետուրները և ղեկափետուրները գորշ են: Կուրծքը և փորիկը դեղին են, կոկորդը՝ երբեմն սպիտակ, կտուցը և ոտքերը՝ գորշամոխրավուն: Մատղաշները տարբերվում են հակադրված գորշ նախշի առկայությամբ: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 23-27 սմ, կենդանի զանգվածը՝ 16-20 գ.:

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող, վերջին տարիներին նկատվում է թվաքանակի նվազման տենդենց, կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Նախընտրելի բնակատեղերն են խոնավ լեռնատափաստանները, լճակների ափամերձ տարածքները, գետերի ափերը: Հիմնականում գերադասում են բաց տարածքները, հանդիպում են նաև արոտավայրերում ու մարգագետիններում:

Վարձանը հետ վերադառնում են ապրիլի կեսերին և անմիջապես զբաղեցնում բնադրավայրերը: Բները կառուցում են գետնին և ապրիլի վերջերին դնում են 4-6 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը՝ 11-13 օր: Ծուները բները լքում են 16-18 օրականում: Տարվա մեջ ունենում են 1-2 սերունդ:



Նկ. 69. դեղին խաղտոնիկ

Սպիտակ խաղտոնիկ *Motacilla alba* (70)

Դեղին խաղտոնիկից փոքր ինչ մեծ, երկար պոչով և ոտքերով թռչուններ են: Գլխի վերին մասը, կոկորդը և կուրծքը սև է, ճակատը, գլխի կողքերը և պարանոցը, ինչպես նաև զույգ եզրային դեկափետուրները սպիտակ են: Մեջքը և կուրծքը մոխրագույն է, փորիկը՝ սպիտակավուն, պոչը մուգ մոխրագույն, կատարները՝ համարյա սև, թափափետուրները՝ գորշամոխրագույն: Մարմնի երկարությունը 18-20 սմ, թևերի բացվածքը՝ 25-30 սմ, կենդանի զանգվածը՝ 21-24 գ.:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց ու տարածված տեսակ:

Համարվում է էվրիտոպ տեսակ: Սպիտակ խաղտոնիկին կարելի է հանդիպել բնակատեղերում, ինչպես նաև տարբեր տիպի ջրամբարների ափամերձ տարածքներում, անտառաբացատներում, լեռնատափաստաններում, կուլտուրական լանդշաֆտներում:



Նկ. 70. սպիտակ խաղտոնիկ

Բնադրման համար ընտրում են ամենաբազմազան վայրերը՝ շենքերի տանիքներ, ժայռաճեղքեր, ծառերի հարարմատային տարածքներ, դատարկ փչակներ, պատերի ճեղքեր և այլն: Ունեն երկու

ծվադրում՝ ապրիլի և հուլիս ամիսներին: Բնում ունենում են 5-7 ձու: Թխսում է ինչպես էգը, այնպես էլ արուն՝ 12-13 օր: Ծսերը բները սովորաբար լքում են 15-16 օրականում:

Լեռնային խաղտոտնիկ *Motacilla cinerea* (71)



Նկ. 71 Լեռնային խաղտոտնիկ

Խաղտոտնիկներին բնորոշ տեսքով թռչուններ են: Պոչի երկարությունը գերազանցում է մարմնի երկարությանը: Մարմնի երկարությունը 17-20 սմ է, թևերի բացվածքը՝ 24-27 սմ, կենդանի զանգվածը 18-20 գ.:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և բավականին քիչ հանդիպող, նկատվում է թվաքանակի նվազման տենդենց, կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Կենսաբանությունը և էկոլոգիան լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Ղաշտային ձիաթռչնակ *Anthus campestris* (72)



Նկ. 72. Ղաշտային ձիաթռչնակ

Ոչ մեծ, խաղտոտիկների չափերի, սակայան պոչը երկար թռչուններ են: Մեջքի կողմը մոխրագորշավուն է՝ մուգ գորշավուն բծերով, փորի կողմը կարմրաշագանակա-սպիտակավուն է: Կոկորդի, կրծքի, մարմնի կողքերի կարմրաշագանակավուն բծերը ավելի խիտ են: Կրծքի կողքերին առկա են մուրբ սևագորշ երկայնակի շերտեր: «Յունքերը» բաց գորշամոխրագույն է, կտուցը և ոտքերը՝ բաց գորշավուն: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 25-29 սմ, կենդանի զանգվածը՝ 22-28 գ.:

Բնակվում են լեռնատափաստաններում, մարգագետիններում, գերադասում են անհարթ ռելիեֆով բաց տարածքները: Խույս են տալիս խիտ բուսականությամբ վայրերից: Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող: Դաշտային ձիաթռչնակները մեր պայմաններում ունեն հանդիպման ցածր հաճախականություն: Մեր դիտարկումներով գտնվում են խոցված վիճակում (VU):

Բնադրվում են մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին: Բույնը կառուցում են գետնին, բնում ունենում են 4-6 ձու: Թխում է եզր, թխսի տևողությունը 13-15 օր է: Ենթակա են պահպանության:

Անտառային ձիաթռչնակ *Anthus trivialis* (73)



Նկ. 73. անտառային ձիաթռչնակ

Ծննդուկների չափերի թռչուններ են: Մարմնի և թևերի վերին մասի գունավորումը գորշամոխրագույն է, գլխի և մեջքի վրա առկա են երկայնակի գորշ շերտեր, ծածկող փետուրների կատարները սպիտակ են: Մարմնի ստորին մասը շիկագորշա-դեղնավուն է՝ երկայնակի գորշ բծերով, կոկորդը սպիտակ է: Կտուցը և ոտքերը բաց գորշավուն են: Մարմնի երկարությունը 15-16 սմ է, թևերի բացվածքը՝ 25-28 սմ, կենդանի զանգվածը՝ 15-29 գ.:

Անտառային ձիաթռչնակները բնակատեղերի ընտրման նկատմամբ բավականին ճկուն են: Դիմնականում բնակվում են անտառաներձ թփուտներում, անտառեզրերին, մարգագետիններում, ենթալայան գոտում: Խույս են տալիս մութ ու խիտ անտառային զանգվածներից: Զույգ և քույրի ընթացքում անտառային ձիաթռչնակներին կարելի հանդիպել նաև կուլտրական լանդշաֆտներում, բնակավայրերում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, քիչ տարածված տեսակ, գտնվում են խոցված վիճակում (VU):

Անտառային ձիաթռչնակների կենսաբանությունը և էկոլոգիան մեր պայմաններում ուսումնասիրված չէ: Ենթակա են պահպանության:

Մարգագետնային ձիաթռչնակ *Anthus pratensis* (74)

Արտաքինից նման են անտառային ձիաթռչնակներին, որոնց կարելի է հանդպել երբեմն միասին, սակայն տարբերվում են փոքր չափերով: Մարմնի վերին մասի նախշերն ավելի խիտ են, իսկ ստորին մասի բծերը ավելի խոշոր են, որից թռչուններն ավելի մուգ են դառնում: Մարմնի երկարությունը 14-15 սմ է, թևերի բացվածքը՝ 22-25 սմ, կենդանի զանգվածը՝ 16-20գ.:

Բնակվում են առավելապես խոնավ ու ճահճացած հողերում, գերադասում են ցածր խոտածածկ և նոսր թփուտածածկ տարածքները:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, քիչ տարածված տեսակ, գտնվում են խոցված վիճակում (VU):

Մարգագետնային ձիաթռչնակների կենսաբանությունը և էկոլոգիան մեր պայմաններում ուսումնասիրված չեն: Ենթակա են պահպանության:



Նկ. 74. մարգագետնային ձիաթռչնակ

Լեռնային ձիաթռչնակ *Anthus spinoletta* (75)

Բավականին խոշոր են մարգագետնային ձիաթռչնակներից: Փետրածածկն ընդհանուր առմամբ մոխրագորշավուն է: Գլխի վերին մասը և պարանոցը ծխամոխրագույն են, ունեն վերնակապիճային սպիտակավուն շերտ: Մեջքը գորշավուն է՝ մուգ երկայնակի բծերով, վերնապոչն՝ առանց բծերի: Մարմնի փորի կողմը, կոկորդը, կուրծքը և կրծքի կողքերը կեղտոտ մոխրա-կարմրավուն է: Կոկորդին առկա են ոչ պարզ, իսկ մարմնի կողքերին ավելի պարզ գորշ բծեր: Թափափետուրները մուգ գորշ են: Կտուցը սև, ոտքերը՝ մուգ գորշ (մատները համարյա սև): Մեր դիտարկումներով ձմռանը փետրածածկը դառնում է մուգ գորշավուն: Մարմնի փորի կողմը դառնում է ավելի բծավորված: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 24-29 սմ, կենդանի զանգվածը՝ 19-28գ.:

Գերադասում են բնակություն հաստատել ալպյան և ենթալպյան մարգագետիններում, անտառաբացատներում, ձմռանը իջնում են ցածրադիր վայրեր, սակայն ինչպես ամռանն, այնպես էլ ձմռանը պարտադիր ջրին մոտ տարածքներում:



Նկ. 75. Լեռնային ձիաթռչնակ

Արցախի ֆաունայում համարվում են համարվում են մատակյաց և լայն տարածվածություն:

Բները դնում են գետնին: Չվաղրում են ապրիլի վերջերն, իսկ ավելի հաճախ՝ մայիսի կեսերին: Բնում ունենում են 4-5 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 14-15 օր է: Գտերը բները լքում են դեռևս թռչելուն անընդունակ:

Կարմրախածի ձիաթռչնակ *Anthus cervinus* (76)



Նկ. 76. Կարմրախածի ձիաթռչնակ

Արտաքինից և չափերով նման են մարգագետնային ձիաթռչնակներին: Ձուգավորման շրջանում արուները տարբերվում են մեջքի շիկաշագանակա-գորշավուն, այտերի, կոկորդի և կրծքի առջևի մասի ժանգա-գորշավուն գունավորումով: Էգերի մոտ ժանգա-գորշավուն երանգը սահմանփակվում է միայն կոկորդով: Աշնանը հեռվից դրանց դժվար է տարբերակել մարգագետնային ձիաթռչնակից: Մարմնի երկարությունը 15-17 սմ է, թևերի բացվածքը՝ 25-27 սմ, կենդանի զանգվածը՝ 15-27գ.:

Կարմրախածի ձիաթռչնակները գերադասում են բնակվել բաց տարածքներում: Մեր պայմաններում դրանց կարելի է հանդիպել լեռնատափաստաններում, մարգագետիններում, սակայն մշտապես նախընտրում են ջրերին մոտ տարածքները:

Արցախի ֆաունայում համարվում են չվող, քիչ տարածված տեսակ, կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Կենսաբանության և էկոլոգիայի վերաբերյալ տվյալները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն: Ենթակա են պահպանության:

Մարգագետնային չքչքան *Saxicola rubetra* (77)

Մարգագետնային չքչքանները ճնճղուկներից փոքր թռչուններ են: Ունեն բարեկազմ մարմին: Պոչը կարճ է, կուրծքը՝ նարնջագույն, կտուցը, ոտքերը՝ սև: Բնադրման շրջանում հասուն արուի մարմինը վերևից դարչնագույն-սև է, հոնքերը, բեղերը՝ սպիտակ, թևերին կան սպիտակ բծեր: Էգն ավելի խամրած է, հոնքը՝ բաց դարչնագույն-դեղին: Հետբնադրման շրջանում էգը և արուն նման են բնադրման շրջանի էգին, սակայն վերևից փետուրները բաց գույնի լայն երիզներով են: Երիտասարդի մարմինը վերևից խամրած դարչնագույն է՝ սպիտակ պտերով, կոկորդը և կուրծքը՝ դարչնագույն խայտերով: Մարմնի երկարությունը 12,5 սմ է, թևերի բացվածքը՝ 21-24 սմ, կենդանի զանգվածը՝ 13-15 գ:

Մարգագետնային չքչքանները հիմնականում գերադասում են բնակվել ցանկացած տիպի բաց տարածքներում, սակայն մեծ քանակությամբ հանդիպում են տարախոտ մարգագետիններում: Ազգային պարկի տարածքներում հանդիպում են անտառաբացատներում, նոսր թփուտածածկ լեռնատափաստաններում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, ունեն հանդիպման ցածր հաճախականություն և գտնվում են խոցված վիճակում (VU):



Նկ. 77. մարգագետնային չքչբան

Բազմացունը ձգծոված է: Բները կառուցում են գետնին: Ապրիլի կեսերից մինչև հունիս բներում հանդիպում են 4-7 բաց երկնագույն ձվեր: Էգը թխսում է 12-13 օր: Ճտերը բները լքում են մոտ երկու շաբաթական հասակում:

Սևագլուխ չքչբան *Saxicola torquata* (78)

Սևագլուխ չքչբանը արտաքինից նմանվում է մարգագետնայինին: Արուները տարբերվում են գլխի սև, թևերի, մեջքի և կրծքի ժանգա-շիկավուն գույնով, պարանոցի կողքերին առկա են սպիտակ շերտեր: Սպիտակ հոնքերը բացակայում են: Էգերի փետրածածկի սև երանգը փոխվում է մոխրագորշավունի: Մարմնի երկարությունը 12-13 սմ է, թևերի բացվածքը՝ 18-21 սմ, կենդանի զանգվածը՝ 14-16 գ.:

Բաց տարածքների թռչուններ են: Հաճախ հանդիպում են բնակելի տարածքների եզրերի ամայի տեղերում և դաշտային ճանապարհների մոլախոտերի (աղբախոտերի) շերտերում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց ու քիչ տարածված տեսակ, գտնվում են խոցված վիճակում (VU):



Նկ. 78. սևագլուխ չքչբան

Ապրիլի վերջերին սկսում են բների կառուցումը: Բները կառուցում են գետնին, մայիսի վերջերին բնում ունենում են 4-7 ձու: Չվերը մարգագետնային չքչբանի ձվերից տարբերվում են բաց կանաչա-

երկնագույ երանգով՝ շիկագորշավուն խիտ բծերով: Թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերը բները լքում են 12 օրականում: Ենթակա են պահպանության:

Ժուլան *Lanius cristatus* (79)



Նկ. 79. Ժուլան

Ժուլանը, երբեմն անվանում են նաև շիկամեջք շամփրուկ, ճնճողուկներից փոքր-ինչ խոշոր թռչուններ են, որոնց փետրածածկում արտահայտված է սեռական երկձևությունը: Արունների գլուխը և պարանոցը վերևից մոխրագույն է, աչքերով անցնում են սև լայն շերտ: Կոկորդը և այտերը սպիտակ են: Մեջքը և թևերի վերին մասը շիկաշագանակագույն են, վերնապոչը՝ մոխրագույն: Դեկափետուրները սև են, եզրայինները՝ սպիտակ լայն բծերով: Կուրծքը և փորը բաց մոխրագորշավուն են, գարնանը՝ վարդագույն բծերով: Կտուցը սև է, ոտքերը՝ գորշ: Էգերն ավելի շիկավուն են առանց գլխի կողքերի սև շերտի: Կրծքին ունեն լայնակի գորշ բծեր, կտուցը մոխրագույն է: Մարմնի երկարությունը 17-19 սմ է, թևերի բացվածքը՝ 24-30 սմ, կենդանի զանգվածը՝ 24-39գ.:

Նոսր թփուտներով բաց տարածքների թռչուններ են, դրանց կարելի է հանդիպել անտառաբացատներում, լեռնատափաստաններում, առվակների և գետերի ափերին:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և ունեն լայն տարածվածություն:

Գարնանային վերադարձն ապրիլի կեսերին է, հազվագյուտ դեպքերում մայիսի սկզբներին, ինչը կախված է կլիմայական պայմաններից: Բնադրվում են թփուտների կամ ոչ բարձր ծառերի վրա: Զվարդում են մայիսի երկրորդ կեսերին կամ հունիսի սկզբներին, բնում ունենում են 5-7 ձու: Թխսում է էգը, արուն կանոնավոր կերպով կերն է բերում: Թխսի տևողությունը 16 օր է, ճտերը բները լքում են 14 օրականում: Աշնանը չվում են համեմատաբար ուշ՝ սեպտեմբերի վերջերին կամ հոկտեմբերի կեսերին:

Սևաճակատ շամփրուկ *Lanius minor* (80)

Սարյակների չափերի հասնող թռչուններ են: Հասուն առանձնյակների փետրածածկը վերևից ծխամոխրագույն է, ճակատը և գլխի կողքերը՝ սև, այտերը՝ սպիտակ: Փորի փետրածածկը մոխրավարդագույն է: Թևերը սև են, առաջնային թափափետուրները հիմքից մինչև կեսը սպիտակ են, ինչից ծալած թևի վրա նկատելի է «հայելին», պոչը գորշ է՝ սպիտակ եզրերով: Կտուցը մուգ մոխրագույն է, ոտքերը՝ սև: Մարմնի երկարությունը 20-22 սմ է, թևերի բացվածքը՝ 32-36 սմ, կենդանի զանգվածը՝ 40-64 գ.:

Բաց տարածքների չոր կենսամիջավայրերի և կուլտուրական լանդշաֆտների բնակիչներ են: Գերադասում են նշված վայրերի թփուտածածկ հատվածները, դրանց կարելի է հանդիպել նաև անտառաբացատներում, ճանապարհների եզրերին:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և քիչ տարածված, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):



Նկ. 80. սևաճակատ շամփրուկ

Գարնանը վերադառնում են մայիսի սկզբներին, բների կառուցումը սկսում են մայիսի կեսերին, բնադրում են թփուտներին կամ ոչ բարձր ծառերին: Չվադրում են հունիսի սկզբներին, բնում ունենում են 5-7 ձու, թխտում են արուն և էգը, թխսի տևողությունը 14-15 օր է: Ճտերը բները լքում են 14 օրականում: Աշնանյին չուն՝ օգոստոսի վերջերին է կամ սեպտեմբերի սկզբներին:

Մոխրագույն շամփրուկ *Lanius excubitor* (81)



Նկ. 81. մոխրագույն շամփրուկ

Շամփրուկներից առավել խոշորն են, որոնք համարյա հասնում են կեռնեխների չափերին և ունեն երկար պոչ: Գլխի վերին մասը, մեջքը և ենթապոչը ծխամոխրագույն է: Կտցի հիմքից աչքերով մինչև ականջափետուրներն են անցնում լայնակի սև շերտ: Թափափետուրները և դեկափետուրները սև են, սակայն դեկափետուրների 2-3 զույգ եզրայիններն ունեն հովհարի սպիտակ բծեր, առաջնային թափափետուրներին (շատ առանձնյակների մոտ նաև երկրորդնային թափափետուրներին) առկա են սպիտակ դաշտեր, որոնք թևերը ծալած վիճակում առաջացնում են «հայելի»: Մարմնի ստորին կողմը բաց մոխրագույն է, շատ առանձնյակների մոտ համարյա սպիտակ: Որոշ հասուն թռչունների մարմնի ստորին կողմին առկա են գորշա-մոխրագույն գծերի լայնակի ալիքներ: Կտուցը և ոտքերը սև են: Մարմնի երկարությունը 23-26 սմ է, թևերի բացվածքը՝ 30-36 սմ, կենդանի զանգվածը՝ 59-70 գ.:

Արցախի ֆաունայում համարվում են ձմեռող, սակայն հազվագյուտ են և գտնվում են խոցված վիճակում (VU):

Մեր պայմաններում կենսաբանության ու էկոլոգիայի վերաբերյալ տվյալները բացակայում են և լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Պիրուլ *Oriolus oriolus* (82)

Չափերով խոշոր են սարյակներից: Բավականին հեշտ է տարբերել իր վառ գունավորմամբ և երգով: Արուների մարմինը և գլուխը վառ դեղին են, թևերը, պոչի փետուրների մի մասը, կտցի ու աչքերի միջև նեղ շերտը սև է: Էգերի և մատղաշների մարմնի վերին մասը դեղնականաչավուն է, ստորին կողմը՝ դեղնասպիտակավուն կամ դեղնամոխրագույն՝ երկայնակի նեղ գորշ բծերով: Ծեր էգերի երանգը նույնն է ինչ արուներինը: Մարմնի երկարությունը 24-25 սմ է, թևերի բացվածքը՝ 44-47 սմ, կենդանի զանգվածը՝ 50-85գ.:

Պիրուլները բնակվում են ամենաբազմազան անտառներում, սակայն գերադասում են լուսավոր, բարձրացողում լայնատերև ծառատեսակներ: Դրանց կարելի է հանդիպել անտառաբացատներում, գետերի ափերին, անտառաշերտերում, հանդիպում են նաև ուռուտներում, մեր պայմաններում առավել հաճախ հանդիպում են ընկուզենուտներում: Վարում են թաքնված կենսակերպ: Դրանք աչքի են զարնվում միայն ծառից-ծառ թռչելիս ու կարելի է հայտնաբերել երգով:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, նախկինում ունեին տարածման բավականին լայն արեալ, սակայն նկատվում է թվաքանակի նվազման տեղեկաց, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է բարձրացողում ծառերի հատմամբ: Թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Պիրուլները զարնանը վերադառնում են համեմատաբար ուշ՝ մայիսի կեսերին կամ վերջերին: Գարնանային վերադարձից հետո արուները ընտրում են բնադրավայրերը և սկսում երգել: Մի քանի օրից հետո հայտնվում են էգերը և զույգեր կազմում: Արուների երգը լսվում է մինչև հուլիսի վերջը: Մեր դիտարկումներով հասուն արուները երգում են մինչև ճտերի ծնվելը:



Նկ.82. պիրուլ

Բները կառուցում են նուրբ ճյուղերի խեչամյրերում, կամ 4-10մ բարձրության վրա կախում ցողուններից: Բնում առաջին ձուն լինում է մայիսի վերջերին: Թխսում են վերջին ձուն դնելուց հետո:

Արուն և էգը հերթափոխով թխսում են 13-15 օր: ճտերը բնում մնում են մոտ երկու շաբաթ: Այս թռչունների աշնանային չուն սկսվում է օգոստոսի կեսերին:

Եղնջաթռչնակ *Troglodytes troglodytes* (83)



Նկ. 83. եղնջաթռչնակ

Մեր ֆաունայի առավել փոքր թռչուններից է: Փետրածածկը շիկա-գորշավուն է, մուգ-գորշ լայնակի բծերով: Կոկորդը և կուրծքը բաց մոխրագույն են: Աչքերի վերևով անցնում է շիկա-գորշավուն շերտ: Կտուցը և ոտքերը գորշ են: Մարմնի երկարությունը 10-12 սմ է, թևերի բացվածքը՝ 15-17 սմ, կենդանի զանգվածը՝ 6-12 գ.: Վարում են թաքնված կենսակերպ, բնադրվում են ծածուկ և դժվարամատչելի տեղերում, ինչը բարդացնում է դրանց կենսաբանության լիարժեք ուսումնասիրությունները:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց ու հազվադեպ հանդիպող, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Կենսաբանությունը ուսումնասիրությունների կարիք ունի:

Անտառային նրբագեղիկ *Prunella modularis* (84)



Նկ. 84. անտառային նրբագեղիկ

Գնճղուկի չափերի թռչուններ են: Կտուցը ուղիղ է, գլխի վերին մասը, այտերը, մեջքը և թևերը շագանակագորշավուն՝ մուգ երկայնակի բծերով, պոչը՝ մոխրագորշավուն է: Հոնքերը, կոկորդը, կուրծքը, փորը՝ մոխրագույն: Կտուցը՝ սևագորշավուն, ոտքերը՝ բաց գորշավուն: Մարմնի երկարությունը 15-17 սմ է, թևերի բացվածքը՝ 21-23 սմ, կենդանի զանգվածը՝ 18-24 գ.:

Վարում են թաքնված կենսակերպ: Բնակվում են խիտ անտառներում, մացառուտներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, քիչ տարածված տեսակ, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Կենսաբանությունը ուսումնասիրությունների կարիք ունի:

Խայտաբղետ նրբագեղիկ *Prunella ocularis* (85)

Գլուխը ցայտուն նախշերով է, հասունի հոնքը՝ լայն, սպիտակ, ունկրնկալը և գագաթը՝ դարչնագույն-սև: Կուրծքը, մարմնի կողքերը բաց նարնջագույն են՝ թույլ խայտերով: Երիտասարդի



Նկ. 85 Խայտաբղետ նրբագեղիկ

փետրավորումն ավելի խամրած է, մարմինը ներքևից՝ բաց դարչնագույն՝ բազմաթիվ խայտերով: Թաքնված թռչուն է, երգում է գլաքարերին նստած: Կերակրվում է ցածր զառիթափերի, քարերի, թփուտների մոտ: Մարմնի երկարությունը 16-17 սմ է, թևերի բացվածքը՝ 22-23 սմ, կենդանի զանգվածը՝ 20-23գ.:

Խայտաբղետ նրբագեղիկները Արցախի ֆաունայում բնակվում են ալպյան և ենթալպյան գոտիներում՝ նախապատվությունը տալով ցածրահասակ գիհուտներին կամ խիտ մացառուտներին, առավել հաճախ կարելի է նկատել քարքարոտ վայրերում: Վարում է թաքնված կենսակերպ:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և քիչ տարածված, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Գարնանը վերադառնում են մարտի վերջերին, ապրիլի սկզբներին, երբեմն՝ փոքր-ինչ ուշ: Վերադառնալուց անմիջապես հետո արուները ընտրում են բնադրավայրերը և երգում: Բնադրվում են թփուտներում, խիտ մացառուտներում՝ միայն թփաբույսերի վրա: Դրանց բնային կենսակերպը, կենսաբանությունը և էկոլոգիան մեր պայմաններում լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Ալպիական նրբագեղիկ *Prunella collaris* (86)

Հասուն առանձնյակների փետրածածկը դարչնամոխրագույն է, մարմնի կողքերը՝ դարչնագույն՝ շիկակարմիր խայտերով, թևերը ծածկող սև փետուրների և պոչի ծայրերը՝ սպիտակ, կտուցի հիմքը՝ վառ դեղին, կոկորդը՝ սև ու սպիտակ զվերով: Երիտասարդների փետրածածկն ավելի խամրած է և դարչնագույն, թևերի ու պոչի ծայրերը՝ դեղնավուն: Մարմնի երկարությունը 17-18 սմ է, թևերի բացվածքը՝ 30-32,5 սմ, կենդանի զանգվածը՝ 20-23գ.:

Գերադասում են բնակություն հաստատել ալպյան կամ ենթալպյան գոտիների քարքարոտ վայրերում, աշանանը և ձմռանը իջնում են ցածրադիր գոտիներ:

Արցախում համարվում են նստակյաց և քիչ տարածված, թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ



Նկ. 86. ալպյան նրբագեղիկ
տվյալներն անբավարար են (DD):
Ալպյան նրբագեղիկի կենսաբանությունը և էկոլոգիան չի ուսումնասիրված:

Ջրաճնճղուկ *Cinclus cinclus* (87)



Նկ. 87. ջրաճնճղուկ
Կենդեխի չափերի թռչուններ են: Ունեն ամուր մարմնակազմ, պոչը կարճ է, վեր ցցված: Փետրածածկը մուգ գորշ է, մեջքին, թևերին և պոչին առկա են մոխրագույն բծեր: Կոկորդը և կուրծքը սպիտակ են, ոտքերն ու կտուցը՝ գորշ: Մարմնի երկարությունը 18-20 սմ է, թևերի բացվածքը՝ 26-31 սմ, կենդանի զանգվածը՝ 42-78գ.:
Մեր դիտարկումներով այս թռչունները բնակվում են գետերի, առվակների և երբեմն նաև ջրամբարների ափերին, սնվում են կամ ծանծաղուտներում, կամ լողալով:
Արցախի ֆաունայում նստակյաց ու նախկինում տարածված այս տեսակը այսօր գտնվում է խոցված վիճակում (VU):

Բնադրվում են ջրերից ոչ հեռու: Բազմանում են ապրիլ-մայիս ամիսներին: Բները կառուցում են ափամերձ քարախորշերում, ընկած ծառերի տակ, կամ ծառերի հարարմատային փչակներում: Բնում ունենում են 4-6 ձու: Թխում է էգը, թխսի տևողությունը 16-18 օր է, ճտերը բները լքում են 20-25 օրականում: Ենթակա են պահպանության:

Հարավային սոխակ *Luscinia megarhynchos* (88)

Մարմինը երկարավուն է, թաթերը՝ ուժեղ, պոչը՝ երկար, որը հնարավորություն է տալիս մարմինն ուղղահայաց դիրքում պահելու համար: Պոչի ծայրն ավարտվում է աղեղնաձև կամ ուղիղ կտրվածքով: Թևերը համեմատաբար կարճ են, ինչը նպաստում է անհարմար վիճակում արագ տեղափոխմանը: Հարավային սոխակները իրենց գույնով նմանվում են սովորական սոխակներին, սակայն մարմնի ստորին մասով փոքր-ինչ տարբերվում են: Արունների և էգերի մարմնի վերին մասը միագույն է, մուգ գորշավուն, շիկավուն բծերով, որն առավել լավ է արտահայտված վերնապոչին (սովորական սոխակների վերնապոչը շեկ չէ, այլ ձիթապտղագույն): Պոչը շեկ է: Մարմնի ստորին կողմը միագույն է՝ կեղտոտ սպիտակավուն, փոքր-ինչ մուգ է քուջի և կրծքի վրա ու համարյա սպիտակ՝ կոկորդի և փորի հետին մասը: Ոտքերը մուգ գորշ են: Մարմնի երկարությունը 16-20 սմ է, թևերի բացվածքը՝ 18-20 սմ, կենդանի զանգվածը՝ 25-30գ.:

Բնակվում են անտառներում, պուրակներում, թփուտներում, այգիներում և այն բոլոր վայրերում, որտեղ զարգացած են անտառաթփուտները և հարուստ են անտառային սփռոցները:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և հազվագյուտ տեսակ: Վարում են թաքնված կենսակերպ, սակայն հայտնաբերվում են իրենց հիանալի երգի շնորհիվ: Մեր պայմաններում հարավային սոխակի թվաքանակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Բնադրվում են գետնին՝ թփուտներում ու խիտ բուսականությունում, կամ թփուտների ցածր ճյուղերին: Վերադառնում են մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին: Ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին լսվում է դրանց երգը, որը համընկնում է հենց բնադրման շրջանին: Մայիսի վերջերին ձվադրում են, բնում ունենում են 4-5 ձու: Էգը վերջին ձուն դնելուց հետո թխսում է 13-14 օր: Ճտերին կերակրում են երկու ծնեղները: Ճտերը, դեռևս թռիչքի անընդունակ, բները լքում են 11-12 օրականում:



Նկ. 88. հարավային սոխակ

Ճտերը ցրվում են բավականին արագ: Աշնանային չուն սկսում են սեպտեմբերի սկզբներին: Ենթակա են պահպանության:

Սովորական սոխակ *Luscinia luscinia* (89)

Սովորական կամ արևելյան սոխակներն առավել հանրահայտն են ճնճողկազգիների մեջ: Գնճողկներից փոքր-ինչ խոշոր թռչուններ են: Հասուն թռչունների գույնը գունատ գորշ է, պոչը՝ ընդգծված շիկավուն: Կոկորդը և փորը ավելի բաց՝ բաց մոխրագորշավուն: Ոտքերը և կտուցը՝ բաց գորշ: Մատղաշ թռչունների մոտ, մինչև աշնան սկիզբը, գլխին, մեջքին և կրծքին առկա են գորշ լայնակի բծեր: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 24-27սմ, կենդանի զանգվածը՝ 21-28գ: Սովորական սոխակները գերադասում են բնադրվել խոնավասեր ու խիտ բուսուտներում:

Անտառային գոտիներում սոխակները լայնորեն տարածվում են անտառային առվակների և գետերի ափերով: Դրանց երբևէ կարելի է հանդիպել չոր տարածքներում, լքված այգիներում, պուրակներում, սակայն այստեղ բնադրվում են հազվագյուտ առանձնյակներ:



Նկ. 89. սովորական սոխակ

Արցախի ֆաունայում համարվում է բնադրող չվող և քիչ տարածված: Գտնվում են խոցված վիճակում (VU):

Վերադառնում են ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին: Բնադրվել սկսում են տերևների բացվելուց անմիջապես հետո: Բները կառուցում են գետնին՝ թփուտների տակ: Մայիսին էգերը դնում են 4-6 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը՝ 13-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Դեռևս թռչելու անընդունակ ձագերը լքում են բները, սակայն մոտ 10 օր կապված են լինում ծնողների հետ: Միջատակեր թռչուններ են: Ենթակա են պահպանության:

Արշալույսիկ *Erithacus rubecula* (90)



Նկ. 90. արշալույսիկ

Ծնողուկների չափերի թռչուններ են: Ունեն նուրբ կտուց և բավականին երկար ոտքեր: Հասուն թռչունների մարմնի վերին մասը, ինչպես նաև թևերը և պոչը, ձիթապտղագորշավուն են, ճակատը, այտերը, կոկորդը և կուրծքը՝ վառ շիկավուն, փորը՝ կեղտոտ սպիտակ, կտուցը և ոտքերը՝

մոխրագորշավուն: Մարմնի երկարությունը 13-14 սմ է, թևերի բացվածքը՝ 21-23 սմ, կենդանի զանգվածը՝ 14-18 գ.:

Արշալույսիկների գերադասելի վայրերն են անտառների խուլ ու խոնավ վայրերը: Վարում են թաքնված կենսակերպ, ցատկոտում են գետնին կամ թռչկոտում թփերի ստորին ճյուղերին: Սովորաբար արշալույսիկների բնային տարածքները մեծ չեն: Բացի անտառածածկ տարածքներից դրանց կարելի է հանդիպել այգիներում, պուրակներում և բնականերձ տարածքներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և տարածված տեսակ:

Սովորաբար 5-7 օրվա ընթացքում էզը կառուցում է բույնը, այդ ընթացքում արուն երգում է, երբեմն ուղեկցում ու պահպանում էզին: Բները կառուցում են ճեղքերում, ծառերի հարարմատային փշակներում կամ ծածուկ վայրերում: Չվաղում են մայիսին: Մեր դիտարկումներով սովորաբար տարվա ընթացքում ունենում են երկու սերունդ: Բնում ունենում են 5-6 ձու: Թխսում է էզը, թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերը բույնը լքում են կյանքի 13-րդ օրը:

Կապտափող սոխակ *Luscinia svecica* (91)

Ճնճուկների չափերի թռչուններ են: Արուների փետրածածկի գունավորումը վառ է: Գլխի վերին մասը բաց գորշավուն է՝ մուգ բծերով, պարանոցի հետին մասը, թևերը և մեջքը մոխրագորշավուն են, պոչը՝ վառ շիկավուն՝ մուգ կատարներով և միջին հատվածում սև շերտերով: Այտերը մոխրագորշավուն են, կոկորդը և կուրծքը վառ կապույտ են, ստորին ծայրերը երիզված են սև, սպիտակ և շեկ փետրաշարքով: Կոկորդի միջին հատվածում մեծամասնության մոտ առկա է սպիտակ կամ դեղին բիծ: Փորի կողմը բաց շիկաշագանակամոխրագույն է: Ոտքերը բաց գորշավուն են, կտուցը՝ համարյա սև: Էգերի փետրածածկում կապույտ գույնը փոխարինված է մոխրագույնի և սևի: Մարմնի երկարությունը 14-15 սմ է, թևերի բացվածքը՝ 22-23 սմ, կենդանի զանգվածը՝ 15-24գ.:

Թփուտային բուսուտներին բնորոշ թռչուններ են: Հիմնականում երգում են երեկոյան և գիշերը: Վարում են թաքնված կենսակերպ: Մեր պայմաններում համարվում են լեռնային առվակների և գետերի ափամերձ տարածքների բնակիչներ: Դրանց կարելի է հանդիպել նաև լեռնատափաստանային թփուտածածկ վայրերում:



Նկ. 91. Կապտափող սոխակ

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, բավականին հազվադեպ հանդիպող: Գտնվում են խոցված վիճակում (VU):

Գարնանը վերադառնում են ապրիլի կեսերին: Բները կառուցում են լավ թաքնված վայրերում, մասնավորապես նախորդ տարվա խոտածածկի մեջ, քարերի ճեղքերում: Մայիսի առաջին կեսերին էգերը դնում են 5-7 ձու: Էզը թխսում է 14 օր, ճտերին կերակրում են 15 օր, որից հետո ճտերը լքում են բները: Աշնանային չուն տեղի է ունենում սեպտեմբերի կեսերին: Ենթակա են պահպանության:

Սևուկ կարմրատուտ *Phoenicurus ochruros* (92)

Սովորական կարմրատուտից փոքր-ինչ խոշոր է: Արունների կուրծքը, դիմային մասը, կոկորդը սև են, գլխի վերին մասը, մեջքը և թևերը մոխրագորշավուն են: Երկրորդնային թափափետուրների հովիարը՝ սպիտակ: Ղեկափետուրները վառ շիկավուն են, նրանց միջին զույգերը՝ սև: Էգը միատարր մոխրագույն-դարչնագույն է, մեջքի և կրծքի միջև ցայտերանգությունը բացակայում է: Կտուցը սև է, ոտքերը գորշ: Մարմնի երկարությունը 14-21 սմ է, թևերի բացվածքը՝ 23-27 սմ, կենդանի զանգվածը՝ 15-17գ:



Սկ. 92. սևուկ կարմրատուտ

Սևուկ կարմրատուտները տիպիկ լեռնային կամ լեռնատափաստանային թռչուններ են, սակայն նրանց կարելի է հանդիպել բնակավայրերում, պուրակներում: Բնակավայրերում դրանց նախընտրելի տեղերն են տանիքները և պատերի ճեղքերը: Այս թռչունները բնակավայրերից դուրս գերադասում են ժայռոտ վայրերը, անգամ թափված ժայռաբեկորները: Մեր պայմաններում դրանց կարելի է հանդիպել ալպյան և մերձալպյան գոտիներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և համեմատաբար տարածված:

Ապրիլի վերջերին սկսում են կառուցել բները: Բնադրման համար ընտրում են ժայռաճեղքերը, քարակույտերի դատարկ խոռոչները: Բները կառուցում են էգերը: Երբեմն կարող են զբաղեցնել ծիծեռնակների լքված բները: Չվաղրում են մայիսի սկզբներին: Տարվա մեջ ունենում են երկու ձվադրում, երկրորդը հիմնականում լինում է հուլիսի վերջերին: Բնում ունենում են 4-6 ձու: Թխսում է էգը: Թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Ճտերը բները լքում են կյանքի 12-17-րդ օրը:

Սովորական կարմրատուտ *Phoenicurus phoenicurus* (93)

Ճնճուկների չափերի թռչուններ են: Արունների գլուխը, մեջքը և թևերը գորշամոխրագույն են, ճակատը՝ սպիտակ, կուրծքը՝ աղյուսակարմիր, փորը՝ շիկասպիտակավուն, պոչը վառ շիկավուն, միայն միջին զույգ ղեկափետուրներն են սևագորշավուն: Կտուցը սև է, ոտքերը՝ գորշ: Էգերն այնքան էլ վառ գունավորում չունեն, մոխրագորշավուն են: Մարմնի երկարությունը 14-15 սմ է, թևերի բացվածքը՝ 21-23 սմ, կենդանի զանգվածը՝ 13-20գ.:

Բնակվում են լուսավոր լայնատերև անտառներում և խույս են տալիս մութ ու խիտ անտառներից: Նրանց կարելի է հանդիպել այգիներում, պուրակներում և բնակավայրերում: Սովորական են անտառներում, ինչպես նաև լավ կանաչապատ քաղաքներում:

Արցախում սովորական կարմրատուտները համարվում են բնադրող ու չվող և լայն տարածված տեսակ:



Նկ. 93. սովորական կարմրատուտ

Բնադրվում են անտառաբացատներում, այգիներում, տանիքներում, պատերի ճեղքերում: Բնադրման վայրեր առաջինը գալիս են ծեր արունները: Գարնանային վերադարձը կատարում են մարտի վերջերին, իսկ զանգվածային վերադարձն արդեն ապրիլի վերջերին: Վերադարձից անմիջապես հետո սկսում են հարմար բնադրավայրերի փնտրումը: Մայիսին էզը դնում է 5-8 ձու: Թխսում է միայն էզը, թխսի տևողությունը՝ 13-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Աշնանյին չուն կատարում են հոկտեմբերի կեսերին կամ վերջերին:

Կարմրափորիկ կարմրատուտ *Phoenicurus erythrogaster* (94)



Նկ. 94. կարմրափոր կարմրատուտ

Բավականին խոշոր կարմրատուտ է, որը մյուսներից տարբերվում է թևերին սպիտակ շերտով: Արունների գլխին և թևերին առկա է սպիտակ շերտ: Մեջքը, թևերը, կոկորդը, այտերը սև են, պոչը, կուրծքը, փորիկը և վերնապոչը՝ շիկա-կարմրավուն: Էզը և մատղաշ թռչունները գորշա-մոխրագույն են, ներքևից բաց, ժանգաշիկավուն պոչով: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 28-30 սմ, կենդանի զանգվածը՝ 23-30գ.:

Կարմրափոր կարմրատուտները նախընտրում են բնակվել լեռների անտառազուրկ գոտիներում, լեռնամարգագետիններում, լեռնատափաստաններում: Բնադրվում են ժայռերի ճեղքերում, քարերի դատարկ խոռոչներում: Բնում ունենում են 3-5 ձու:

Արցախի ֆաունայում համարվում է պատահական չվահյուր, դրանց կենսաբանությունը և էկոլոգիան լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն:

Սև կեռնեխ *Turdus merula* (95)

Սարյակներից խոշոր թռչուններ են: Արունների փետրածածկը միագույն սև է, կտուցը՝ վառ դեղին, ոտքերը՝ մուգ գորշ: Էգերի փետրածածկը մուգ գորշ է, կրծքին՝ շիկավուն բծերով և առավել բաց կոկորդով: Կտուցը բաց գորշ է, ոտքերը՝ գորշավուն: Մատղաշ թռչունները նման են էգերին: Մարմնի երկարությունը 25-28 սմ է, թևերի բացվածքը՝ 35-40 սմ, կենդանի զանգվածը՝ 75-115 գ.:

Հանդիպում են տարբեր տիպի անտառներում, թփուտածածկ լեռնատափաստաններում, մարգագետիններում: Բուլոր վայրերում գերադասում են խոնավ ու ստվերոտ հատվածները: Արցախում սև կեռնեխներին կարելի է հանդիպել ամենուր՝ այգիներում, պուրակներում, բնակավայրերում: Ներկա պայմաններում սև կեռնեխները բարեհաջողությամբ յուրացնում են ագրոլանդաֆտները և չնայած վարում են թաքնված կենսակերպ, սակայն ակնհայտ նկատելի է դրանց սինանթրոպացման ձգտումները:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և լայն տարածված տեսակ:

Բազմացման սեզոնները սովորաբար համնկնում են կերային ռեսուրսների հասանելիությանը,



Նկ.95. սև կեռնեխ

ինչև առավելապես կարևոր է ճտերի կերակրման համար: Սև կեռնեխների բնադրման վայրերում հայտնվելու ժամկետները դժվար է արձանագրել, քանի որ նստակյաց են: Ուստի բազմացման սկիզբն արդարացիորեն կարելի է համարել դրանց ակտիվ երգի ժամկետները: Մեր պայմաններում սև կեռնեխների ակտիվ երգի զագաթնակետին հաջորդում է ձվադրումը, իսկ երկրորդին՝ ճտերի կերակրումը: Մեր տվյալներով այս թռչունների բազմացումը սկսվում է մարտից ու ավարտվում հունիսին: Այդպիսի ձգվածության հիմնական պատճառներից է բնակատեղերի ուղղահայաց գոտիկանությունը՝ նախալեռնային գոտում ձգված է և տևում է մոտ 4 ամիս, իսկ լեռնային գոտիներում՝ մոտ 3 ամիս: Մեր պայմաններում տարվա մեջ ունենում են երկու սերունդ: Առաջին ձվադրումը կատարվում է մարտի կեսերին կամ ապրիլի սկզբներին, երկրորդը՝ մայիսի առաջին կեսերին կամ վերջերին: Բնուն ունենում են 4-5 ձու: Թխսում է միայն էգը: Թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերը բները լքում են կյանքի 12-13-րդ օրը՝ դեռ թռչիքի անընդունակ:

Սևախածի կեռնեխ *Turdus atrogularis* (96)

Արունների մոտ կզակից մինչև կուրծքը սևագորշ է, մարմնի վերին մասը գորշամոխրագույն: Գարնանը արունները որոշվում են անսխալ, չնայած կրծկալի սև գույնը և չափերը ենթարկվում են անհատական փոփոխությունների դրանց գույնը կարող է փոփոխվել մուգ գորշից մինչ թավշյա սևը, կարող են ունենան նաև սպիտակ բծեր: Էգերի քուռին առկա են մուգ բծեր, որոնք կարող են շատ թե քիչ ձուլվել կրծկալին: Սինկեռնեխից տարբերվում են մարմնի վերին մասի՝ գլխից մինչև պոչ միագույն գույնով, մարմնի ստորին մասի շեկ բծերի բացակայությամբ: Մարմնի երկարությունը 24-27 սմ է, թևերի բացվածքը՝ 40-43սմ, կենդանի զանգվածը՝ 80-115գ:

Սևախաճի կեռնեխները մեր պայմաններում հանդիպում են քարքարոտ ու ժայռոտ լանդշաֆտներում, նոսր անտառներում, թփուտներում, պտղատու այգիներում, դրանց կարելի է հանդիպել նաև անտառների եզրերին, գետերի և առվակների ափերին:



Նկ. 96. սևախաճի կեռնեխ

Արցախի ֆաունայում համարվում են չվող և հազվադեպ են, այս տեսակի թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Սևախաճի կեռնեխների գարնանային վերադարձը տեղի է ունենում ձմեռային շրջանում: Ապրիլին ընտրում են իրենց բնադրավայրերը: Սովորաբար բները կառուցում են ոչ բարձր ծառերին, փչակներում, թփերում, երբեմն նաև գետնին: Բնադրվում են ոչ մեծ խմբերով կամ զույգերով: Մայիսի սկզբներին բնում ունենում են 3-7 ձու: Թխսի տևողությունը 10-12 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Ճտերը բները լքում են 14-15 օրականում: Աշնանային չուն սկսում են օգոստոսի վերջերին, սակայն այն կարող է տևել մինչև հոկտեմբերի վերջը:

Սոսնձակեռնեխ *Turdus viscivorus* (97)



Նկ. 97 սոսնձակեռնեխ

Կեռնեխներից առավել խոշորն է: Մարմնի վերին մասը, թևերը և պոչը գորշամոխրագույն է, ստորին մասը՝ սպիտակավուն է, կրծքի մասը՝ շիկաժանգավուն բծերով և բավականին խոշոր սևագորշ բծերով:

Կտուցը դեղնամոխրագույն է, ոտքերը բաց գորշ են: Մատղաշների մարմնի վերին մասը ծածկված է գորշ և սպիտակ բծերով: Մարմնի երկարությունը 26-30 սմ է, թևերի բացվածքը՝ 45-48 սմ, կենդանի զանգվածը՝ 100-130գ.:

Սոսնձակեռնեխները բնակվում են խառն անտառներում, թփուտներում, պտղատու այգիներում, ծառածակ գետափերում, լեռնատափաստաններում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և ունեն հանդիպման ցածր հաճախականություն, թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնային շրջանում սոսնձակեռնեխները դառնում են բավականին զգույշ, այդ պատճառով մեր պայմաններում դրանց բնային կենսաբանությունը թույլ է ուսումնասիրված: Սակայն դիտարկումներով պարզել ենք, որ ձվադրում է երկու անգամ:

Երգող կեռնեխ *Turdus philomelos* (98)

Սև կեռնեխից չափերով փոքր թռչուններ են: Մարմնի ներքին մասը մոխրագորշավուն է ձիթապտղագույն բծերով, աչքի վերևում նկատելի են առավել բաց փետուրներ: Ստորին կողմը սպիտակ է, կուրծքը՝ շիկաշագանակագույն, բացի դրանից կուրծքը, փորի առջևի մասը և մարմնի կողքերը ծածկված են երկայնակի սևագորշ բծերով, որոնք թռչնին տալիս են բղետ երանգ: Կտուցը և



Նկ. 98. Երգող կեռնեխ

ոտքերը բաց գորշ են: Մարմնի երկարությունը 22-24 սմ է, թևերի բացվածքը՝ 34-337 սմ, կենդանի զանգվածը՝ 42-78գ.:

Երգող կեռնեխները զբաղեցնում են ամենաբազմազան վայրերը՝ անտառներ, թփուտներ, այգիներ, պուրակներ: Դրանք հաճույքով զբաղեցնում են լեռնատափաստանները, անտառաբացատները, գետերի եզրերները:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց, քիչ տարածված: Թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնադրումը սկսում են ապրիլի կեսերին, տարվա մեջ ունենում են երկու սերունդ: Բնում ունենում են 4-6 ձու, թխտում է էզը, որը տևում է 13-14 օր: Ճտերին կերակրում են 13 օր, որոնք արդեն լքում են բները:

Սինկեռնեխ *Turdus pilaris* (99)

Ունեն համարյա նույն չափերը, ինչ սև կեռնեխները: Գլուխը, պարանոցի վերին մասը և վերնապոչը մոխրագույն են, պոչը՝ մուգ գորշավուն, մեջքը՝ շիկագորշավուն, կուրծքը՝ ժանգաշիկավուն, կոկորդը և փորիկը սպիտակ: Ինչպես կոկորդը, այնպես էլ կուրծքը ծածկված են գորշ բծերով, որոնք կրծքին ունեն V-ձև տեսք: Կտուցը գորշադեղնավուն է՝ մուգ կատարով, ոտքերը՝ գորշ: Մարմնի երկարությունը 25-27 սմ է, թևերի բացվածքը՝ 40-45 սմ, կենդանի զանգվածը՝ 75-95գ.:

Նախընտրելի բնակատեղերն են անտառեզրերը, պտղատու այգիները, անթրոպոգեն լանդշաֆտները, լեռնատափաստանները:

Արցախի ֆաունայում համարվում են ձմեռող և տարածված տեսակ:

Որպես օրենք բնակվում են գաղութներով, որտեղ կարող են հավաքվել 2-3-ից մինչև մի քանի տասնյակ զուգեր: Բնադրվում են բավականին վաղ, անգամ ապրիլի առաջին կեսերին, սակայն քանի

որ որոշ զույգեր կարող են տարվա մեջ ձվադրել երկու անգամ, բներում ձվերը հանդիպում ենք մինչև հունիս: Բները կառուցում են ծառերին: Բնում ունենում են 4-7 ձու: Թխսում է էգը: Թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները:



Նկ.99 սինկեռնեխ

Սևագլուխ շահրիկ *Sylvia atricapilla* (100)

Մյուս շահրիկներից տարբերվում են փետրածածկի առավել ընդգծված երանգով՝ արունների գլխի վերևը սև, էգերինը՝ շիկագորշ: Բոլոր թռչունների մեջքի կողմը մոխրագորշավուն, թևերը և պոչը ավելի մուգ, ծխամոխրագույն: Գլխի կողքերը, կուրծքը և փորիկը բաց մոխրափայլուն է: Կտուցը և ոտքերը՝ մոխրագույն: Մարմնի երկարությունը 14-15 սմ, թևերի բացվածքը՝ 22-24 սմ, կենդանի զանգվածը՝ 14-23գ.:



Նկ. 100 սևագլուխ շահրիկ

Բավականին շարժուն թռչուններ են: Դրանց կարելի է հանդիպել ամենուր՝ անտառներում, թփուտներում, լեռնատափաստաններում, այգիներում, պուրակներում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, քիչ են տարածված, թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Գարնանային վերադարձը ապրիլի սկզբներին է կամ կեսերին, բնադրվում են մայիսի վերջերին, բնում ունենում են 5-6 ձու, թխսում է ինչպես էգը, այնպես էլ արուն: Թխսի տևողությունը 12-14 օր է:

ճտերը բները լքում են մոտ 13 օրական հասակում: Աշնանային չուն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին է: Ենթակա են պահպանության:

Խայտաբղետ ճանճորս *Ficedula hypoleuca* (101)

Անհատական բազմաձևության հետաքրքիր համադրությամբ և սեռական դիմորֆիզմով օժտված թռչուններ են: Հասուն արուների գույնը միատիպ է՝ վերևից միաերանգ մոխրագորշավուն է, սպիտակ կոկորդով և բաց մոխրասպիտակավուն կրծքով ու փորիկով, թևերին ունեն սպիտակ բծեր: Երկրորդնային թափափետուրների և թևերը ծածկող փետուրների գագաթները սպիտակ են: Արուները ունենում են մի քանի տիպի երանգ, որոնցից առավել ընդգծվածը գորշասևավունն է և մոխրագորշավունը: Մարմնի երկարությունը 13-14 սմ է, թևերի բացվածքը՝ 22-24 սմ, կենդանի զանգվածը՝ 12-19գ.:



Նկ. 101 Խայտաբղետ ճանճորս

Բնակվում են բոլոր տիպի անտառներում, այգիներում, պուրակներում, պտղատու այգիներում: Հիմնականում մնում են ծառերի սաղարթում: Բների համար ընտրում են բարձրացող ծառերը:

Արցախում համարվում են բնադրող չվող և գտնվում են խոցված վիճակում (CV):

Գարնանային վերադարձը՝ ապրիլի երկրորդ կեսին է: Բնադրվում են հիմնականում փչակներում, հաճախ զբաղեցնում են պուրակների արհեստական թռչնաբները: Դնում են 6-8 ձու: Թխսում է էգը՝ 13-14 օր, ճտերը բները լքում են 14 օրականում: Աշնանային չուն՝ օգոստոսի վերջից մինչև սեպտեմբերի կեսերը: Ենթակա են պահպանության:

Փոքր ճանճորս *Ficedula parva* (102)

Փոքր թռչուն է: Գլխի վերին մասը, պարանոցը, մեջքը, թևերի վերին մասը, վերնապոչը և պոչը գորշամոխրագույն է, պոչի կատարները՝ սպիտակ: Ծայրային ղեկափետուրներին առկա են սպիտակ բծեր: Արուների փետրածածկի ստորին մասը բազմաձև է, համարյա 50%-ի մոտ կոկորդը և կուրծքը վառ շեկ են, իսկ կրծքի և ենթապոչի ստորին մասը՝ մոխրագորշավուն: Արուների մյուս մասը կոկորդին շեկ երանգը չունեն: Էգերի գունային երանգը նման է արուների երկրորդ տիպին: Մարմնի երկարությունը 11-12 սմ է, թևերի բացվածքը՝ 19-21սմ, կենդանի զանգվածը՝ 9-13գ.:

Վարում է թաքնված կենսակերպ: Բնակվում են հիմնականում փակ ու մութ անտառներում, հին այգիներում, պուրակներում, մացառուտներում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Գարնան վերադարձը լինում է ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին: Մայիս-հունիս ամիսներին էգերը դնում են 5-7 ձու: Թխսում է էգը: Թխսի տևողությունը 13 օր է, համարյա այդքան օր էլ կերակրում են ճտերին: Հնարավոր է տարվա մեջ ունենում են երկու սերունդ: Ենթակա են պահպանության:



Նկ. 102. փոքր ճանճորս

Սպիտակավիզ ճանճորս *Ficedula albicollis* (103)



Նկ. 103. սպիտակավիզ ճանճորս

Արունները իրենց գունային երանգով նման են առավել վառ գունային երանգով խայտաբղետ ճանճորսներին, սակայն տարբերվում են ծոծրակի և պարանոցի հետին մասի սպիտակ գույնով ու առաջնային թափափետուրների վրա սպիտակ «հայելիով»: Էգերը նման են խայտաբղետ ճանճորսերի էգերին, սակայն տարբերվում են առաջնային թափափետուրների վրա ոչ մեծ սպիտակ բծերով: Մարմնի երկարությունը 13-14 սմ է, թևերի բացվածքը՝ 22-25 սմ, կենդանի զանգվածը՝ 10-17գ.:

Բնակվում են տարբեր տիպի լայնատերև անտառներում, որտեղ առկա են փչակավոր ու հաստաբուն ծառեր, դրանց կարելի է հայտնաբերել նաև պտղատու այգիներում, թփուտներում, անտառաբացատներում:

Արցախի ֆաունայում համարվում են պատահական չվահյուր: Թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Մեր պայմաններում այս տեսակի բնային էկոլոգիան և առհասարակ կենսաբանությունը ուսումնասիրված չէ:

Մեծ երաշտահավ *Parus major* (104)

Ճանճուկի չափերի հանրահայտ թռչուն է: Գլուխը և կոկորդը սև, հասուն թռչունների գլուխը՝ մետաղական երանգով: Գլխի կողքերին, աչքերից ցած, առկա են սպիտակ բծեր: Մեջքը՝ մոխրականաչավուն է, թափափետուրները և ղեկափետուրները՝ մոխրագույն են: Կուրծքը և փորը դեղին է, կրծքի միջնամասով անցնում է սև շերտ, որն արունների մոտ ստորին մասում լայնանում է ու հասնում մինչև ենթապոչ, իսկ էգերի ու մատղաշների մոտ աստիճանաբար փորի վրա խամրում է:

Կտուց սև է, ոտքերը՝ կապտամոխրագույն: Մարմնի երկարությունը 13-15 սմ է, թևերի բացվածքը՝ 22-25 սմ, կենդանի զանգվածը՝ 13-24գ.:

Մեր ֆաունայում բնակվող թռչուններից առավել էվրիտոպներից է: Բնակվում է ամենաբազմազան անտառներում, թփուտներում, այգիներում, պուրակներում, գյուղերում, քաղաքներում և ամառանոցներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց և լայն տարածված տեսակ:

Արունները սկսում են երգել դեռևս հունվարին, երբ սկսում է եղանակը տաքանալ, սակայն ինտենսիվորեն երգում են գարնանը: Ջուլգերի մեծամասնությունը բնադրվում է ծառերի փչակներում,



Նկ. 104. մեծ երաշտահավ

թփուտներում, պատերի ճեղքերում, պաստառների տակ և այլ նպաստավոր վայրերում: Ապրիլին սկսում են բների կառուցումը և մայիսի կեսերին ձվադրում ու թխսում: Բնում ունենում են 9-14 ձու: Թխսում է միայն էգը, թխսի տևողությունը 13 օր է, ճտերին կերակրում են երկու ծնողները: 18 օրական հասակում ճտերը լքում են բները: Չվաղմամ երկրորդ փուլը հունիս- հուլիս ամիսներն է, այս անգամ բնում ունենում են քիչ քանակությամբ ձվեր՝ 7-9 ձու: Չմռանը մեծ երաշտահավերը տեղափոխվում են բնակավայրեր:

Երկնագույն երաշտահավ *Parus caeruleus* (105)



Նկ. 105. երկնագույն երաշտահավ

Արտաքինից նման է մեծ երշտահավին, սակայն չափերով փոքր: Գլխի վերի մասի գույնը վառ կապույտ է, թևերը և պոչը մոխրակապտավուն: Ճակատը և այտերը սպիտակ են, կտցի հիմքից աչքերով դեպի ծոծրակ է անցնում կապույտ շերտ: Կուրծքը և փորիկը սպիտակ է, կոկորդին առկա է կապտասևավուն ոչ մեծ ուղղանկյուն եռանկյունի տեսքով փետրածածկ: Սեռական երկձևությունն արտաքինից չի արտահայտված: Կտուցը և ոտքերը մոխրագույն են: Մարմնի երկարությունը 11-13 սմ է, թևերի բացվածքը՝ 18-21 սմ, կենդանի զանգվածը՝ 9-17գ.:

Մեր պայմաններում երկնագույն երաշտահավերը բնակվում են անտառամերձ տարածքներում, անտառաբացատներում, թփուտածածկ լեռնատափաստաններում, այգիներում, պուրակներում, աշնանը և ձմռանը դրանց կարելի է հանդիպել քաղաքներում, գյուղերում:

Արցախում համարվում են նստակյաց ու քիչ տարածված տեսակ: Նախկինում մինչև 2007թ, այս տեսակը կարելի էր համարել սովորական, այսօր ունեն հանդիպման ցածր հաճախականություն ու թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնադրվում են փչակներում, բարձր թփերի վրա: Ապրիլի վերջերին կամ մայիսի կեսերին բնում ունենում են 8-13 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 14 օր է: 18 օրական հասակում ճտերը լքում են բները: Ենթակա են պահպանության:

Սև երաշտահավ *Parus ater* (106)



Նկ. 106. սև երաշտահավ

Երաշտահավերից առավել փոքրն է: Փետրածածկի գույնը մուգ է: Կոկորդը, կրծքի և գլխի վերին մասերը, ծոծրակի կողքերը սև են, այտերը և ծոծրակի միջին մասը սպիտակ են: Մեջքը, թափափետուրները և դեկափետուրները մոխրագույն են, փորը՝ գորշամոխրագույն, կտուցը և ոտքերը՝ մոխրագույն: Մատղաշների այտերը դեղնավուն են: Մարմնի երկարությունը 10-12 սմ է, թևերի բացվածքը՝ 17-21 սմ, կենդանի զանգվածը՝ 8-11գ.:

Բավականին շարժուն թռչուններ են, օրվա մեծ մասն անցկացնում են ծառերի սաղարթում: Կարելի է հանդիպել այգիներում, պուրակներում, խառն անտառներում, լեռնատափաստանների թփուտներում, աշնանը և ձմռանը նաև՝ մարդու բնակարանին մոտ:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց ու քիչ տարածված տեսակ: Թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Մեր պայմաններում այս թռչունների էկոլոգիան լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի:

Սովորական սիտեղ *Sitta europaea* (107)

Ճնճղուկից փոքր-ինչ խոշոր թռչուններ են: Կտուցը բավականին ուղիղ է, երկար ու սրածայր: Ոտքերը կարճ են՝ երկար ու կառչուն մատներով: Մարմնի վերին մասը միագույն կապտամոխրագույն է, թևերը և պոչը՝ ավելի մուգ գորշավուն: Կտցից աչքերով մինչև ակնջների հետին եզրը անցնում է սև շերտ: Մարմնի ստորին մասի գույնը փոփոխական է և կարող է լինել մաքուր սպիտակից մինչև շիկա-ժանգագորշավուն: Արունները ենթապոչին ունենում են շագանակագորշավուն, իսկ էգերը՝ խամրած գորշավուն բծեր: Մարմնի երկարությունը 14-17 սմ է, թևերի բացվածքը՝ 25-29 սմ, կենդանի զանգվածը՝ 22-26գ.:



Նկ. 107. սովորական սիտեղ

Բնակվում են լավ լուսավորվող լայնատերև անտառներում, որտեղ առկա են բարձրացող ծառատեսակներ: Հետքնային շրջանում դրանց կարելի է հանդիպել թփուտներում, պուրակներում, անտառաշերտերում, իսկ աշնանը և ձմռանը նաև այգիներում:

Արցախում համարվում են նստակյաց և քիչ տարածված տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Մեր պայմաններում բնային կենսաբանությունը և էկոլոգիային նվիրված հարցերը լիարժեք ուսումնասիրությունների կարիք ունեն:

Սովորական դրախտապան *Emberiza citrinella* (108)



Նկ. 108. սովորական դրախտապան

Ճնճուկների մեծության թռչուններ են: Փետրածածկի գույներում արտահայտված է սեռական երկձևությունը: Հասուն արուների գլխի վերին մասը, կոկորդը և կուրծքը կիտրոնադեղին է, գլխի կողքերով և այտերով անցնում է փետրածածկի մոխրագորշավուն շերտ: Մեջքը մոխրագորշավուն է՝ մուգ բծերով, վերնապոչը շիկագորշավուն է, թևերը և պոչը գորշամոխրագույն են: Կուրծքը ժանգագորշավուն է՝ մոխրագույն բծերով, այդպիսի բծերով են ծածկված նաև մարմնի կողքերը: Հասուն էգերի և մատղաշների փետրածածկի երանգում առկա է կանաչամոխրագույն գույնը: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 24-30 սմ է, կենդանի զանգվածը՝ 20-36գ.:

Սովորական դրախտապանը համարվում է անտառաբացատների, անտառաշերտերի, թփուտների բնակի, գերադասում է չոր, լուսավոր ու բաց տարածությունները:

Արցախի ֆաունայուն համարվում են ձմեռող ու տարածված տեսակ:
Բնային կենսաբանությունը և էկոլոգիան ուսումնասիրված չէ:

Կորեկնուկ *Miliaria Calandra* (109)



Նկ. 109. Կորեկնուկ

Բավականին խոշոր բարեկազմ մարմնով, պոչի համեմատությամբ կարճ մարմնով դրախտապան է: Կտուցը խոշոր է, վերնակտուցի և ենթակտուցի միջև, կենտրոնական մասում, առկա է ճեղք: Մարմնի ընդհանուր գունավորումը գորշադեղնավուն է՝ մուգ բծերով: Սեռական դիմորֆիզմ չունի: Մարմնի երկարությունը 16-17 սմ է, թևերի բացվածքը՝ 26-32 սմ, կենդանի զանգվածը՝ 35-65գ.:

Բնակվում են բաց բուսածածկ տարածքներում, որտեղ առկա են հատված ծառեր, թփուտներ: Դրանց երբեմն կարելի է արձանագրել գետերի, առվակների հովիտներում, մշակովի դաշտերում, լեռնատափաստաններում, ենթալպյան մարգագետիններում:

Արցախում համարվում է նստակյաց ու տարածված տեսակ:

Բնադրվում են ապրիլի վերջերին, բները տեղադրում են գետնին, բնում ունենում են 4-6 ձու: Թխսում է էզը, թխսի տևողությունը 12-14 օր է: Տարվա մեջ ունենում են երկու սերունդ, երկրորդը՝ հունիս-հուլիս ամիսներին: Ճտերը բները լքում են 9-13 օրականում:

Լեռնային դրախտապան *Emberiza cia* (110)

Լեռնային դրախտապանների փոքրիկը շիկավուն է, փետրածածկի երանգում բացակայում են ձիթապտղագույն և դեղին երանգները: Մարմնի վերին մասը արունների մոտ ծխամոխրագույն է՝ սև, երկայնակի շերտերով, էգերի մոտ՝ մոխրագորշ, գորշավուն շերտերով: Սեռական երկձևությունն արտահայտված է մարմնի ստորին մասի գունային երանգում՝ արունների մոտ շագանակաշիկավուն է, էգերի մոտ՝ սպիտակամոխրագույն: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 22-28 սմ, կենդանի զանգվածը՝ 19-28գ.:

Բնակվում են լեռնային անտառներում, թփուտածածկ տարածքներում, այգիներում, պուրակներում, ճանապարհի եզրերին: Դրանց կարելի է հանդիպել նաև քարքարոտ լեռնալանջերին, կիսանապատներում, ճանապարհի եզրերին: Բավականին շարժուն թռչուններ են և անընդհատ գտնվում են քոչերի մեջ:

Արցախի ֆաունայուն համարվում է նստակյաց ու տարածված տեսակ:

Ապրիլի վերջերին տեղափոխվում են բնադրավայրեր: Բները կառուցում են գետնին և արդեն մայիսի սկզբներից սկսում են ձվադրել: Չվադրման ժամկետները տարբեր են և կախված են կլիմայական պայմաններից ու բնադրավայրերի ուղղահայաց գոտիկանությունից:



Նկ. 110. Լեռնային դրախտապան

Չվաղորում են ապրիլի վերջերից մինչև մայիսի վերջերը: Բնում ունենում են 4-5 ձու: Թխսում է եզը, թխսի տևողությունը 12-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները, ճտերը բները լքում են կյանքի 10-13-րդ օրը: Տարվա մեջ ունենում են երկու սերունդ, երկրորդ ցիկլը սկսվում է հունիսի կեսերին կամ վերջերին:

Ժայռային դրախտապան *Emberiza buchanani* (111)



Նկ. 111. Ժայռային դրախտապան

Այգու դրախտապանից փոքր է, սակայն երկար պոչով, կարմրավուն կտցով և աչքերի շուրջը սպիտակ օղակով նմանվում են այգու դրախտապանին: Արուները այգու դրախտապանի արուից տարբերվում են կտնառթին կանաչ երանգի բացակայությամբ, էգերը բացի նշվածից, տարբերվում են նաև կտնառթին և կրծքին մուգ բծերի բացակայությամբ: Փետրածածկի գունային երանգում սեզոնային փոփոխություններն աննկատ են: Մարմնի երկարությունը 15-18 սմ է, թևերի բացվածքը՝ 23-24 սմ, կենդանի զանգվածը՝ 17-26գ.:

Բնակվում են լեռների լանջերին, կիրճերում, հանդիպում են նաև լեռնատափաստանային թփուտներում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող, հազվագյուտ տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնային կենսաբանությունը և էկոլոգիան մեր պայմաններում ուսումնասիրված չեն:

Սևագլուխ դրախտապան *Emberiza melanocephala* (112)



Նկ. 112. սևագլուխ դրախտապան

Բարեկազմ կեցվածքով թռչուն է: Հասուն արուի գլուխը սև է, մարմինը վերևից՝ դարչնագույն-չիկակարմիր, թևերը՝ սևավուն, մարմինը՝ ներքևից՝ դեղին: Էգի մարմինը վերևից դարչնագույն-նոխրագույն է, ներքևից՝ փոփոխական բաց դեղին: Երիտասարդն ավելի բաց գույնի է և խայտավոր, ներքնապոչը՝ բաց դեղին: Մարմնի երկարություն 16-17 սմ է, թևերի բացվածքը՝ 26-30 սմ, կենդանի զանգվածը՝ 23-30 գրամ:

Բնակվում է բաց թփուտային տարածքներում՝ կիսաանապատներից մինչև ենթալպյան մարգագետիններ: Դրանց կարելի հանդիպել ճանապարհների եզրերին, այգիներում, կլուտուրական լանդշաֆտներում:

Արցախի ֆաունայում համարվում են բնադրող չվող և լայն տարածված, սակայն վերջին տարիներին նկատվում է դրանց թվաքանակի անկում:

Գարնանային վերադարձը ապրիլի վերջերին է կամ մայիսի առաջին տասնօրյակում: Ձուլգերը ձևավորվում են մայիսի երկրորդ տասնօրյակից, որը տևում է մինչև հունիսի վերջը: Ձուլավորմանը համընթաց էզր զբաղվում է բնի կառուցմամբ: Բնադրում են գետնին, ցածր թփուտներին, հազվադեպ՝ ծառերին: Ձվերը բներում հայտնվում են մայիսի վերջից: Դնում են 3-5 ծու: Թխսակալում է էզր՝ 13-14 օր: Ձագերը բներում հայտնվում են հունիսի առաջին կեսից մինչև հուլիսի առաջին տասնօրյակը, կրկնակի բնադրման դեպքում՝ մինչև հուլիսի վերջը: Բույնը լքում են կյանքի 9-10-րդ օրը: Ձագերին կերակրում է էզր: Աշնանային չուն սկսում են օգոստոսի կեսին և տևում է մինչև սեպտեմբերի առաջին կեսը: Ենթակա են պահպանության:

Ազնվասարտկ *Carduelis spinus* (113)

Ճնճողուկներից բավականին փոքր թռչուններ են: Հասուն արուների փետրածածկը դեղնականաչավուն է, գլխի վերին մասը և կոկորդի բիծը՝ սևագորշ, մեջքը կանաչ է, պոչը և թևերը կանաչագորշավուն՝ դեղին բծերով, կրծքի կողքերով երկայնակի մուգ գծեր են: Էգերի և մատղաշների մոտ գույնն ավելի խամարած է, կանաչամոխրագույն է, երկայնակի բծերից մախշերն ավելի լավ զարգացած: Մարմնի երկարությունը 11-13 սմ է, թևերի բացվածքը՝ 20-23 սմ է, կենդանի զանգվածը՝ 11-18գ.:

Բնակվում են խառն անտառներում, անտառաբացատներում, թփուտներում, պուրակներում, երբեմն կարելի է հանդիպել նաև այգիներում:

Արցախի ֆաունայում համարվում են ձմեռող չվող, քիչ տարածված, վերադարձը լինում է աշնան երկրորդ կեսին, հետադարձը՝ ապրիլի կեսին կամ վերջին: Թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):



Նկ. 113. ազնվասարեկ
 Բնային կենսաբանությունը ուսումնասիրված չէ:

Կարմրակատար *Carduelis carduelis* (114)



Նկ. 114. կարմրակատար

Փետրածածկի ընդգծված երանգով, ճնճողակներից փոքր չափերով թռչուններ են: Հասուն առանձնյակների ճակատի և կզակի փետրածածկը կարմիր է, գագաթի միջին մասը և ականջի ծածկող փետուրները սև են, այտերը և գագաթի կողքերը՝ սպիտակ: Մեջքը մոխրագորշավուն է, կուրծքը՝ շագանակագույն, վերնապոչը սպիտակ, թևերի և պոչի փետուրները սև են՝ սպիտակ կատարներով: Թևերին տեսանելի է մեծ դեղին «հայելին»: Կտուցը և ոտքերը բաց գորշ են: Մատղաշ թռչունների գլխի փետրածածկում կարմիր և սպիտակ երանգը բացակայում է, ընդհանուր գունավորումը գորշ է՝ երկայնակի մուգ բծերով: Մարմնի երկարությունը 12-14 սմ է, թևերի բացվածքը՝ 21-26 սմ, կենդանի զանգվածը՝ 11-23գ.:

Բնադրվում են լայնատրև ու խառը անտառներում, անտառաբացատներում, պուրակներում, այգիներում: Աշնանը և ձմռանը մնում են երամներով, որոնք ապրիլին մասնատվում են առանձին զույգերի: Դրանց կարելի է հանդիպել բնակավայրերում, կուլտուրական լանդշաֆտներում:

Արցախի ֆաունայում համարվում են նստակյաց ու թիչ տարածված, թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Կարմրակատարները սկսում են երգել փետրվար-մարտ ամիսներին: Բնային շրջանը ձգված է, քանի որ յուրաքանչյուր զույգ տարվա մեջ ձվադրում է երկու անգամ: Չվերով բները կարելի է

հայտնաբերել ինչպես մայիսի կեսին, այնպես էլ հուլիսի վերջ ին: Բնում ունենում են 4-6 ձու: Թխսում է էգը, արուն՝ կանոնավոր կերպով սնունդ է մատակարարում էգին: Թխսի տևողությունը 13-14 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Կյանքի 14-15-րդ օրը ճտերը լքում են բները: Ենթակա են պահպանության:

Ամուրիկ *Fringilla coelebs* (115)



Նկ. 115. ամուրիկ

Ճնճղուկի չափերի թռչուններ են: Արուների գլխի և ծոծրակի փետրածածկը մոխրագույն է, այտերը, կոկորդը, կուրծքը և փորիկը՝ կարմրագորշավուն, մեջքը՝ մուգ շագանակագույն, վերնապոչը՝ կանաչ, պոչը՝ համարյա սև, թափափետուրները՝ գորշ: Թևերի սպիտակ ծածկող փետուրները առաջացնում են լավ նկատելի սպիտակ շերտ: Էգերի և մատղաջ թռչունների գույնը խամրած է, գորշ երանգը փոխարինված է մոխրագույնի, գլխի վերին մասը կանաչամոխրավուն է, թևերի սպիտակ շերտն ավելի նեղ է: Մարմնի երկարությունը 14-16 սմ է, թևերի բացվածքը՝ 25-29 սմ, կենդանի զանգվածը՝ 19-28գ.:

Ամուրիկները անտառային թռչուններ են, բնակվում են այնտեղ, որտեղ առկա են ծառեր: անտառային զանգվածների չափերը էական նշանակություն չունեն, դրանք կարող են բնակվել անտառների խորքում կամ անտառաբացատներում, անտառաշերտերում, լեռնատափաստանների թփուտածածկ վայրերում, պուրակներում, այգիներում, բնակավայրերին մոտ:

Արցախում համարվում են նստակյաց և լայն տարածված տեսակ:

Բնադրում են համարյա բոլոր տիպի ծառերին, թփերին: Բնադրավայրերում առաջինը հայտնվում են արուները, էգերը՝ մոտ մեկ շաբաթ ուշ: Բները կառուցում են միայն էգերը, որը տևում է մոտ 7-10 օր: Մայիսի առաջին կեսին էգը դնում է 4-6 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 11-12 օր է, այդ ընթացքում արուն կեր է բերում էգի համար: Ճտերին կերակրում են երկու ծնողները, կյանքի 13-14 օրականում ճտերը լքում են բները:

Սովորական սերինոս *Fringilla montifringilla* (116)

Արտաքինից նման են ամուրիկներին, սակայն արուների գլխի և մեջքի գույնը ամռանը սև է, իսկ աշնանային և գարնանային ամիսներին՝ գորշ բծերով: Թևերի սպիտակ շերտը նեղ է, վերնապոչը սպիտակ, իսկ կուրծքը՝ շեկ: Էգերը և մատղաջները տարբերվում են սպիտակավուն վերնապոչով և փետրածածկի ընդհանուր գունավորման բաց երանգով: Կտցի գույնը գարնանը և ամռանը մոխրագույն է, իսկ աշնանը՝ դեղնավուն: Մարմնի երկարությունը 15-18 սմ է, թևերի բացվածքը՝ 23-30 սմ է, կենդանի զանգվածը՝ 19-32գ.:



Նկ. 116. սովորական սերինոս

Բնակվում են անտառներում, պուրակներում, այգիներում, հանդիպում են նաև բնակավայրերում: Արցախում համարվում են ձմեռող և քիչ տարածված տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):
Բնային կենսաբանությունը և էկոլոգիան ուսումնասիրությունների կարիք ունեն:

Կանաչ սերինոս *Carduelis chloris* (117)



Նկ. 117. կանաչ սերինոս

Ճնճուկի չափերի թռչուններ են: Արուների գունային ընդհանուր երանգը մոխրականաչավուն է, կուրծքը՝ դեղնականաչավուն, թևերին և պոչի եզրային փետուրներին առկա են հովհարի վառ դեղնավուն հատվածներ: Էգերն առավել գունատ են՝ կանաչամոխրավուն կրծքով և մոխրագորշավուն մեջքով: Կտուցը և ոտքերը խամրած վարդագույն են կամ մոխրագույն: Մարմնի երկարությունը 14-16 սմ է, թևերի բացվածքը՝ 24-28 սմ է, կենդանի զանգվածը՝ 23-34գ.:

Բնադրվում են տարբեր տիպի անտառներում, պուրակներում, այգիներում, բնակավայրերում: Չենք հանդիպել անտառների խորքում: Հանդիպում են նաև քիուտածածկ վայրերում: Քոչերի ժամանակ կարելի տեսնել նաև արոտավայրերում, գետերի կամ առվակների եզերքին:

Արցախում համարվում է նստակյաց ու քիչ տարածված տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Ապրիլին եգերը կառուցում են բները, որոնք տեղադրում են ծառերի խեչամայրերում, կամ թփուտներում: Մայիսի երկրորդ կեսին բնում ունենում են 5-6 ծու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 13-14 օր է: Կյանքի 14-րդ օրը ճտերը լքում են բները: Մայիսի վերջերին և հունիսի կեսին, ամենայն հավանականությամբ թխսում են երկրորդ անգամ: Ենթակա են պահպանության:

Սովորական ոսպնուկ *Carpodacus erythrinus* (118)

Ծննդուկների չափերի թռչուններ են: Էգերը ու մատղաշները ունեն փետրածածկի միատեղագույն առաջագորշավուն կամ գորշածիրթապտղագույն գունավորում, առավել բաց կոկորդ ու փորիկ:



Նկ. 118. սովորական ոսպնուկ

Թներ և պոչը գորշ են, գլխին, մեջքենի և կրծքին երկայնակի մուգ բծերը թույլ են արտահայտված: Որոշ արուններ նույնպես ունեն այդպիսի գունավորում, սակայն հասուն արունների մեծամասնության մոտ գլխի, կրծքի և վերնապոչի փետրածածկը վառ կարմիր է: Ոտքերը և բավականին հաստ կտուցը գորշամոխրագույն են: Մարմնի երկարությունը 14-16 սմ է, թևերի բացվածքը՝ 24-27 սմ է, կենդանի զանգվածը՝ 19-26գ:

Բնակվում են թփուտներում, բաց տարածություններում, թավուտներում, անտառեզրերում, գետափերին, մերձալպյան գոտիներում: Քոչերի կամ զարմանային չուլի շրջանում կարելի է հանդիպել նաև բնակավայրերում, այգիներում, պուրակներում: Նախընտրում են խիտ մացառուտները: Վարում են թաքնված կենսակերպ ու իրենց հաճախ մատնում են երգով:

Արցախում հանդիսանում է բնադրող չվող ու քիչ տարածված տեսակ: Թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Գարնանային վերադարձը ապրիլ-մայիս ամիսներն են: Բույնը դնում են թփերին կամ խոտաբույսերին՝ գետնից 50-100սմ բարձրության վրա: Բնում ունենում են 5-6 ծու: Թխսում է միայն էգը: Թխսի տևողությունը 12-13 օր է: Չագերը բները լքում են իրենց կյանքի 11-14-րդ օրը: Աշնանային չուն սկսում են սեպտեմբերի կեսերին: Հաջողությամբ բուծվում են անազատության պայմաններում: Ենթակա են պահպանության:

Հատրեկիչ *Coccothraustes coccothraustes* (119)

Սարյակների խոշորության, բավականին զանգվածեղ ու հաստ կտուցով թռչուններ են: Գլխի վերևը և այտերը բաց գորշ են (էգերն ավելի գունատ են), կոկորդին առկա է ոչ մեծ սև բիծ: Պարանոցի հետին կողմը մոխրագույն է, մեջքը՝ շագանակագորշավուն, կրծքը՝ բաց ծխագորշավուն: Թափափետուրները սև են՝ մետաղական փայլով: Թևերը ծածկող սպիտակ թևերը առաջացնում են սպիտակ շերտ: Դեկափետուրները բաց գորշավուն են՝ սպիտակ կատարներով: Կտուցը մոխրագույն է,



Նկ. 119. հատրեկիչ

ուղբերը՝ գորշ: Մատղաշ թռչունները տարբերվում են գլխի և կրծքի բծավոր երանգով ու խամրած վարդագույն կտուցով: Մարմնի երկարությունը 16-18 սմ է, թևերի բացվածքը՝ 29-33 սմ է, կենդանի զանգվածը՝ 40-63գ.:

Հատրեկիչները բնակվում են անտառներում, որտեղ մեծամասնություն են կազմում խոշոր սերմեր ունեցող ծառատեսակները: Դրանց կարելի է հանդիպել թփուտածածկ լեռնալանջերին, քոչեր ընթացքում կամ ձմռանը նաև այգիներում, պուրակներում ու կուլտուրական լանդշաֆտներում:

Արցախում համարվում է նստակյաց և բավականին հազվագյուտ տեսակ, գտնվում է խոցված (CV) վիճակում:

Բնադրվում են ծառերի ճյուղերին, երբեմն բավականին բարձր: Մայիսին դնում են 4-6 ձու, թխսում է միայն էգը: Թխսի տևողությունը 12 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները: Ճտերը բները լքում են կյանքի 11-րդ օրը: Ենթակա են պահպանության:

Չյան դրախտապան *Plectrophenax nivalis* (120)

Տնային ճնճղուկից փոքր-ինչ խոշոր թռչուններ են: Արունների մոտ գարնանային փետրածածկը սպիտակ է, միայն մեջքը, պոչը և թևերի կատարները ունեն սև գույն: Կտուցը մուգ մոխրագույն է, ուղբերը՝ սև: Աշնանը հասուն արունների գլխի վերին հատվածը և վերնապոչը մոխրագորշավուն են, մեջքի սև գույնը մասնակիորեն ծածկված է գորշ փետուրների երիզներով: Էգերի գույնում ծխագորշավուն երանգը գերակշռում է պարանոցին և կրծքին: Մարմնի երկարությունը 15-20 սմ է, թևերի բացվածքը՝ 28-35 սմ է, կենդանի զանգվածը՝ 25-50գ.:

Բնակվում են բարձր լեռնային տափաստաններում, ալպյան և մերձալպյան գոտիներում, ձմռանը իջնում են ցածրադիր հատվածներ: Հետքնային շրջաններում դրանց կարելի է հանդիպել նաև նախալեռնային գոտիների կուլտուրական լանդշաֆտներում:

Արցախի ֆաունայում համարվում է պատահական չվախյուր և հազվագյուտ տեսակ, գտնվում է խոցված (CV) վիճակում:



Նկ. 120. ձյան դրախտապան
Մեր պայմաններում բնային կենսաբանությունը և էկոլոգիան ուսումնասիրված չէ:

Դաշտային ճնճղուկ

Passer montanus (121)



Նկ. 121 դաշտային ճնճղուկ

Տնային ճնճղուկներից փոքր թռչուններ են, որոնց գունային երանգում սեռական դիմորֆիզմը չի արտահայտված: Գլխի վերին մասը և ծոծրակը շագանակագույն են, այտերը բաց մոխրագույն են միջին մասում սև բծերով, կոկորդին նույնպես առկա է ոչ մեծ սև բիծ: Կուրծքը, փորիկը, վերնապոչը, թափափետուրները և ղեկափետուրները գորշամոխրագույն են, մեջքը գորշ է՝ մուգ երկայնակի բծերով: Կտուցը մուգ մոխրագույն է, ոտքերը՝ գորշ է: Մատղաշների փետրածածկի գույնը ավելի խամրած է, քան հասուններինը: Մարմնի երկարությունը 14-15 սմ է, թևերի բացվածքը՝ 20-22 սմ է, կենդանի զանգվածը՝ 20-27գ.:

Բնակվում են գյուղական բնակավայրերում, քաղաքների եզրային հատվածներում, անտառաբացատներում, թփուտածածկ տարածքներում, գետերի ափերին:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և քիչ տարածված տեսակ, թվաքանակի վերաբերյալ տվյալները անբավարար են (DD):

Բները կառուցում են պատերի ճեղքերում, ծառերի փչակներում, թփուտներում, կարող են օգտագործել տառեղների, ագռավների լքված բները: Տարվա մեջ ունենում են երկու սերունդ: Բնային

ցիկլը սկսվում է ապրիլի կեսին կամ վերջին և տևում մինչև օգոստոս: Բնում ունենում է 5-7 ձու: Թխսի տևողությունը 13 օր է: Կյանքի 13-14-րդ օրը ճտերը լքում են բները: Ենթակա է պահպանության:

Իսպանական ճնճողկ *Passer hispaniolensis* (122)



Նկ. 122. Իսպանական ճնճողկ

Մարմնի կողքերը և մեջքը սև շերտերով են: Հետքնադրման շրջանում արուն շատ ավելի բաց գույնի է և ավելի խամրած: Էգերը և երիտասարդ թռչունները մոխրավուն, բաց դարչնագույն-դեղին են, հոնքերը՝ ավելի բաց գույնի: Մեջքին և թևաշերտերին կան սպիտակավուն գծեր, մարմնի կողքերին՝ թույլ մոխրավուն շերտեր: Բնադրման շրջանում արուի գլխի վերին մասը և ծոծրակը շիկակարմրադարչնագույն են, այտերը՝ սպիտակ: Կրծքի փողկապանման շերտը սև է: Մարմնի երկարությունը 15 սմ է, թևերի բացվածքը՝ 23-26 սմ, կենդանի զանգվածը՝ 27-28 գ:

Բնակվում է թփուտածածկ տարածքներում, բնակավայրերին մոտ, պտղատու այգիներում, հացահատիկի դաշտերում, եղեգնուտներում, բնական և արհեստական անտառաշերտերում, գետերի կամ առվակների եզրերներին:

Արցախում համարվում է նստակյաց ու հազվագյուտ տեսակ, վերջին տարիներին նկատվում է թվաքանակի նվազման տեղեկաց, որի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բների կառուցումը սկսում են ապրիլի երկրորդ կեսից կամ մայիսի առաջին կեսին: Բնդրավայրերի ընտրման կարևոր նախապայմաններից է ծառատեսակների և թփուտների առկայությունը: Մեր պայմաններում իսպանական ճնճողկները տարվա մեջ ունենում են մեկ սերունդ, սակայն ձվադրման ժամկետները ձգձգված է: Դնում են 4-7 ձու: Թխսում են էգերը՝ հենց առաջին ձվից ու տևում է 14-15 օր: ճտերը բները լքում են կյանքի 11-13-րդ օրը: Ենթակա են պահպանության:

Անտառային կաշաղակ *Garrulus glandarius* (123)

Ճայերի չափերին հասնող բավականին գեղեցիկ ու բարեկազմ թռչուններ են: Գլխի, մեջքի, կրծքի և փորի փետրածածկը բաց գորշաժանգավուն է, գլխին առկա են կարմրավուն բծեր: Գլխի վերին մասի փետուրների կատարները սև են: Կտցից կոկորդի կողմերով անցնում է սև շերտ, որ սահմանազատում է կոկորդի սպիտակ հատվածը: Թևերի վերին մեծ ծածկափետուրները երկնագույն են, սև շերտերով, առաջին կարգի թափահարող փետուրները՝ սև: Թևերը կարծ են, կլորավուն, երկրորդայինները՝ սև՝ սպիտակ շերտով, թևավերևը՝ կապույտ ու սև զղավոր հատվածով: Սպիտակ գոտկատեղն ու թևի կապտավուն հատվածները հատկապես նկատելի են թռիչքի պահին: Մարմնի երկարությունը 34-36 սմ է, թևերի բացվածքը՝ 52-58 սմ, կենդանի զանգվածը՝ 135-220գ.:



Նկ. 123. անտառային կաչաղակ

Բնակվում է սաղարթավոր անտառներում, ծառածածկ գետահովիտներում, պուրակներում, այգիներում, թփուտածածկ լեռնատափաստաններում: Բավականին շարժուն և պարբերաբար քոչեր կատարող թռչուններ են:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց և լայն տարածված թռչուններ:

Բնադրվում են ծառերին, թփուտներում: Բների կառուցումը կամ վերանորոգումը սկսում են ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին: Բնում ունենում են 5-9 ձու: Թխսում է եզր և արուն: Թխսի տևողությունը 16-17 օր է: Ճտերին կերակրում են երկու ծնողները և կյանքի 20-րդ օրը ճտերը լքում են բները:

Սովորական կաչաղակ Pica pica (124)



Նկ. 124. սովորական կաչաղակ

Ճայերի չափերի թռչուններ են, որոնք ունեն աստիճանավորված պոչ և ընդգծված սև-սպիտակ փետրածածկ: Գլուխը, կուրծքը, մեջքը և թևերը սև են՝ կապույտ փայլով, թափափետուրների ներքին հովիարին առկա են սպիտակ դաշտեր: Փորը և թևերը ծածկող փետուրները սպիտակ են: Պոչը սև է վառ կապտականաչավուն և կարմրավուն ձուլվածքներով: Կտուցը և ոտքերը սև են: Մատղաշների

մոտ փետրածածկի սև մասերը ունեն գորշավուն բծեր: Մարմնի երկարությունը 40-55 սմ է, թևերի բացվածքը՝ 52-76 սմ է, կենդանի զանգվածը՝ 156-300գ.:

Հանդիպում են ամենուր՝ գետերի ափերին, գյուղական բնակավայրերում, քաղաքներում, անտառամերձ տարածքներում, անտառաբացատներում, թփուտածածկ վայրերում: Չեն հանդիպում լեռնածերպերին, խիտ ու մութ անտառներում:

Արցախում համարվում է նստակյաց ու լայն տարածված տեսակ:

Բնադրում են զույգերով, հետքնային շրջանում կարող են առաջացնել 7-15 առանձնյակներից կազմված ոչ մեծ կուտակումներ: Բները կառուցում են ծառերին, թփերին, տանիքներում: Արդեն ապրիլին էգերը դնում են 5-10 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 17-18 օր է: Գտերը բները լքում են կյանքի 25-րդ օրը:

Սերմնաքաղ *Corvus frugilegus* (125)

Մոխրագույն ագռավների չափերի թռչուններ են: Փետրածածկը սև է՝ մետաղական փայլով: Հասուն թռչունների կտցի հիմքը և նրան հարող այտերի հատվածները մերկ են, սպիտակ: Կտցի գագաթը մուգ մոխրագույն է, ոտքերը՝ սև: Մարմնի երկարությունը 43-50սմ է, թևերի բացվածքը՝ 88-99 սմ է, կենդանի զանգվածը՝ 350-625գ.:

Անթրոպոգեն լանդշաֆտների թռչուններ են, հանդիպում են բնակավայրերում՝ գյուղերում և քաղաքներում:



Նկ. 125. սրմնաքաղ

Արցախում համարվում է նստակյաց ու լայն տարածված տեսակ:

Բնադրվում են գաղութներով, ընդ որում՝ գաղութում կարող են լինել մինչև 100 զույգ, մեր պայմաններում դրանից մեծ խտությամբ բնակեցում չենք արձանագրել: Սովորաբար բնադրման համար ընտրում են սաղարթավոր ծառեր և մեկ ծառի վրա կարող են լինել մի քանի տասնյակ բներ: Չվաղորում են ապրիլին, բնում ունենում են 4-7 ձու: Թխսում է էգը, թխսի տևողությունը 17-18 օր է: Գտերը բները լքում են իրենց կյանքի 30-րդ օրը:

Մոխրագույն ագռավ *Corvus cornix* (126)

Հանրահայտ թռչուն է: Գլուխը, կոկորդը, քուջը, թևերը և պոչը սև են (հասունների մոտ թույլ մետաղական փայլով), մեջքը և փորը մոխրագույն են, կտուցը և ոտքերը՝ սև: Փոքր-ինչ խոշոր են սերմնաքաղներից, ունեն ավելի բարձր, ամուր, կողքերից թեքված կտուց: Թռիչքի ժամանակ սերմնաքաղից տարբերվում է ոչ միայն գունավորումով, այլ նաև ավելի լայն և բութ թևերով, թեթևակի ներքև թեքված կտուցով: Երիտասարդները տարբերվում են գորշ գունավորմամբ, կապույտ աչքերով, վարդագույն բերանային խոռոչով: Մարմնի երկարությունը 29-36 սմ է, թևերի բացվածքը՝ 85-100սմ է, կենդանի զանգվածը՝ 460-750գ.:

Բնակվում են անտառաշերտերում, այգիներում, պուրակներում, սովարական են բնակավայրերում, անգամ քաղաքներում: Խույս են տալիս զանգվածեղ, խիտ անտառներից:

Արցախում համարվում է նստակյաց, տարածված տեսակ, սակայն վերջին տարիներին նկատվում է թվաքանակի նվազում:



Նկ. 126. մոխրագույն ագռավ

Բնադրում են բավականին բարձրացողուն ծառերին, որտեղ իրենց չեն անհանգստացնում: Ապրիլի վերջերին էգը դնում է 3-6 ձու: Թխսում է միայն էգը, թխսի տևողությունը մոտ 20 օր է, ճտերը բները լքում են կյանքի 30-րդ օրը:

Սև ագռավ *Corvus corax* (127)



Նկ. 127. սև ագռավ

Ճնճուկազգիների կարգի առավել խոշոր թռչուն է: Մարմինը զանգվածո է, պոչը սեպանման սրված է, կտուցը բավականին հաստ է և երկար: Փետրածածկը սև է՝ մետաղական փայլով: Կտցի ստորին հատվածում փետուրները առաջացնում են «միրուք»: Կտուցը և ոտքերը սև են: Մատղաշ առանձնյակների փետրածածկը սև է՝ գորշ բծերով: Մարմնի երկարությունը 60-70 սմ է, թևերի բացվածքը՝ 115-155 սմ, կենդանի զանգվածը՝ 1100-1550գ.:

Բնակվում են ամենաբազմազան վայրերում: Դրանց կարելի է հայտնաբերել անտառաբացատներում, ժայռերին, լեռնատափաստաններում, ենթալպյան և ալպյան մարգագետիններում, կուլտրական լանդշաֆտներում, գետերի եզերքին:

Արցախի ֆաունայում համարվում է նստակյաց ու քիչ տարածված, դրանց թվաքանակի վերաբերյալ տվյալներն անբավարար են (DD):

Բնադրվում են բարձրացողուն ծառերի համարյա կատարին: Բների կառուցումը կամ վերանորոգումը սկսում են փետրվարի վերջին կամ մարտի սկզբին: Սկսում են ձվադրել մարտի կեսերից: Բնում ունենում են 5-8 ձու: Թխսում է էգը, արուն օրվա մեջ մի քանի անգամ սնունդ է բերում էգի համար: Թխսի տևողությունը 21 օր է: Ճտերը բները լքում են մոտ 40 օրականում: Ենթակա են պահպանության:

Սովորական քարաթռչնակ *Oenanthe oenanthe* (128)



Նկ. 128. սովորական քարաթռչնակ

Ճնճղուկի չափերի թռչուններ են: Արունների գլխի վերին մասը և մեջքը մոխրագույն է, թևերը, պոչի կողքի և միջին փետուրների կատարները՝ սև: Կտցի հիմքից աչքով մինչև ականջները ծածկող փետուրները անցնում է սև շերտ: Ենթապոչը և փորը սպիտակ են, կուրծքը բաց կավագորշավուն է: Էգերի և մատղաշների մոտ գույնը ավելի մուգ գորշավուն է: Մարմնի երկարությունը 15-16 սմ է, թևերի բացվածքը՝ 24-26 սմ է, կենդանի զանգվածը՝ 19-28գ.:

Բնակվում են բաց տարածքներում, չոր մարգագետիններում, ճանապարհների հեղեղատներում: Նախընտրելի վայրերն են քարքարոտ հատվածները:

Արցախում համարվում է բնադրող չվող և տարածված տեսակ:

Բնային կենսաբանությունը ուսումնասիրված չէ :

:

Օգտագործված գրականություն

1. Աղամյան Ս.Ս., Դ. Քլեմ կրտսեր-Յայաստանի թռչունները// դաշտային ուղեցույց, Երևան, 2000, էջ 183:
2. Ղարաբաղի կենդանիների Կարմիր գիրք, 2012, էջ 50-179:
3. Абуладзе А.В. Хищные птицы бассейна реки Арагави // Материалы 3-й конференции молодых научных сотрудников и специалистов Института зоологии АН ГССР. Тбилиси, 1978. С.23-27.
4. Абуладзе А.В. Биология обыкновенной пустельги в бассейне реки Проне а гнездовой период // Материалы республиканской конференции молодых ученых и специалистов сельского хозяйства. Тбилиси. 1978. С.164-166.
5. Абуладзе А.В. Гнездование белоголового сипа в Восточной Грузии // Экология гнездования птиц и методы ее изучения. Самарканд, 1979. С.5-6.
6. Абуладзе А.В. Некоторые сведения по распространению и биологии обыкновенного стервятника в Грузии // Материалы 4-й конференции молодых научных сотрудников и специалистов Института зоологии АН ГССР. Тбилиси, 1979. С.27-30.
7. Абуладзе А. В. Современное состояние популяций хищных птиц в Восточной Грузии //Тезисы докладов молодых ученых г. Тбилиси. Изд-во АН ГССР. Тбилиси, 1981. С.350-351.
8. Абуладзе А. В. Распространение и численность бородача в Грузии // Экология и охрана птиц. Кишинёв. Штиинца. 1981. С. 3-4.
9. Абуладзе А. В. Современное состояние хищных птиц в восточной части Грузии // XVIII Междун.орнитологический конгресс. М. Наука. 1982. С. 120.
10. Абуладзе А. В. Распространение и численность черного грифа в Восточной Грузии // Материалы 5-й конференции молодых научных сотрудников и специалистов Института зоологии АН ГССР. Тбилиси, 1983. С.22-27.
11. Абуладзе А.В. Черный гриф в Грузинской ССР // Экология хищных птиц. Москва, 1983. С. 49-51.
12. Абуладзе А.В. Распространение и численность черного грифа в Восточной Грузии // Тезисы докл. 5-й конф. молодых научных сотрудников и специалистов Института зоологии АН ГССР. Тбилиси, 1983. С. 22-27.
13. Абуладзе А.В. Миграции некоторых хищных птиц прибалтийских популяций по черноморскому побережью Грузии и проблемы их охраны // Тезисы докладов XI Прибалтийской орнитол.конф. (Таллин, 13-15.12. 1983). С. 49-51.
14. Абуладзе А.В. 1990. Учет хищных птиц в горных условиях. - Методы изучения и охраны хищных птиц (методические рекомендации). М.: 5-12.
15. Адамян М. С. 4 П-1531-А Необычное гнездование обыкновенной пустельги. Биол. журн. Армении. т. 39. N 8. 1986. с. 715-716. пустельга-распр, размн, биотоп, антр. факт. 145
16. Адамян М.С. О редких и малочисленных птицах Армянской ССР // Редкие, малочисленные и малоизученные птицы Северного Кавказа. Мат-лы конф. Ставрополь, 23-28.04.1990. С. 4-7.
17. Айрапетян В. Т., Минасян А. Дж., Тамразян М. В.- Экология и распространение кеклика (*Alectoris chukar gray, 1830*) в предгорной зоне Мартакертского района// Научный журнал Павлодарского государственного педагогического института «Биологические науки Казахстана», Казахстан, 2018, N 3, с.12-16.
18. Айрапетян В. Т., Минасян А. Дж., Тамразян М. В.- Кеклик (*Alectoris Chukar*) на территории национального парка «Качахакаберд» Республики Арцах// Научный журнал Павлодарского государственного педагогического института «Биологические науки Казахстана», Казахстан, 2019, N 1, с.73-79.
19. Айрумян К.А.-Некоторые вопросы, связанные с акклиматизацией куриных птиц Армянской ССР// Автореф. дис. канд. биол. наук. Ереван, 1965, с. 26.
20. Галушин В.М. К экологии скопы в Окском заповеднике // Труды Окского гос. заповедника, 1958, вып II, С. 158 - 161
21. Галушин В.М. Некоторые данные по гнездованию змеяда в Рязанской области // Орнитология, 1959, вып 2. С. 153 - 156.
22. Газанян М .К.-К биологии каменной куропатки в Азербайджане// труды Азерб. Ун-та. Серия биол. 1954, N6, с. 119-139.

23. Гейликман Б.О. К экологии белоголового сипа в Армянской ССР. // Биологический журнал Армении, том XIX, No 3. Ереван, 1966 С. 93 - 105.
24. Гейликман Б.О. К экологии ястребиных птиц Армянской ССР // Автореферат диссертации на соискание ученой степени канд. биол. наук. Ереван, 1966. - 22 С.
25. Колесниченко А. Д. Хищные птицы и совы лесов юго-востока Украины // Орнитология. 1979. Вып. 14. С. 77-82.
26. Лапатов М. К.-Учет наземной фауны позвоночных методом маршрутного подсчета//труды Среднеазиатск. Гос. Ун-та. Серия VIII. зоология, 1930, вып.2 (Ташкент), с.1-15.
27. Равкин Ю.С. К методике учета птиц в лесных ландшафтах // Природа очагов клещевого энцефалита на Алтае (Северо-Восточная часть). Новосибирск: Наука. 1967. С. 66-75.